



ԱՆԱԿԻՏ  
 ՀԱՆՐԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

7. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻՒ 9

ԲԱՐԵՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Եւ այդ կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : ԵՅէ հոգին չմարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտքն բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՆԷ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ : — Դաւիթ եւ Մկեր, Սասունի զիցազնական աւանդակներ՝ Սրչակ  
 Զօպանեան : — Խաղ-փուշ՝ Բաֆֆի : — Հայդիրք : Խաչքար՝ Վահրամ Սվաճեան : — Էրնէսթ  
 Ռընան՝ Պերթրլօ : — Հայ էջեր, Տաղ Սուրբ Սատուածածնին : Տաղ ասացեալ ի վերայ Սուրբ  
 Կոյսին Մարիամու : Տաղ սիրոյ Ողբ ժայռաքաղաքին Ստրմայոյ : Առաքել վարդապետէ ասա-  
 ցեալ : — Արուեստի էջեր : յունական արձանագործութիւնը՝ Իբրոյիթ Թէն : — Քաղաքական  
 կացութիւն : — Ազգային թրոնիկ :  
 — Հնչակեան կուսակցութեան դիմումը :  
 — Գրքեր եւ թերթեր, Միութեան խնդիրը : — Պ. Չերազ, Իրօչակեանները, Զարր եւ Բասմա-  
 շեան բեւեռագէտը : — Կուռղներուն համար՝ Ա. Զօպանեան : — Մեր Դրացիներ, Քիւրտը՝ Լոչտակ :  
 — Վերջին լուրեր :

# ԲԱՅՈՒԱԾ Է “ԱՆԱՀԻՏ,, Ի

Չ Ո Ր Ր Ո Ղ  
 Տ Ա Ր Ե Յ Ե Տ Ե Ջ Ա Ն Յ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԵՐ ԿՄՆԻՍԻ ՊԷՏԻ Է ՎՃԱՐԵԼ,  
 Այն բաժանորդները որ երբորդ տարուան բաժնեկիւր չեն վճարած, կը խնդրենք  
 հաճին անյապաղ վճարել զայն՝ եթէ կ'ուզեն որ այսուհետեւ շարունակեն ԱՆԱՀԻՏ ստանալ :

### ԱԶԴԵՐ

#### ՄԱՏԵՆԱԳԱՐՆ Ս ԱՆԱՀԻՏ

Թի 1

ԱՆԱԹՈՂ ՖՐԱՆՍ

ԵՊԻԿՈՒՐԻ ՊԱՐՏԵԶՐ

( Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր )

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.

Թի 2

ՍԼՖՐԵՏ ՏՐ ՎԻՆԻ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ա. Զ.



Այս գրքոյկները զրկուեցան ԱՆԱՀԻՏի բաժանորդներէն անոնց որ երբորդ տարուան բաժնեկի-  
 նը վճարած են, ԱՆԱՀԻՏին բաժանորդ չեղողներ կրնան զայն ընդունիլ՝ Մէկ ֆրանք զրկելով :  
 Այն բաժանորդները որ պիտի փութան վճարել իրենց անվճար մնացած բաժնեկիւրը, պիտի  
 ընդունին այս գրքոյկները՝ ձրիաբար :

ԼՈՅՆ ՊԻՏԻ ՏԵՍԷԻ Ի ՄՕՏՈՑ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ «ԱՆԱՀԻՏ» : — Թի 3.  
 որ պիտի պարունակէ ֆրանսացի մեծանուն վիպասան

#### Է Մ Ի Լ Զ Ո Լ Ա Յ Ի

ամենէն գեղեցիկ վիպակներէն մէկուն թարգմանութիւնը :

Այդ հատորը պիտի բաղկանայ 48 էջէ, եւ պիտի արժէ ԱՆԱՀԻՏի բաժանորդներու համար՝  
 յիսուն սանթիմ, ոչ-բաժանորդներու համար՝ մէկ ֆրանք : Պիտի զրկենք ՄԻՍՅՆ անոնց որ  
 դրամը առաջուց մեզի ուղարկած պիտի ըլլան :

# ԱՆԱԾԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻՒ 9

## ԴԱԻԹ ԵՒ ՄՅԵՐ (\*)

— 0 0 —

ՍՍՍՈՒՆԻ ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԱՒԱՆԴԱՎԷՊԸ

Հայկական զրոյցները, հեքեաթները, աւան-  
գութիւններն ու ժողովրդական երգերը դեռ  
գրեթէ ամբողջապէս անծանօթ կը մնան եւ-  
րոպացի ֆոլքլորագէտներուն : Բաց ի քանի մը  
հատուածական թարգմանութիւններէ, տակա-  
ւին դեռ ոչինչ է փորձուած Եւրոպային ճանչ-  
ցընելու համար հայ երեւակայութեան այդ  
բնական ծաղիկները : Եւ սակայն հայկական  
ֆոլքլորին ուսումնասիրութիւնը մասնաւո-  
րապէս սուր շահեկանութիւն մ'ընծայե-  
լու բնութիւնն ունի, քանի որ Հայաս-  
տանը՝ զարեւէ ի վեր շփում ունեցած ըլլալով  
Արեւելքի եւ Արեւմուտքի շաա բազմաթիւ ժո-  
ղովուրդներու հետ, անոր զրոյցներն ու հե-  
քեաթները հետաքրքրաշարժ ու ճոխ մոզայիք  
մը կը կազմեն, ուր այլազան ցեղերու ա-

1. Այս յօդուածին ֆրանսերէն բնագիրը  
պիտի երեւայ ի մօտոյ Revue des Revues հանդէ-  
սին միջ :

ուսպելներն ու երազանքներն իրար կը  
խաչաձեւեն ու իրարու կը շաղապատուին :

Սպասելով որ այդ ուսումնասիրութիւնը  
ձեռնարկուի ամբողջական ձեւով մը, կ'ուզեմ  
ճանչցնել եւրոպական հասարակութեան հայ-  
կական աւանդավէպներու ամենէն տարածու-  
ածներէն եւ ամենէն կարեւորներէն մին,  
ա՛յն որուն մէջ զայն յղացող ժողովրդին  
նկարագիրն ի յայտ կուգայ ամենէն աւելի շե-  
տուած ձեւով մը, — «Դաւիթ եւ Մհեր»ի հե-  
քեաթը, կամ աւելի ճիշտ՝ ժողովրդական դիւ-  
ցագներգութիւնը :

Այդ հեքեաթին ծննդավայրն է Սասուն, թըր-  
քական Հայաստանի այդ լեռնոտ գաւառակը,  
որ ու բնակչութիւնը խորխտ ու գրեթէ-ան-  
կախ բարձր է պահած եւ որ այս պահուս,  
թիւրք զինուորներով եւ Համիտիէ-Քիւրտե-  
րով պաշարուած, գերագոյն պայքարը մղելու  
վրայ է՝ իր գոյութիւնը պահպանելու համար :

Սասուն միշտ արտադրած է նշանաւոր ըմ-  
բիշներ : Եւ «Դաւիթ ու Մհեր»ի հեքեաթը ա-  
մէն բանէ առաջ ըմբիշի պատմութիւն մըն է :  
Ուժի եւ քաջութեան քերթուածն է ան :

Հայկական աւանդութիւններուն եւ հե-  
քեաթներուն մէջ, մեծագոյն մասը զուտ-հե-  
թանոսական նկարագիր մը պահած են : Այս հե-  
քեաթը մին է անոնցմէ սրոնց մէջ քրիստո-  
նէական գաղափարներն ամենէն աւելի հզօրա-

պէս թափանցած են . այդ պատճառով է որ ան կը թարգմանէ , աւելի լաւ քան ուրիշ ոեւ է հայկական արտադրութիւն , վերջնականապէս կազմուած Հայուն , այսինքն քրիստոնէացած Հայուն , հոգեբանութիւնը :

\* \*

Դաւիթ որդին է Մհերի , այդ Սասունցի հե-  
րոսին զոր ժողովրդական աւանդութիւնը կ'ա-  
նուանէ «Առիւծածեւ Մհեր» : Շատ փոքր եղած  
ատենէն՝ կորսնցուցած է հայրը , եւ մայրը  
երկրորդ անգամ ամուսնացած է Մարամելիքի  
հետ , որ իր երկրին թշնամի թագաւոր մըն է :  
Մայրը Դաւիթն աւած իր հետ Մարամելիքի  
քով տարած է : Բայց արտասովոր ուժը որ Դաւ-  
թի մէջ կը յայտնուի՝ հինգ տարեկան հասա-  
կէն իսկ , շուտով կը սկսի մտատանջութիւն  
պատճառել Մարամելիքին որ կասկածոտ ու  
վայրագ բռնաւոր մըն է : Դաւիթ կը զբօսնու-  
օզին մէջ ձեռքովը բռնել ծանր գուրզը զոր  
Մարամելիքը կ'արձակէ իր ըմբշամարտական  
հրահանգներուն սիջոցին : Իր երէկուան ոսո-  
խին որդւոյն քով այսքան վիթխարի ուժ մը  
տեսնելով սարսափած , Մարամելիք զայն ետ  
կը զրկէ իր հօրեղբօրը , Ձենով-Յովանի մօտ ,  
որուն ձայնը այնքան զօրաւոր է որ եօթը  
գոմէշի մորթով կը փաթթէ իր մարմինը որ-  
պէս զի իր սեփական ձայնին բաղխումէն  
չխորտակուի :

Ձենով-Յովան պաշտօն կը յանձնէ իր եղբօր-  
որդւոյն որ իր հօաը տանի արածէ . իր հօրեղ-  
բօրը ծառայութիւն մատուցանելու տենչանքով,  
Դաւիթ գայլեր եւ աղուէսներ կը բռնէ զորոնք  
սեւ այծեր կը կարծէ , եւ կը խառնէ զանոնք իր  
հօտին , կարծելով թէ զայն կը ստուարացնէ  
այդպէսով . կը գանգատի միայն թէ շա՛ս  
գժուարութիւն կը քաշէ այդ անիծած սեւ այ-  
ծերն արածելու , մինչդեռ ձերմակ այծերն ա՛յն-  
քան հանդարտ են : Յետոյ , հօրեղբայրը իրեն  
պաշտօն կը յանձնէ՝ իր արջաուր տանիլ արա-  
ծելու . Դաւիթ առիւծներ , վագրեր եւ արջեր  
կը բռնէ եւ իր եզներուն կը խառնէ . երբ ի-  
րիկուան , փարախը կ'առաջնորդէ այդ տարօրի-  
նակ նախիրը , գաղաններուն սեւքը կը վրդու-  
վեցնէ քաղաքին բնակիչները : Դաւիթ , որ տա-  
կաւին ինքզինքին ահագիտակ եւ իրեն որոշ

նպատակ մը շունեցող Ուժը կը ներկայացնէ ,  
չի հասկնար ո՛չ տարբերութիւնը զազանին եւ  
ընտանի անասունին , ո՛չ այն սխրագործու-  
թիւնը զոր կատարած է գաղանները բռնազա-  
տելով եզներու պէս իր ձեռքին տակ արածե-  
լու , ո՛չ ալ քաղաքին բնակիչներուն սարսա-  
փին պատճառը :

Հօրեղբայրը կը ստիպուի վերջ ի վերջոյ հո-  
վիւի պաշտօնն առնել անոր ձեռքէն , եւ իր  
տանը վերակացու կը կարգէ զայն : Դաւիթ այն  
ատեն ինքզինքը ենթարկուած կը տեսնէ ծանր  
փորձութեան մը , որմէ յաղթական դուրս կ'ել-  
լէ . եւ այդ միջադէպը ցոյց կուտայ արդէն ,  
պատանի հերոսին մէջ , այն շատ ազնիւ հոգին  
զոր ժողովրդական երեւակայութիւնը փոխ  
տուած է իրեն : Ձենով-Յովանի կինը . Սարիա ,  
կը սիրահարի Դաւիթին եւ կ'ուզէ զայն իր  
հոմանքն դարձնել . Դաւիթ զայրոյթով կը  
մերժէ անոր առաջարկները . « Հօշաքոյր , կ'ըսէ  
անոր , դուն իմ մա՛յրս ես , ես քու որդի՛դ  
եմ » : Սարիա կը պնդէ , կ'ուզէ դարան մը լա-  
րել անոր . կը հանուի օր մը անոր առջեւ եւ  
կը խնդրէ որ ջուր լեցնէ գլխուն . Դաւիթ կը  
զիմադրէ փորձութեանը . ջուր կը լեցնէ հօ-  
րաքրոջը գլխուն , միւս ձեռքովն աչքերը գո-  
ցելով . այսպէս կը յարգէ ընտանեկան յարկին  
սրբութիւնը , — եւ այդ պէ՛րն մէջ հայ ժողովուր-  
դը ընտանեկան պատուոյն համար իր ունեցած  
ամբողջ խիստ պաշտամունքը դրած է : Սարիա  
կատրղած , վրէժը կը լուծէ՝ իր ամուսնոյն ըսե-  
լով թէ Դաւիթ ջանացած էր զինքը գլխէ հա-  
նել , Ձենով-Յովան , անմիտ ու դիւրահաւան  
անձ մը եւ որ ձայնէն ուրիշ ոչինչ ունի զօրեղ,  
կը հաւատայ կնոջն ըսածին եւ կը վրութայ Դա-  
ւիթը տունէն վաճառել :

Դեռատի հերոսը զգուսնք կը զգայ այս ան-  
արգարութենէն . բայց իր բարկութիւնը կը  
զսպէ . արդէն այնքան իմաստուն է որքան ու-  
ժեղ : Կարող էր , « մէկ կիցով , ինչպէս կ'ըսէ ,  
Ձենով-Յովանն ու իր տունը օգը հանել » .  
բան մը չ'ըներ . « Ի՛նչ ընեմ , կ'ըսէ հօրեղբօ-  
րը , բող մըն է որ քեզ կը խաբէ » : Եւ տունէն  
կը հեռանայ :

Ատեն մը կը թափառի , չգիտնալով թէ ուր  
պէտք է երթայ եւ ինչ պէտք է ընէ : Եւ ահա

կը հանդիպի պատուի մը , որ ասինով իր հօրը սիրուհին է եղած : Ան գովքը . կ'ընէ Մըհերին , որ ողջ եղած ասինը Սասուն քաղաքը պաշտպանեց իր բոլոր թշնամիներուն դէմ եւ զայն հարուստ եւ բարգաւաճ կացոյց . եւ նոյն կանքով կը խօսի ներկային վրայ , ուր Սասունն իր զօրութենէն ինկած , իշխանութեանը ներքեւ կը գտնուի Մարմախիբին , այդ գարշելի բռնաւորին որ Սասունը հարկատու դարձուց իրեն : կ'իմացնէ թէ ճիշդ այդ միջոցին Մարմախիբը Սասունը զրկած է դեպքան մը , կոսբատին անուն , որ եկած է Ձենով-Յովանին ըսել՝ «Իսկոյն վճարէ՛ ինծի եօթը տարուան հարկը , ապա թէ ոչ աէրս որոշած է կործանել Սասուն քաղաքը : »

Դաւիթ առաջին անգամն ըլլալով բռնութեան վրայ գովափոստ կ'ուսնենայ . կը գայթակի անկից . կ'ուզէ իր հօրն օրինակին հետեւիլ . կը հասկնայ թէ ինչ բանի պարտաւոր է գործածել իր ուժը . կը շտապէ Սասուն դառնալ : կը հասնի այն պահուն երբ իր հօրեղբայրը , հլու եւ համակերպեալ , դրամը կը համրէ կոսբատինին : Դաւիթ կը հրաւիրէ կոսբատինն իսկոյն հեռանալ Սասունէն . եւ երբ կոսբատին կը հրամայէ որ դուրս հանեն այդ «երախան» , անոր վրայ կը նետուի , շրթունքները կը կըտրէ , ակոսները կը փրցնէ ու ճակտին կը գամէ , ու այդպէսով կը սպաննէ զայն :

Մարմախիբ , այս լուրէն կատիւած , ստուար բանակ մը կը կուտակէ Սասունի մօտ եւ կը հրաւիրէ Ձենով-Յովանը որ զինաթափ ըլլայ . Ձենով-Յովան կը պատասխանէ թէ ինքն անձնապէս չստ տրամադիր է այդպէս ընելու , բայց թէ չի կրնար զսպել Դաւիթը որ չ'ուզեր զլուխ ծռել :

Կը բացատրէ Դաւիթին՝ այն վտանգները զոր իր վարմունքը կը բերէ Սասնոյ վրայ : Դաւիթ արհամարհանքով կը պատասխանէ անոր՝ «Դնա պակէ գուն , ես գիտեմ ընելիքս : »

Ամբողջ գիշերը կը հակէ : Կը մտածէ այն ծանր պատասխանատուութեանը զոր վրան կ'առնէ : Լաւ գիտէ որ իր պարտականութիւնն է կոռել բռնաւորին դէմ , բայց կը կարծէ թէ միայնակ եւ իր որսի պարզ զէնքերով կարող է թշնամոյն բանակը ջախջախել :

Բարեբախտաբար դարձեալ կը հանդիպի պատուին , որ իրեն կ'ըսէ . «Քն հայրդ ունէր իր Բուսկիկ-Չալալի ձին , իր կայծակ-թուրը , իր գլխու դօտին , իր թաւշէ կապան , իր ոսկի քամարը , եւ աջ թեւին վրայ Մարութայ բարձր Աստուածածնին խաչ-պատարագին :

Դաւիթ կ'երթայ իր հօրեղբայրը կը գտնէ եւ կը հարցնէ թէ ի՞նչ ըրած է այդ բոլոր պատերազմի հանդերձանքը : Ձենով-Յովանն կուզի մը խորը պահած է այդ բոլորը , որովհետեւ ինքը չի կրնար գանոնք գործածել , եւ չ'ուզեր որ Դաւիթ , արդէն իր անձնական արտասովոր ուժովն ա՛յնքան խոտիչ , ձեռքն անցընէ այդ զարհուրելի զէնքերը որ զիրենք կրողն անպարտելի կը դարձընէ : Դաւիթ կը ստիպէ իր հօրեղբայրը որ իրեն ցոյց տայ այն տեղն ուր այդ առարկաները պահած է . կը հասնի իր նըպատակին . կը գտնէ գանոնք ողբալի վիճակի մը մէջ , փոշիով ծածկուած : Կը լուայ , կը նորոգէ բոլորը , յուղիչ տեսարան մը կ'ուսնենայ ձիուն հետ , որ կը ճանչնայ իր տիրոջը որդին եւ նոյն իսկ , իր ուրախութեանը մէջ , վայրկեան մը խօսելու կարողութիւնը կը ստանայ . «Կը յուսամ , կ'ըսէ , թէ քաջաբար պիտի կռուիս . ու պիտի տեսնես թէ ես ալ ինչպէս պիտի վարուիմ» : Մարութայ խաչը փակ սրնատուկի մը մէջ կը գանուի . Դաւիթ ծուռի կը չորքի սնտուկին առջեւ , եւ կը պողատի խաչին որ դուրս ելլէ . կափարիչը վեր կը ցատքէ նոյն հետայն , խաչը դուրս կը թռչի եւ ինքնին կուգայ Դաւիթի աջ թեւին վրայ կը կախուի :

Դաւիթ կը հազնի բոլոր այդ զգեստներն ու զարդերը : Այն ատեն ձին իրեն կ'ըսէ որ երթայ լողանայ հրաշալի կաթնաղբիւրին մէջ : Այդպէս կ'ընէ , եւ հիմա իր ուժերը հարկւրապատկուած կը զգայ :

Կը վազէ կոռելու : Սպաննելու հաճոյքին համար չ'երթար , այլ ըր հայրենի քաղաքը պաշտպանելու : Ուղղամիտ է իր թշնամիներուն հետ . չ'ուզեր գանոնք յանկարծ-կիի բերել . անոնց վրայ յարձակելէ առաջ , բարձրաճայն կ'աղաղակէ . «Կուգա՛մ կոր , պատրաստուեցէ՛ք պատերազմի . եթէ քուն էք՝ արթընցէք , եթէ նստած էք՝ ոտքի ելէք . կուգա՛մ

կոր:» Յետոյ կը նետուի թշնամիներուն վրայ եւ անոնց կարգերուն մէջ ահ ու սարսափ կը ձգէ:

Ծեր զինուոր մը կուգայ իրեն կ'ըսէ - «Ինչո՞ւ կը խողխողես այդ բոլոր խեղճ զինուորները:» Ատոնց ամէն մէկը մօր մը զաւակ է: Մարամելիքն է որ զանոնք բոլորն ստիպեց հոս գալու. գնա՛ զինքը գտիր եւ անոր հետ կուտէ:»

Դաւիթ իրաւացի կը գտնէ ծեր զինուորին բսածը, եւ դէպ ի Մարամելիքի վրանը կ'ուզուի:

«Կանչեցէք Մարամելիքը. կ'ուզեմ՝ կուուի իրեն հետ:»

Կը տեսնէ իր մայրը որ վրանին սեմին վրայ կ'երեւայ: Ան կը սիրէ Մարամելիքը. եւ անոր կեանքը վտանգի մէջ կը զգայ. տեսնելով իր որդին երիտասարդութեանը եւ ուժին ամբողջ փայլին մէջ եւ իր առաջին ամուսնոյն զէնքերովն սպառազինուած. կը ջանայ համուզել Դաւիթը որ Մարամելիքին հետ կուուելու զաղափարէն ետ կենայ: Դաւիթ չի թուլնար իր մօրն ազաչանքներէն եւ կը պնդէ որ Մարամելիքը գայ իրեն հետ չափուի:

Մարամելիք հսկայ մըն է. կոպիտ անասնական ուժը կը ներկայացնէ: Իր վրանին մէջ կը քնանայ: Քունը շատ խորունկ է: Ծամփուր մը կը տաքցնեն եւ ոտքերը կ'այրեն անով. իրեն կը թուի թէ լուեր են որ ոտքը կը խածնեն: Արօրի մած մը կը տաքցնեն եւ ոտքին ներբանին կը փակցնեն. այս անգամ կ'արթըննայ:

Նախ Դաւիթին վրայ արհամարհական ակնարկ մը կը պտըտցնէ, եւ կը փչէ անոր վրայ, կարծելով թէ շունչովը միայն պիտի կարենայ զայն ոչնչացնել: Բայց չ'ուշանար հասկնալու թէ որու հետ գործ ունի:

Արդէն վախը կը պատէ զինքը, եւ կը մտածէ խորամանկութեան գիմել՝ այդ վտանգաւոր ոտիսէն խալըսելու համար. կը հրաւիրէ զայն որ վայրկեան մը գայ հանգչի վրանին տակ՝ կուրն սկսելէ առաջ: Դաւիթ կը հաւանի: Զայն կը նստեցնեն այնպիսի տեղ մը ուր հոր մը կայ, որուն բերանը կտուով մը ծածկած են: Դաւիթ հորին մէջ կ'իյնայ: Հոն, աղօթք մը կ'ընէ Աստուծոյ. անտես ձեռքեր զինքը

զուրս կը հանեն հորէն եւ կը բերեն Մարամելիքի առջեւ. կը բռնադատէ զայն անմիջապէս կուրն սկսելու: Մարամելիք կը խնդրէ որ առաջին հարուածն ինքը տայ, «որովհետեւ, կ'ըսէ, ամենէն տարւոքն ինքն է,» Դաւիթ կ'ընդունի այդ պայմանը: Երեք ակզի հարուած կ'ընդունի, առանց տեղէն երեքալու: Կարգը կուգայ իրեն: Մայրը կը պաղատի որ կուրը զազրեցնեն: Մտիկ չ'ընիր անոր. մէկ հարուածով հսկան գետին կը փռէ, եւ անոր մարմինը երկուքի կը ձեղքէ:

Այդ վայրկեանէն սկսեալ Սասունն իր ազատութիւնը կը վերագտնէ. Դաւիթ անոր բռնաւորը ջնջած է:

Այդ քաջագործութեանէն յետոյ. Դաւիթ այլեւս միակ մտածում մը ունի, այն է կին մը առնել, ընտանիք մը կազմել, իր քաղաքին պաշտպաններուն առջմը յաւերժացնել: Եւ հիմա պիտի տեսնենք այդ հզօր եւ մաքուր հոգւոյն կքիւն ու նոյն իսկ աղարտիլը՝ գէշ կնոջ մը հրապոյրին տակ, որմէ այս անգամ անկարող կ'ըլլայ ճողոպրելու:

Հօրեղբայրն իրեն կ'առաջարկէ ամուսնանալ Չմուցիկ-Սուլթանին հետ, որ այնքան պարկեշտ որքան գեղեցիկ մանկամարդ աղջիկ մըն է: Բայց աշուղներ կուգան Դաւիթին կ'երգեն Խանդու-Զանուծի գերմարդկային գեղեցիկութիւնը: Դաւիթ կը դիւթուի աշուղներուն երգէն: Կը թողու Չմուցիկը, որուն ձեռքը խնդրած է հօրեղբայրն իրեն համար եւ որ կը սիրէ զինքը, եւ կ'երթայ այդ Խանդութը փնտռելու: Հսկայական կոյս մըն է ան, պղնձէ քաղաքի մը մէջ ամրացած, զոր կը պահեն քառասուն ըմբիշներ. եւ դեռ ոչ ոք յանդգնած է աչք վերցնել անոր վրայ:

Դաւիթ կը սարսափեցնէ քառասուն ըմբիշները, պալատը կը մտնէ, եւ կը ներկայանայ Խանդութին, որուն համար իսկոյն ինքզինքը բռնուած կը զգայ մոլեգին սիրով մը: Այն որ ամենուն յաղթած էր, այդ կնոջմէն կը նուաճուի: Խանդութ համարձակութիւն կ'առնէ մինչեւ անգամ զանի ապտակելու՝ կատակի համար: Դաւիթ կը կատարի կ'աղօթէ Աստուծոյ որ անհամար բանակներ ուղարկէ Խանդութի քաղաքին վրայ: Չի կրնար իր ուժը Խանդութի

վրայ փորձել, — վատութիւն մը պիտի ըլլար, կը մտածէ, կնոջ մը ձեռք զպցնել, — բայց կ'ուզէ անոր ցոյց տալ իր զօրութիւնը՝ անոր քաղաքը պաշտպանելով բազմակուտայ թշնա- միներու գէտ:

Այդ իրիկունն իսկ, քաղաքը կը պաշարուի խոշոր բանակէ մը: Դաւիթ պաշարողներուն վրայ կը նետուի, եւ հազարներով կը սպաննէ անոնցմէ: Պաշարողներն իրենց օգնութեան կը կանչեն համբաւաւոր ըմբիշ մը, Դաւիթի քե- ոին, Պարոն-Աստղիկը: Դաւիթ կը ճանչնայ զայն եւ կը վարանի զարնելու: Բայց իման- զութ հոն է, կը դիտէ զինքը. կարող է կար- ծել թէ կը վախնայ Պարոն-Աստղիկէն: Կրքէն խենթեցած, կը սպաննէ իր ազգականը: Եւ հոն, մեռելներով ու վիրաւորներով ծածկուած պա- տերազմի դաշտին վրայ, իմանդութ, Դաւիթի քաջութենէն նուաճուած, անձնագուր կ'ըլլայ անոր: Այսպէս է որ Մհերի որդին կ'ամուս- նանայ իմանդութին հետ:

Եւ Դաւիթ կը պատժուի իր գործած յան- ցանքին համար: Երբ Սասուն կը դառնայ, իր նշանածը, որ իր յիշատակին հաւատարիմ է մնա- ցած եւ որ իրեն չէ ներած այդ մատնութիւնը, կուգայ զինքը կը զիմաւորէ եւ կ'ըսէ. «Քանի որ զիս լքեցիր, կը հրաւիրեմ որ դաս կուուիս ինծի հետ: Կա՛մ ես քեզ պիտի սպաննեմ, եւ իմանդութն ու ես հաւասարապէս այրի պիտի մնանք, կա՛մ դուն զիս պիտի սպաննես, եւ այն ատեն իմանդութին հետ պիտի կարենաս հան- գիստ ապրիլ: » Դաւիթ չի գիտեր ի՛նչ պա- տասխանէ: Ամօթ կը զգայ: Վերջ ի վերջոյ, կ'ընդունի հրաւերը: Կը խնդրէ միայն Չմու- ցիկէն որ մենամարտը յետաձգէ ութ օրուան համար: Կը փափաքի իմանդութն անգամ մը տեսնել՝ Չմուցիկի հետ կուուելէ առաջ:

Կը դառնայ իմանդութի մօտ: Հոն, կը մոռ- նայ իր խոստումը, եւ ութ տարի կ'անցընէ՝ առանց Չմուցիկը միտքը բերելու: Օր մը կը նշմարէ որ աջ թեւին վրայ կրած իսաչ-Պա- տարագին սեփ-սեւ է դարձած: Խոստումը կը յիշէ: Կ'երթայ Սասուն: Մենամարտը տեղի կ'ունենայ: Եւ Դաւիթ, Մարմելիքին յաղ- թողը, Չմուցիկի ձեռքով կը սպաննուի: Ման- կամարդ աղջիկը, իր մարդութեամբը միայն

հօր, գետին կը զարնէ ահագին ըմբիշը որ զըր- կուեցաւ իր ուժէն՝ յորմէհետէ զայն աղար- տեց ի չարն գործածելով:

Բայց Դաւիթ, մեռնելէ առաջ, պատիժ մը կը կրէ՝ աւելի դառն քան իր անկման զգացումը եւ քան կնոջ մը ձեռքով այս անօթալի մահը: Այդ պատիժը, իր Մհեր որդին է, իմանդութին հետ իր ունեցած սիրոյն անիծեալ պտուղը:

Մհերի պատմութիւնը ուշադրաւ հակապատ- կեր մը կը կազմէ Դաւիթի — առաջին շրջանի Դաւիթին, — պատմութեան հետ: Այդ հակադ- րութեամբ, ժողովրդական երեւակայութիւնը յստակօրէն սահմանագծած է բարերար ուժի եւ քանդիչ ուժի իր յղացումը:

Մհեր, պիղծ տարփանքէ մը սերած, չար, հրէշաւոր, իտէալէ զուրկ ուժ մըն է: Իր զօ- րութիւնը տարապայման է, կը վնասէ ամէն հանդիպած բանին եւ զինքն ունեցողն իսկ կը նեղէ: մարմինը այնքան ծանր է որ ոտքե- րը հողին մէջ կը խրին եւ դժուարաւ կը քալէ: Կը սպաննէ, սպաննելու հաճոյքին համար. կի- ներ, ծերունիներ, երախաներ կը մորթէ: Ար- իւնահեղութիւնը կը սիրէ. կը դողնայ, կը թալլէ: Թշնամիներուն վրայ կը յարձակի ոչ թէ իր հօրը ուղղամիտ եղանակովը, այլ խո- րամանկութիւն գործածելով, յանկարծակիի բերելով զանոնք, որոզայթներ լարելով անոնց:

Սակայն, ամենէն հրէշային արարքը զոր ի գործ կը դնէ, իր վարմունքն է հանդէպ իր հօրը: Ըստ որում ամենքը կը զանգատէին Դաւիթին՝ իր որդւոյն գործած վայրագութիւններուն մա- սին, Դաւիթ օր մը յանդիմանեց Մհերը: Չախ- ուտելուն կատղած, Մհեր հօրը վրայ յարձա- կեցաւ եւ զարկաւ անոր: Դաւիթ, ստիպուած, ինքզինքը պաշտպանեց: Մենամարտ մը տեղի ունեցաւ հօրն ու որդւոյն միջեւ, եւ իմանդու- թի պաղատանքներն անկարող եղան զանոնք զատելու: Դարբէլ հրեշտակն իջաւ երկնքէն, եւ ան միայն կրցաւ իրարմէ բաժնել երկու կուռղները:

Այն ատեն, Դաւիթ անիծեց իր որդին. «Քանի որ, ըսաւ, դուն համարձակեցար ձեռք վերցնել հօրդ վրայ, կ'ազաչեմ Սասունմէ որ քեզ դատապարտէ զաւակ չունենալու եւ միշտ ոչջ մնալու: » Աստ- ուած լսեց այդ ազաչանքը: Քառասուն տարուան

կոտորումէ ու թալանէ յետոյ, օր մը որ Վան որսի գացած էր, Մհեր զահալիժեցաւ հորի մը մէջ, ուր կը մնայ մինչև հիմա, ըստ աւանդութեան, եւ ուր պիտի մնայ, յաւերժապէս կենդանի, մինչև ժամանակաց վախճանը: Վանայ մէջ կայ քարայր մը, զոր ժողովուրդը կ'անուանէ «Մհերի այր» . այդ քարայրին մէջն է որ կը կարծեն թէ Մհեր կը գտնուի: Գեղջուկներն Աստուծոյ կ'աղօթեն միշտ որ Մհերը յաւիտեան հոն փակուած պահէ . «որովհետեւ, կ'ըսեն, եթէ դուրս ելլէ, աշխարհս պիտի կործանէ:»

Հօրմէ մը անիծուած եւ հորի մը մէջ յաւիտենապէս կենդանի մնալու դատապարտուած որդւոյն այս աւանդավէպն արդէն կը գտնուի հեթանոս Հայաստանի մէկ հին աւանդութեանը մէջ, զոր կը յիշատակէ Մովսէս Սորոսացի: Արտաւազդ, երիտասարդ ու լիբր իշխանը, որ անարգած էր իր հայրը, բարի Արտաշէս թագաւորը, անկից անէծք ընդունեցաւ՝ Մասիսի քաջերուն ձեռքով վիւ մը գահավիժելու եւ հոն խաւարին մէջ գամուած մնալու . եւ իրօք, աւանդավէպին համեմատ, օր մը որ գացեր էր Մասիսի վրայ որսալու, «քաջեր» զինքը բռնեցին եւ նետեցին վիւի մը մէջ ուր կը մնայ մինչև հիմա՝ ժայռերու շղթայուած, որովհետեւ ան ալ աշխարհս պիտի կործանէր՝ եթէ երբեք դուրս ելլէր վիւէն:

Կարգ մը հայ քննադատներ կարծած են թէ Արտաւազդի աւանդավէպը, որ Մհերի հեքեաթին մէջ կը կրկնուի, խորհրդանշանական մէկ արտայայտութիւնն է դերութեան վիւին մէջ շղթայուած հայ ժողովրդին՝ կապանքները փշրելու եւ ազատ կեանքի վերադառնալու բաղձանքին: Ուրիշներ կը մտածեն թէ Արտաւազդի եւ Մհերի աւանդավէպը հին միթոս մըն է, բնական տարբերու պայքարը պատկերացնող: Ես կը կարծեմ թէ այդ երկրորդ մեկնութիւնը ճշմարտութեան բաժին մը ունի . շատ հին տիեզերածնական միթոսի մը մէկ մընացորդը պահուած ըլլալու է Արտաւազդի եւ Մհերի աւանդավէպին մէջ, որ այդ ակառկէ-

տով խնամութիւն ունի յունական միթոսին հետ Պրոմէթէասին սր կովկասի ժայռերուն գամուած էր եւ որ աստուածները պիտի տապալէր եթէ կապանքներէն արձակուէր: Բայց շղթայուած ապստամբ ուժի մը այդ հին միթոսը հայկական աւանդավէպին մէջ խառնուած է բոլորովին «մարդկային» պատմութեան մը, իրական կեանքէն փոխ առնուած եւ ընտանեկան բարոյականի դաս մը պարունակող . Արտաւազդի եւ Մհերի պատժուելը կը թարգմանէ ամէն բանէ առաջ՝ աւանդավէպին արդի ձեւին մէջ՝ հայ ժողովրդին պաշտամունքը ծընողքներու հանդէպ պէտք եղած երկիւզած յարգանքին համար:

Ամենէն աւելի «Բիւսթէմու Սոհրապ»ի պարսիկ հեքեաթին հետ է, որմէ Ֆիրսուսի իր «Շահնամէ»ին ամենէն զեղեցիկ դրուադներէն մին քաղած է, որ «Դաւիթ եւ Մհեր»ի աւանդավէպն ուշագրաւ հանդիտութիւն մը կ'ընծայէ:

Բիւսթէմ, Դաւիթի պէս, տղայ հասակէն վաղահաս եւ գերբնական ուժ մը կը յայտնէ: Պաշտպանն ու նեցուկն է Պարսից թագաւորութեան որուն վեհապետը, Քաի-Քաուտ, խենթ մը եւ վայելամոլ մըն է, ինչպէս որ Դաւիթ պաշտպանն է Սասունի եւ Ձեռով-Յովան՝ վատասիրտ մը: Ան ալ ունի իր դիւցազնական ու անձնուէր ձին, Բաքուչը, ինչպէս Դաւիթ իր Քուրկիկ-Ջալալին ունի: Ան ալ Աստուծոյ կը դիմէ, ինչպէս բարեպաշտ Դաւիթը, ամեն անգամ որ զերպոյն վատնող մը հանդէպ գտնուի, որովհետեւ երկուքն ալ, ճշմարիտ Արեւելցիներ, ճակատագրապաշտ են, եւ կը մտածեն, որքան ալ գիտակցութիւնն ունենան իրենց ուժին, թէ «առանց Աստուծոյ կամքին՝ մարդս ոչինչ է»: Բիւսթէմ իր Սոհրապ որդւոյն հետ կը մենամարտի, ինչպէս Դաւիթ Մհերի հետ:

Բայց տարբերութիւնները լազմաթիւ են եւ խորին՝ երկու տիպարներուն միջև, եւ այդ տարբերութիւնները գերազանցապէս յատկանշանական են երկու ժողովուրդներուն ոգւոյն: Բիւսթէմ խորամանկութիւն կը գործածէ, ամէն տեսակ վարպետ միջոցներ կը կիրարկէ. Դաւիթ կ'արհամարհէ զանոնք: Բիւսթէմ աշխարհակալութեան հրայրքն ունի, կը պատերազմի ամբողջ աշխարհս Պարսկաստանի լու-

ծին սակ զնելու համար : Դաւիթ ուրիշ նպատակակէտ չունի բայց եթէ պաշտպանութիւնն իր հայրենիքին եւ զայն հարստահարող բռնաւորին չքացումը : Բիւսթէմ երբեմն վայրագ է. ան պահուն ուր Սոհրապը կը զգեանէ եւ սուրն անոր կողը կը մխէ, կը նախատէ զայն : Դաւիթ, իր անկումէն առաջ, գերազանցապէս խղճահար հերոսն է : Բիւսթէմ կը կռուի իր որդւոյն հետ՝ առանց զայն ճանչնալու, եւ պարսիկ հեքեաթին այդ տեսարանը կը խորհրդապատկերէ կոյր ճակատագիրը, որ ապուշ անգթութեամբ մը իրաբու դէմ կ'արձակէ երկու քաջ ու ազնիւ էակներ որոնք իրար պաշտելու համար էին եղած : Դաւիթ եւ Մհեր կը կռուին առանց ո եւ է սխալմունքի զո՞ ըլլալու, միմիայն հնազանդելու համար, ըստ հայ հեքեաթին ներքին իմաստին, Աստուծոյ կամքին որ յանցաւոր եւ ինկած հերոսը կը պատժէ իր սեփական որդին մղելով որ ձեռք վերցնէ անոր վրայ : Սանդոտ, փայլուն եւ ամեն բանէ առաջ վիպական ներշնչում մըն է որ կ'ոգեւորէ պարսիկ հեքեաթը, որուն մէջ լաւ ճշդուած բարոյական նշանակութիւն մը կը պակսի. հայկական հեքեաթը ամէն բանէ առաջ «բարոյական» գիւցազներդութիւն մըն է, եւ քրիստոնէական բարոյականի : Կարեւոր տարբերութիւն մը, վերջապէս, եւ որուն մէջ ամբողջ առաւելութիւնը պարսիկ հեքեաթին կողմն է, այն է որ «Բիւսթէմ եւ Սոհրապ»ի պատմութիւնը բազմիցս ունեցած է շքեղ ձեւի մը մէջ մեծ բանաստեղծէ մը երգուելու, մինչդեռ «Դաւիթի եւ Մհեր»ի աւանդավէպը, պատմաներէ պատմուած, կամ ժողովրդական պուէտներէ երգուած՝ նախնական ու բարբարոս ձեւի մը մէջ, գեռ կը սպասէ իր միրտուսիին :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ



### ԽԱՉ-ՓՈՒՇ

ՊԱՏԿԵՐ ՊԱՐՍԻԿ ԽԵՂՃԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ(\*)

(քարգնանուած արեւմտեան հայերէնի)

Բ

Մզկիթէն յետոյ բաղնիքը մահմետական աշխարհի այն կարեւոր հիմնարկութիւններէն մին է որ բարեպաշտ միւսլիմանին թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնաւոր պէտքերը կը հոգայ : Երբեք կը կատարուին լուացման ծէսերը, այդտեղ կը ներկուին սրբարար հինայով՝ կրօնասէր հաճիներու նուիրական մօրուքներն եւ ստղերուն ու ձեռքերուն եզունգները :

Ինչպէս որ մզկիթն իր հովանւոյն տակ կը պատըսպարէ աղքատներն ու անտուն անտեղ նրժղեհներու բազմութիւն մը, նոյն բարիքը կը կատարէ նաեւ բաղնիքը :

Ներկայացնենք Թեհրանի բազմաթիւ բաղնիքներէն մին :

Մեզի համար հետաքրքիր է այն մասը որ տեղէն կը տաքցնեն բաղնիքը : Ատի ետեւի կողմի մեծ բակն է, ուր ամբարուած են բոլոր վառելի նիւթերը : Փայտի պակասութեան պատճառով, մասամբ կը վառեն մանրած յարդ եւ անասուններու աղբ : Տանթէի եւ ուրիշ զասական բանաստեղծներու նկարագրած դժոխքը շատ փոքր նմանութիւն ունի Պարսից բաղնիքի այն ստորերկրեայ հրամբարին հետ, որ, շատ յատկանշական անունով մը, կը կոչուի «ճհաննամ», որ գեհն կամ դժոխք ըսել է : Մթին մուտք մը, ծուխէն ու մուխէն սեւցած պատերով, դէպ ի այդ դժոխքը կը տանի : Այդտեղ անշիջանելի կերպով կը վառի կրակը եւ իր ջերմութիւնը կը տարածէ դէպ ի բարձր ընդարձակ կամարները, որոնց վրայ դրուած են ջուրով լեցուն ահպին կաթսաներ, որոնք բոլորակ աւազաններու ձեւ ունին : Դժոխքէն՝ կաթսաներու մրոտած տակերը միայն կ'երեւան, իսկ անոնց լայն բերանները կը բացուին վերի յարկը, ուր բուն բաղնիքը կը գտնուի, այսինքն լուացման օնեղը :

(\*) Բաթիթի այս վիպակը «Արձագանք»ի 1886 տարեշրջանի 27 եւ 28 թիւերու մէջ երեւցած է, եւ իր հատորներէն ոչ մէկուն մէջ չէ ամփոփուած գեռ, որով եւ անմասնօթ կը մնայ շատերուն : «Անահիտ»ի ընթերցողներուն կը կարծենք հաճոյք պատճառել՝ զայն հրատարակելով՝ արեւմտեան հայերէնի թարգմանուած :

Այդ դժոխքը նոյնպէս ունի իր դատապարտեալները. այդ դժոխքին մէջ ալ կը տանջուին մարդիկ, եթէ ոչ կրակի բոցերու մէջ, բայց անոր փոխարէն՝ կրակէն արտադրուած մոխիրի կոյտերուն մէջ :

Մշտաւառ կրակի մոխիրը, բլուրներու նման զիգուած, բաւական ընդարձակ տեղ կը բռնէ որ կը կոչուի «քուլամպար» (\*): Այդ մոխիրի ամբարանոցին մէջ կը թաւալի թշուառներու ստուար բազմութիւն մը : Այստեղ, տաք մոխիրի կոյտերուն մէջտեղ կ'երեւան զանազան գլուխներ՝ մեծ ու փոքր, տղաքներու եւ աղջիկներու : Նայելով այդ ոչորմեկներու մրտած երեսներուն, այնպէս կը թուի որ քերէական պատժապարտներ ըլլային, գետնի մէջ կենդանի թաղուած (\*\*):

Ո՞վ են ստոնք :

Ատոնք քաղաքին այն անտէրունչ, կիսամերկ երախաներն են, որոնց հայրն ու մայրը յայտնի չէ, որոնք ցորեկով կը թափառին փողոցներուն մէջ, մուրացկանութիւն կ'ընեն, իսկ գիշերը պառկելու տեղ չունին : Ատոնք քաղաքին այն անգործ այրերն ու կիներն են որ կա՛մ անընդունակ են աշխատութեան, կա՛մ աշխատութիւն չեն գտներ եւ միայն ոչորմութեամբ կ'ապրին : Կեանքի այդ դժբաղդ զաւակները տարուան տաք եղանակներուն մէջ աւելի երջանիկ են : Բաց օդի մէջ, երկնքի պարզ կամարին տակ, անոնց համար ամենուրեք տեղ եւ օթեւան կայ : Ուրտեղ որ մթնէ, այնտեղ կը պառկին, թէ՛ փողոցը եւ թէ՛ փողոցէն գուրս անբնակ անապատ մը : Իսկ ձմե՞ռը : Ո՞ւր պատսպարուին ձմեռուան ցուրտէն ու սառնաս մանիքէն : — Այդ ժամանակ անոնց միակ ապաստանարանը կ'ըլլայ բազմիքներուն «ղբժոխք»ը : Տաք մոխիրը անոնց համար փոփուկ անկողին կը դառնայ. մերկ մարմնով կը թաղուին անոր մէջ, եւ այդպէս կը պառկին :

Ո՛րքան այդպիսի թշուառներ կան Պարսկաստանի մայրաքաղաքին մէջ, որոնք գիշերը զլուխնին հանգչեցնելու տեղ մը չունին :

Յայտնուեցաւ երիտասարդ «խազ-փուշը», զոր առաւօտուն տեսանք : Ճափար կը կոչէին չինքը : «Սազ-փուշ»ներու հասարակութեան

(\*) Այս բառը կը նշանակէ մոխիրի ամբար, աղճատմամբ կը գործածուի՝ արտասանուելով «թուլամպար» :

(\*\*) Պարսկական դանազան սոսկալի պատիժներու շարքին մէջ սովորական է նաեւ

մէջ բաւական հեղինակութիւն կը վայելէր Ճափարը : Թէ ինչո՞վ ստացած էր այդ հեղինակութիւնը, դժուար է բացատրել, գուցէ անոր համար որ մինչդեռ ուրիշ «խազ-փուշ»ները, իրենց ցնցոտիներուն մէջ փաթթուած, դարձեալ կը տրտնջային ցուրտէն, ան իր միակ զինջակովը ամենեւին դանդատ չէր յայտնէր :

Ճափարը ունէր նաեւ ուրիշ բարձր արժանիքներ :

Վեհերութեամբ անցաւ մոխրակոյտէն, աչք մը նետեց թշուառներուն վրայ, մօտեցաւ մութ խորշի մը, որ նեղ ու երկար սենեակի մը նմանութիւնն ունէր : «Դժոխք»ը իր չորս կողմը շատ այդպիսի խորշեր ունէր, որոնք կը տաքնային պատերէն, եւ ամպամած օրերը՝ կը ծառայէին բաղնիքի ճեմակեղէնները չորցընելու : Այդ մէկին մէկ կողմի պատը վաղուց քանդուած էր, այդ պատճառով առանց զործածութեան էր մնացած : Ճափարը կը բնակէր այդ աւերակին մէջ : Բազմեպանին հետ իր սերտ յարաբերութիւնը եղաւ այդ առանձնաշնորհ ման պատճառը : Շինեց, սարքեց իր բնակարանը, պատին բանդուած տեղը քարեր, աղիւմներ շարեց, ի հարկէ առանց ծեփի, եւ քամին ու ցուրտը անարգել կերպով կը փչէին ճեղքերէն : Տարակոյս չկայ որ Ճափար իր անձին համար այդքան հոգ չէր տանէր, բայց ունենալու էր ուրիշ պատճառ մը որ զինքը մղած էր այդ մութ գերեզմանը բաղնիպանէն խնդրելու :

Անոր խնամակալութեան ներքեւ կը գտնուէր երախայ մը, որուն նուիրած էր իր սէրը, իր հողոյն բուրբ զգացումները : Երախան քրնացած էր, երբ ներս մտաւ. այդ պատճառով յուշիկ քայլերով մօտեցաւ, որ չարթնցնէ զայն, եւ կամայ մը նստաւ անոր մօտ : Մանուկին ներկայութիւնն այդ կոշտ կոպիտ մարդը քրնջշութեան ընտելացուցած էր : Երկարօրէն, մասնաւոր գթութեամբ մը անոր վրայ կը նայէր : Երախան մինչեւ վիզը թաղուած էր յարդէ անկողնի մը մէջ, իսկ գլուխը դրած էր քրքրուած փսիաթի մը վրայ որ բարձի տեղ կը ծառայէր : Հոգատար մօր մը ձեռքով ամենայն խնամքով պատրաստուած անկողին մը իր բոլոր

մարդիկ կենդանի թաղելու պատիժը : Դատապարտալին հասակին չափովը փոս մը կը փորեն եւ ուղղակի դիրքով զայն կը կայնեցնեն փոսին մէջ, իսկ շուրջը կը լեցնեն կրակ, դրուելու միայն բաց թողով :

ժափկուժեամբ չպիտի կարենար այնպիսի քաղցր քուն մը պարգեւել մանուկին, ինչպէս քնացեր էր այդ փոքրիկ երախան իր յարգէ մահճին մէջ: Երբեմն անոր սիրուն զէմքը կը ժպտէր, երբեմն լիաշուրթ բերանը անհասկանալի բառեր կը թոթովէր: Կ'երեւար որ երազներու մէջ է: Մրախառն փոշին, որով լեցուած էր «գժոխք»ի ամբողջ մթնոլորտը, այդ երախային գեղեցիկ զէմքին վրայ իր մոյգ-սեւ խաւը դրած էր, որով անոր զէմքը աւելի թուրի դոյն էր ստացեր: Ան քրտնած էր, եւ քրտինքը կ'ողողէր սեւ փոշին, եւ սեւ կաթիլներով կը թափէր անոր բարձին վրայ: Ծափարը ձեռքը տարաւ, սրբեց երախային ճակտին քրտինքը: Բայց, չնայելով անոր բոլոր զգուշութեանը, խարտոցի պէս կոշտ ձեռքը այնպիսի զգալի շփում գործեց որ երախան արթնցաւ: Քնաթաթախ աչքերը բացաւ եւ, մօտը տեսնելով իր խնամակալը, սուր ձայնով հարցուց.

— Աքաղա՛ղը... Ի՞նչ եղաւ աքաղաղը... ո՞ւր գնաց, ճայրի՛ կ'...

— Փախաւ, դաւակա, պատասխանեց ծափար զայն հանդարտեցնելով:

— Տէ՛ բռնէ, շուտ բռնէ՛...

Ծափար, փոխանակ ետեւէն երթալու այդ աքաղաղին, զոր երախան երազին մէջ էր տեսներ, բացաւ անոր առջեւ իր զինջակը: Երախան, տեսնելով ճակնդեղի կարմիր կոշտերը, մոռցաւ աքաղաղը, սկսաւ ազահաբար ուտել: Քանի մը ըտպէ կերաւ, առանց ձայն հանելու: Երբ քիչ մը կշտացաւ,

— Ի՞նչ համով է, ըսաւ:

Երեք տարի առաջ ծափար այդ երախան դտաւ խանձարուրի մէջ, մղկիթին զրան մօտ(\*) եւ որդեգրեց զայն: Այդ երեք տարուան ընթացքին մէջ այդ երախան իր ամբողջ հոգածութեան առարկան էր դարձած:

ԲԱՅՅԻ

(Շարունակելի)



(\*) Պարսիկները սովորութիւն ունին անհարգատ մանուկները ձգել մղկիթներու զրան մօտ, ուրկից բարեսիրտ մարդիկ զանոնք կը վերցնեն եւ կը խնամեն:

**Լ Ա Յ Գ Վ Ր Զ**

Ժ Դ  
ԽԱՉԳԱՐ

— 0 —

Ի պատիւ քեզ, ո՛վ հայաքաջ նահատակ, Կ'ուզեմ խաչքար մը կանգնել ես անդանդաղ Եւ յօրինել անոր բոլոր նուրբ քանդակ Ինչպէս քերթող մը կը յըզկէ ճարտար տաղ:

Կ'ուզեմ կանգնել զայն դարնային լուսնի տակ Որ կը կաթէ մարգարտափայլ շամանդաղ. Կ'ուզեմ կանգնել կըճեայ անբիծ յիշատակ, Ո՛վ սիրելիս, որ մեռար այդպէս վաղվաղ:

Ի սէր երկրիդ ազատութեան դու մեռար, Քամահելով ամէն հաճոյք եւ զաշխարհ, Քամահելով վատը՝ մեռար քաջիպէս:

Երիտասարդ, կ'օրհնեմ ազնիւ ու սկզ քունդ. Թո՛ղ դայ Հայոց աղջիկ խընկել քու անունդ, Դէմքը քարիդ քրտել, սիրել, լալ ըզքեզ:  
ՎԱՀՐԵՄ ՍՎԱՃԵԱՆ

**ԷՐՆԷՍԹ ՌԸՆԱՆ**

(Շար. եւ վերջ)

— 0 —

«Իմաստասիրական տրամախօսութիւններ»ուն մէջ վերստին կ'երեւան այն համոզումները զոր գոյացուցած էր արդէն երբ «Դիտութեան ապագան» կը գրէր. գիտութիւնը միայն թոյլ կուտայ ճշմարտութիւնը ճանչնալ. մասնաւոր դերբնական մը զոյութիւն չունի. տիեզերքը կը զխմէ զէպի իր վախճանը, որ իտէալին իրաւանացումն է, ներքին հարկի մը մղման տակ. մարդը տիեզերքի գործին կը մասնակցի գիտութեամբ, բարոյականով եւ արուեստով, այսինքն զէպի իտէալն անշահախնդիբ ճիգովը: Առաջուրնէ աւելի կը շեշտէ Ռընան մեր ծանօթութեանց անստուգութիւնը, այն դիպուածներն ու վիժումները որ իտէալին իրաւանացմանը կ'ընկերանան. կը հարցնէ ինքիբն թէ արդեօք բանավարութիւնն ու արդարութիւնը սահմանուած են երկիր-մոլորակին վրայ իրականանալու, եւ թէ ամէն ինչ որ մարդոց զարգացեալ դասը պիտի կարենայ ընել, ամբոխը իրեն վնասելու անկարող դարձնելը պիտի չըլլա՞յ՝ սարսափի միջոցով անոր

վրայ իշխելով, գիտական ծանօթութեանց գերազօրութեան շնորհիւ: «Իմաստասիրական տըրամախօսութիւններ»ուն մէջ, բողոքովին նոր սկզբունքներ չենք գտներ, այլ միայն նոր կիրարկումներ՝ երբևիմ բարատօքսական՝ հին սկզբունքներու, եւ տեղափոխութիւն մը յարարեցական կարեւորութ անը մէջ այն գաղափարներուն զոր Ռընան արդէն արտայայտած էր. սկեպտիկ ու յոռետես ձգտումները, որոնք մինչեւ այն պահէն կէս-մութի մէջ մնացած էին. արձակ լոյսի մէջ եւ առաջին կարգն անցած կ'երեւան հիմա:

«Քրիստոնէութեան ծագման» չորրորդ հատորը, «Նեո»ը, այս հիասթափութեան զորոյ մը կը կրէ. այլ եւս հոն չենք գտներ «Առաքեալներուն» կամ «Ս. Պօղոս»ին վեհ հանդարտութիւնը. Ռընան անոր մէջ կը պատմէ պայքարը հեթանոս քաղաքակրթութեան եւ քրիստոնէութեան միջեւ, Ներոնի եւ Ս. Պօղոսի միջեւ. առաքեալին անձկամիտ մոլեռանդութիւնը զինքը այնքան քիչ կը գոհացնէ որքան կայսրին վայրագ տիլեթանթութիւնը. Ս. Պօղոսին մէջ պիտի բաղձար տեսնել մարդկային կարծիքներու անստուգութեան մասին աւելի ճշգրիտ զգացում մը, եւ՝ նորէն համակուած ըլլալով Իտալիոյ հրապոյրէն, ուր վերադարձած էր իր այդ գործը պատրաստելու համար, զգալով արդէն թէ ո՛րքան ունայն է յաճախ մարդուն ճիգը դէպ ի բարոյական բարին, կը պաշտպանէ սազազափարը թէ գեղեցկութիւնը առաքինութեան համարժէք է: Ասի զինքը չ'արգիլեր շարունակելէ, անընդհատական ու կանոնաւոր աշխատութեամբ, «Քրիստոնէութեան ծագումը», «Նեո»ին կը յաջորդէ «Քրիստոնէական եկեղեցին», յետոյ վերջին հատորը, «Մարկոս-Աւրելիոս»: Այս վերջին երկու հատորներուն մէջ մեզի ցոյց կուտայ այն վըտանգները որոնք կրնան ծնիլ երբ կառավարութիւնը զարգացեալ մասի մը, մտաւորական եւ բարոյական ազնուապետութեան մը ձեռքը անցնի: «Քրիստոնէական եկեղեցի»ին մէջ, գնոստիկեան ազանդը կ'ուսումնասիրէ. «Մարկոս-Աւրելիոս»ին մէջ, կ'ուզէ ի վեր հանել ինչ որ ստոյիկեան վարդապետութիւնը ըրած է հոռոմէական կայսրութեան համար. գնոստիկեանութիւնն ու ստոյիկեանութիւնը չյաջողեցան, որովհետեւ միմիայն զարգացեալ դասուն կ'ուղղուէին. քրիստոնէութիւնը յաջողեցաւ որովհետեւ տիեզերական բարոյական մը կը պարունակէր եւ ամենուն զգացմանը կ'ուղղուէր: Այս հատորներուն մէջ, Ռընան առաւել քան երբեք կասկածատ կ'երեւայ հանդէպ աւմէն վարդապետութեան, բնութեան գրական գիտութիւններէն դուրս՝ որոնք միակ տիրա-

ցողներն են ստուգութեան: Միեւնոյն պահին կը վերստանայ նուազ յոռետես հայեցողութիւն մը ընկերական բարեշրջութեան մասին, եւ մինչեւ աստիճան մը կը հաշտուի ռամկավարութեան հետ, որ իրեն նուազ վտանգաւոր կը թուի անչափանդիր բարձր զարգացման համար քան պահպանողական եւ կղերական կուսակցութեանց յաղթանակը:

Մտաւորական այս կացութիւնն է որ մեզի յստակօրէն կը յայտնուի «Իմաստասիրական տոմսներ»ուն մէջ, («Քալիպան», «Փուվանսիալ-բիւրը», «Նեմիի քուրմը», «Փուարի աքրասուհին») որոնք 1878ի եւ 1886ի մէջ տեղը գրուած են: Ռընան հետզհետէ աւելի որոշ լիւր տեսնէ ինչ որ կայ անկատար եւ անստոյգ բոլոր քաղաքական եւ ընկերական սիստեմներուն, բոլոր իմաստասիրական եւ կրօնական տեսութիւններուն մէջ. կը զանազանէ սակայն յարարեցական ճշմարտութեան այն մասը որ զոյութիւն կրնայ ունենալ ամենէն հակընդդէմ սիստեմներուն մէջ. կ'ըմբռնէ ապրելու շատ տարբեր եղանակներ եւ որոնք իրեն հաւասարապէս օրինաւոր կը թուին, որովհետեւ հաւասարապէս կը հեռանան անմիասնութեան եւ չարերուն ապրելու եղանակէն. այս պատճառով իր իմաստասիրական գաղափարները, իր բարոյական եւ ընկերական տեսութիւններն այլ եւս վարդապետական ձեւով մը չի ներկայացնիր. անշատ անձնաւորութիւններու մէջ կը մարմնաւորէ հակընդդէմ կարծիքները: Ռընանի ոճը իր կեանքին վերջին մասին մէջ այնքան կը փարբերի «Յիսուսի կեանք»ին ոճէն որքան այս վերջնոյն ոճը կը տարբերի «Քրիստոնէական ապագայ»ին ոճէն. եթէ անոր խիստ շնորհը չունի, նոյնքան հրապոյրով եւ նոյնքան պարզութեամբ՝ աւելի ազատութիւն ունի, աւելի բնականութիւն, աւելի քմայք եւ աւելի յանդգնութիւն: «Ճշգրտութեան եւ կրիտասարգութեան յիշատակները», 1883ին հրատարակուած, գրելու այս նոր եղանակին հրաշակիրտն են: 1879ին, Ռընան անգամ ընտրուեցաւ Ֆրանսական Ակադեմիային: 1884ին Քոլէժ տը Ֆրանսի վարչապետ կարգուեցաւ, ուր երբայցեղէնի դասախօսութիւնը նորէն իրեն յանձնած էին 1870ին, Հանրապետութեան վերահաստատումը: Մերթ ընդ մերթ յօգուած էջ մը գրելով հանդերձ, — ամսագրի յօգուածներ կամ իմաստասիրական տոմսներ, — իր պատմական աշխատութիւններէն յոգնութիւն առնելու համար, — իր աշխատակցութիւնը կը շարունակէր սեմեական արձանագրութեանց «Քորբուս»ին, որուն գաղափարը յղացած եւ յատկապիժը շինած էր 1868ին, եւ վաթսուեւտարեկան հառակին մէջ կը սկսէր խմբագրել «Իս-

րայելի ժողովրդին պատմութիւնը» (հինգ հատոր), ցոյց տալու համար թէ ինչպէս մարգարէներուն մէջ կամաց կամաց կազմուած էր վարդապետութիւն ու ծէս շունեցող, սրտի մաքրութեան եւ արդարութեան սիրոյն մէջ միայն կայացող կրօնքի մը դադարաւորը . 1892ին կը հասնէր մինչեւ Յիսուսի թուականը . եւ այսպէս, մեռնելէ առաջ, ի ղլուխ կը հանէր իր կեանքին մեծ գործը, որ նպատակ ունէր պատմել ծագումն ու զարգացումը այն բարոյական դադարիին որ քրիստոնէութեան իսկութիւնն է եւ որ յաւիտեան կրօնքը կը կազմէ : Այդ վերջին տարիներուն մէջ, միշտ համոզուած ըլլալով թէ, այս կամ այն կերպով, դէզադէզ սխալներու եւ ձախողուածնե-րու մէջէն, իտէալը կ'իրագործուի աշխարհիս

մէջ եւ թէ ճշմարտութիւնը վերջ ի վերջոյ պիտի յաղթանակէ, համոզուած՝ ասկից զատ՝ թէ բոլոր բարոյական, ընկերական, կրօնական ճշմարտութիւնները բարդ ու յարաբերական նկարագիր մը ունին, հեգնոտ ու բարեացակամ հանդարտութեան մը հասած էր, հեգնոտ՝ ամէն անձկամիտ ու աններող վարդապետութեան համար . բարեացակամ՝ դէպ ի ճշմարիտը, դէպ ի բարին, կամ պարզապէս դէպ ի երջանկութիւնը ձգտող ամէն ճիգ : Ոչ հիւանդութեան տառապանքները, ոչ մահուան մերձեցումը այդ հանդարտութիւնը չվրդովեցին . «Գործս աւարտեցի, ըսաւ, երջանիկ կը մեռնիմ : Մեռնելէն աւելի բնական բան չկայ : Ընդունինք տիեզերքին օրէնքը :»

ՊԵՐԹԸԼՈ

### ՀԱՅ ԷՋԵՐ

#### ՏԱՂ Ս . ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Յորժամ նստեալ կայի ի տան՝ յանկարծ լուայ զլուրն զայն ,  
 Թէ զմիածինընքո տարան, միա՛կ որդեակ, միա՛կ որդեակ ,  
 Իմ միածին Յիսուս որդեակ :

Իբրեւ խելաթափ դուրս ելայ, յանկարծ զխաչն յուան տեսայ,  
 Մարմնովս յերկիր տարածեցայ, միա՛կ որդեակ , եւն . :

Ո՛վ Մագդաղենացի , հասի՛ր , ներքոյ ձեռին իմոյ մատիբ ,  
 Զգանուկն իմ տարան ի խաչել , միա՛կ որդեակ, եւն . :

Կանայք երուսաղեմացիք, միթէ զորդեակն իմ դուք տեսի՛ք,  
 Զճանապարհն ինձ ցոյց տայիք, միա՛կ որդեակ, եւն . . :

Իսկ նոքա ի ճանապարհին զկաթիլքն արեան նշան տային,  
 Հեռուստ տեսայ զպայլքն ի գառին, միակ որդեակ, եւն . . :

Երբ մըտօք իմացաւ որդիս եթէ մայր իմ գայ ի յետիս ,  
 Յայնժամ խոցեաց սուրն ի սրտիս, միա՛կ որդեակ, եւն . . :

Սրտէ ի սիրտ խօսէր առ իս թէ՛ մի՛ գայր, մաքուր աղանիս .  
 Զի յաւելուս ցաւն ի սրտիս , միա՛կ որդեակ , եւն . . :

Առեալ տարան ի Գողգոթա, մերկացուցին զմարմին նորա ,  
 Տարածեցին խաչին վերայ, միա՛կ որդեակ, եւն . . :

Իբրեւ լուայ զճայն բեւեռին , զսիրտ իմ բոլոր կտրատեցին,  
 Ո՛րպիտի աչք է որ տեսին, միա՛կ որդեակ , եւն . . :

Վեհակի վանք, տաղարան ժն .  
 Թիւ 1063 է . ա .

ՏԱՂ ԱՍՍՅԵԱԼ Ի ՎԵՐԱՅ Ս . ԿՈՒՄԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

Մաքուր եւ սուրբ ստեանց քոյին փափաքիմ, սէր իմ, փափաքիմ  
Յոյժ յոյժ կարօտով,  
Դարձուցանել սիրով առ նոյն պաղատիմ, սէր իմ, պաղատիմ.  
Ելով ի խոր թշուառութեան տառապիմ, սէր իմ, տառապիմ  
Յոյժ յոյժ կարօտով,  
Ակն ունելով նախնի սիրոյս, արդ այրիմ, սիրով քով այրիմ:

Իբր եղջերու յոյժ տապաքիալ ծարաւիմ, սէր իմ, ծարաւիմ  
Յոյժ յոյժ կարօտով,  
Խանդակաթեալ սիրով Գրիստոսին տոչորիմ, սէր իմ, տոչորիմ,  
Ներքնապէս համայն կըրելք պասպակիմ, սէր իմ, պասպակիմ  
Յոյժ յոյժ կարօտով,  
Ակն ունելով նախնի սիրոյս, արդ այրիմ, սիրով քով այրիմ:

Յորժամ յիշեմ զքեզ տարփմամբ խամբանամ, սէր իմ, խամբանամ  
Յոյժ յոյժ կարօտով,  
Ի բնաւից կարօտութեանց թալկանամ, սէր իմ, թալկանամ,  
Եւ թէ զիարդ կեամ առանց քո, զարմանամ, սէր իմ, զարմանամ  
Յոյժ յոյժ կարօտով,  
Ակն ունելով նախնի սիրոյս, արդ այրիմ, սիրով քով այրիմ:

.....

Այրի հոգոյս ծարաւելոյս սաստկագին, սէր իմ, սաստկագին,  
Յոյժ յոյժ կարօտով,  
Տօղեա՛ սիրով ըզնորհքս քո մեղմագին, սէր իմ, մեղմագին,  
Ձի գովացայց ըստ քո առատ պարգեւին, սէր իմ, պարգեւին,  
Յոյժ յոյժ կարօտով,  
Ակն ունելով նախնի սիրոյս, արդ այրիմ, սիրով քով այրիմ:

Վիեննայի վանք,  
տաղաբան թիւ 405

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Իմ հոգոյս հոգեկ՝ եարում,  
Դանի քու քովէդ զնայի,  
Հոգիս ի մարմնոյս ելաւ:  
Ի մահուան գուռն զնայի:  
Վաղվընօքն մինչ իրիկուն  
Կուլայի ու զքեզ կ'ուզէի,  
Գիշերն մինչ որ լուսանայր  
Քո սիրոյն ես քուն չլնայի:

Կողալն ալ ի խօսք ելաւ.  
Իր ետբուն զանգատներ արաւ:


— Հանց մի որ սիրես զու զիր,  
Ինձ առ որ ես գիտենամ:

— Ես ալ քնար պիտէի  
Ձօրն ի քո գիրկ կենայի,  
Կամ ապրչմէ գօտի՛  
Քո միջացդ գիրկ ածէի,  
Կամ աղբերական ջրիկ՝  
Դայի քո բերանդ մտնէի,  
Կամ զարնանային ցողիկ՝

Ես ի քո վրադ ցողէի,  
Կամ ապրչմէ լարեր՝  
Հետ քեզի պէսպէս խօսէի:  
(Ձականջդ դու յիս արա՛  
Ու լսէ զիմ գանգատնիս.)  
Կամ քաղցր նոսն գինի՛  
Ձօրն ի քո շիշան կենայի,  
Դէ՛մ գայի զլեզուդ պագնէի.  
Ես ծիծեռնիկ պիտէի,  
Բունս ի ձեր տուն զընէի,  
Ձագ հանէի ճովոսայի  
Ու սիրովդ կշտանայի.  
Վաղվնէն մինչ իրիկուն  
Ի երեսդ ի վեր հայէի.  
Իրիկունն երբոր մըթնէր,  
Դայի քո ծոցդ մտնէի.  
Գիշերն մինչ որ լուսանայր  
Ես ի քո ծոցդ պառկէի,  
Երբ որ առաւօտանայր,  
Ես ի բունս ճովոսայի.  
Երբ որ լոյսն լուսանայր  
Աչխրէիս վրայ ժուռ պայի:

Վիեննայի վանք,  
Ձեռագիր, թիւ 354

**ՈՂԻ ՄԱՅՐԱՒԱՂԱՔԻՆ ԱՏՐՄՊՈԼՈՒ**  
**ԵՒ ՎԱՍՆ ՓԱԼՍՏԵԱՆ ՑԲԱՆԿՍԵ ԱՋԻՐԵ ԵՒ ԱՋԱՏԵԼ ԶԱՇԵՍԲԸՆ ՀԱՅՈՑ**  
**ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ**



(Այն պահուն որ փրանսական կառավարութիւնը սպանեացին դիւր իր կ բռնած հանդեպ Տաճկաստանի , մասնաւոր հետաքրքրութեանը պիտի կարգացուի Բաղիշեցի Առաքել բանաստեղծին այս ֆերբուածը , որ կ'ողբայ ֆրիսոնեայ Կ. Պալսին անկուրը եւ միանգամայն իր հաւատքը կը հրոյսակ աւնոր օր մը «Ճրանկաց ազգին» ձեռնով վերակենդանացմանը մասին : Բերբուածին առաջին մասը մեզի կը յայտնէ ոչնէ հիացական պաշտանունը զոր Հայերն ունեին , — հակառակ կրօնական եւ ֆաղափական բոլոր գծերով ներուէն , — Լուսինի վրայ գահող եւ ֆրիսոնեայ ֆաղափարքեան սիրտը ներկայացնող դիւրական ու մեծաշուք Բարսիլիս համար , եւ որ մասնաւորապէս Հայոց՝ մեաւոր , հոգեկան , գեղարուեստական զարգացման մեծ վառարանն էր : Երկրորդ մասը վերջին ծայր շահեկան է այն յոյսովը զոր ֆերբողը կ'երգէ եւ որ իր ողբը յաղթական գեղօնով մը կը վերջաւորէ : Այդ յոյսին , այդ հաւատքին , այդ երազին մեջ անբողջ հայ գեղին հոգեբանութիւնն ու հակասագիրն ի յայտ կուգան . պէտք չէ ոչ դեռ ֆերբուածին այդ մասին պատմական առաւել կամ նուազ նշարքեանը (Լուսաւոր չի եւ Տրդատի Հոռն գագած եւ սարս մը մնացած ըլլալու հեֆտարը եւն) , ոչ ալ գրուածքին ձեւին տարբերակը . կտորը անեղեն յստիանշականերէն մեկն է զոր մեր հին գրականութիւնը բողած ըլլայ՝ իր պարունակած ֆայ ու յամառ սերտեայ-գաղափարովը եւ զայն շեղող գեղեցիկ շունչովը . Առաքել չի կրնար ընդունիլ որ մանկեանական տիրապետութիւնը մշակական կրնայ ըլլալ այն վայրերուն մեջ ուր յոյն-հայ ֆաղափարքութիւնը ծաղկեցաւ . կը հաւատայ որ անպատան պիտի հասնի այն օրն ուր Արեւմուտքը պիտի գայ վանել Տաճիկն ու Սաչը Մանիկիսն սեղ նորէն ցցել . եւ Սաչակիրներու մեծ յիշատակովը դեռ շեղուած , կը մտածէ որ «Ճրանկ» , Սաչակիրներուն մոլիցն ու վարիչը , պիտի կատարէ այդ գործը , եւ վստահ է որ Արեւելեան պետութեան այդ վերակենդանացման գործին միջնորդն ու օժանդակը Հայը պիտի ըլլայ : Առաքել չի սխալած : Հայը Պատմութեան մեջ միշտ այդ դերը կատարած է սկիզբէն ի վեր , — եւ այդ դերը կատարեց մանաւանդ այս նոր ժամանակներուն մեջ : Առաքելի երազը մասաւր իրագործուեցաւ : Հայն էր որ առաջնորդեց Ռուսը «Արաստեան գաւառն ու զայն մտցուց Էջմիածին» , եւ Ռուսը այդ պարագային «Ճրանկ»ը կը ներկայացնէր . — որովհետեւ արեւելցոց ալիին «Ճրանկ» բառը կը նշանակէ՝ ընդհանուր առունով մը՝ Երուսաղիմ , Արեւմուտքի մտողը : Եւ այս վայրկեանիս , Առաքելի երազն է նորէն որ սածունելի երկունքով մը իրականանալու վրայ է : Հայը իր գալարումովը , իր ցնցումներովը , իր սառնապակեովը , նախան կը բանայ երոպական ուժին , — Ճրանկացիին , Ռուսին , Անգղիացիին , մեկ բառով «Ճրանկ»ին — որպէս զի ան բարեկեցի Տաճիկն աներած , ֆայտայած երկիրներուն մեջ , եւ զանոնք Արեւմտեան ֆաղափարքեան ոգովը վերակորովէ :

- Արդ ամենայն ազգք եւ աղինք ողբան զքեզ , քաղա՛ք Ստրմպօլ ,
- Զի ամենայն արարածոց փառք եւ պատիւ եւ դու , Ստրմպօլ :
- Աստուածութեան էիր տեղիք եւ օթեւան , քաղա՛ք Ստրմպօլ ,
- Այսօր եղեր հեթանոսաց դու բնակարան , քաղա՛ք Ստրմպօլ :
- Երկինք երկիր միաձայնեալ քեզ յօրինեն կոծ , Ըստրմպօլ :
- Երկնաւորօք (է)իր պահպանեալ՝ Երկրաւորօք , քաղա՛ք Ստրմպօլ :
- Հրեշտակք երկնից մեծարէին զքեզ , անման քաղա՛ք Ստրմպօլ :
- Երկնաւորօք (է)իր պահպանեալ , վայելչաչեղ քաղա՛ք Ստրմպօլ :
- Այսօր եղեր չարագործաց հանգստարան , քաղա՛ք Ստրմպօլ ,
- Եւ ամենայն փառք եւ պատիւ քո վերացեալ եղել , Ստրմպօլ :
- Երուսաղէմ եւ դու կրկին , մեծահամբաւ քաղա՛ք Ստրմպօլ :
- Աս քեզ գայցին ամենեքեան ի տեսութիւն փառաց , Ստրմպօլ :
- Կայսերական տեղիք՝ Ստրմպօլ , ժայրաքաղաք կոչի Ստրմպօլ :
- Փառք ե՛ւ ծովու ե՛ւ ցամաքի , նաւահանգիստ քաղա՛ք Ստրմպօլ :
- Արքա յնկօր կոստանդիանոս զքեզ մեծարեաց , քաղա՛ք Ստրմպօլ :

Եւ զիւր անուանին քեզ կոչեաց՝ կոստանդինու Պոլիս՝ Ստրմայօլ :  
 Այսօր ի սուգ մըտեալ ողբայ զի պերեցին զքեզ Ստրմայօլ :  
 Քանզի մարմինն աստուածագարդ ի քեզ պահեալ կայր ընտրմայօլ :  
 Գրատիանոս եւ Թէոդոսք, յօրինեցէք կոճ՝ ընտրմայօլ :  
 Ոնորիոս ՝ Եւ Ուստիանոս, լացէք լալով դուք զԸնտրմայօլ :  
 Աստուածարան սուրբ հայրապետք որ օրհնեցիք դուք զԸնտրմայօլ :  
 Այսօր յանէժք փոխարկեցէք քաղաքն սուրբ մեծ ընտրմայօլ :  
 Ոսկեբերան սուրբ Յովհաննէս, արի՛ եւ տե՛ս դու զԸնտրմայօլ :  
 Եւ վայ կարգա՛ քո աթոռիդ եւ քաղաքիս մեծ ընտրմայօլ :  
 Էլիբ պայծառ դու՝ ընտրմայօլ, արեգական նման Ստրմայօլ :  
 Խաւարեցար միջօրէի յանօրինաց դու՝ ընտրմայօլ :  
 Աղբիւր կենաց դու, ընտրմայօլ, ծարաւելոց, դու ընտրմայօլ :  
 Յանօրինաց ցամաքեցար ջո՛ւրն կենաց, դու ընտրմայօլ :  
 Եղեմ դրախտի նման Ստրմայօլ, տնկեալ աջով տեառն ընտրմայօլ :  
 Անմահութեան պըտուղ բազում կայր ժողովեալ ի քեզ, Ստրմայօլ :  
 Խափանեցար յանօրինաց, եղեր կոխան դու՝ ընտրմայօլ :  
 Եւ ամենայն փառք եւ պատիւ քո վերացեալ եղև Ստրմայօլ :  
 Դու մարգարիս անաւրն գանձուց հոգեւորաց, դու ընտրմայօլ :  
 Յանկարծակի կողակեցար յանօրինաց, դու ընտրմայօլ :  
 Դու մարգարիտ տեառն, քարոզ արքայութեան երկնի, Ստրմայօլ :  
 Որ ամենայն հաւատացեալք քո ցանկային տեսլեանդ, Ստրմայօլ :  
 Փախագանօք ի քեզ գային, ուխտադրութեան քաղա՛ք Ստրմայօլ :  
 Որպէ՛ ի սուրբն Երուսաղէմ նոյն եւ ի քեզ, քաղա՛ք Ստրմայօլ :  
 Երանութեանց էիբ տեղի եւ գովութեանց պատճառ, Ստրմայօլ :  
 Այսօր դարձար դու եղկելի, նախատանաց տեղի, Ստրմայօլ :  
 Վա՛յ եւ եղո՛ւկ ժամանակիս, որ լսեցաք զձայն քո՛, Ստրմայօլ :  
 Եթէ առին եւ գերեցին ազգն Թուրքաց զմեծն Ստրմայօլ :  
 Յորժամ հնչէր ձայն զանգակին յեկեղեցիս քո, ընտրմայօլ :  
 Երկնային զօրքն իջանէին եւ պարէին ի քեզ, Ստրմայօլ :  
 Փոխան ժամուռն եւ զանգակին, ծուղրիք ձայնն ի քեզ, Ստրմայօլ :  
 Յեկեղեցիքն ամենեքին նամազ կարգան ի քեզ, Ստրմայօլ :  
 Զօրքն վերին ի սուգ մտան՝ յորժամ առին ըզքեզ, Ստրմայօլ :  
 Եւ տիեզերք որ լսեցին, աւաղեցին զքեզ, Ստրմայօլ :  
 Զի ամենայն քրիստոնէից ուրախութիւն էիբ, Ստրմայօլ :  
 Եւ մախարին ազգն անօրէն՝ երբ յիշեաք մեք զԸնտրմայօլ :  
 Այսօր եղեր ծաղր ամենայն հեթանոսաց դու ընտրմայօլ :  
 Եւ տրտմութիւն քրիստոնէից առհասարակ դու՝ ընտրմայօլ :

Այլ եւ կոչեմ զքեզ յանուանէ, ընտիր քաղա՛ք Բիւզանդիա,  
 Որ անօրէնք պաշարեցին եւ արարին ըզքեզ դազա :  
 Աստուածաշնորհ Բիւզանդիա, աստուածաքանձ Բիւզանդիա :  
 Ի յԱստուծոյ դու ընտրեցար քաղաք սրբոց, Բիւզանդիա՛ :  
 Մեծանանդէս Բիւզանդիա, ակն աշխարհի՛ Բիւզանդիա,  
 Հոչակաւոր դու անուանիս ամենեցունց Բիւզանդիա :  
 Քաղաք ամուր Բիւզանդիա, եօթնաբլուր Բիւզանդիա :  
 Սուրբք ամենայն առ քեզ եկին հաւաքեցին, Բիւզանդիա :  
 Վարք վայելուչ՝ Բիւզանդիա, պարխազ ամուր՝ Բիւզանդիա :  
 Երկնաւորաց ՝ Եւ երկրաւորաց ուրախութիւն՝ Բիւզանդիա :  
 Ի յամենայն լեզուէ գովեալ անո՛ւն յազթող՝ Բիւզանդիա :  
 Եւ ամենայն ազգք եւ ազինք ըզքեզ յիշեն, Բիւզանդիա :  
 Այսօր եղեր ողորմելի եւ կոծելի, Բիւզանդիա :  
 Որ յամենայն տեղ լսեցին զքո զատնութիւնդ, Բիւզանդիա :  
 Ուրախութիւն քո փոխեցաւ ի արտմութիւն Բիւզանդիա :  
 Որ յամենայն ախեբրաց զըրուց եղեր, Բիւզանդիա :  
 Պաշարեցար յանօրինաց եւ պղծեցար, Բիւզանդիա :  
 Ի կատականս հեթանոսաց եղեր դրացեաց, Բիւզանդիա :  
 Որպէս այգի վայելչական որթով ծաղկեալ, Բիւզանդիա :  
 Այսօր պտուղս ի փուշ դարձեալ անպիտացեալ Բիւզանդիա :

Բիւզանդիա, Բիւզանդիա, Ստրմզօլ քաղաք Բիւզանդիա,  
 Կոստանդնու Պոլիս կոչեալ, արեամբ լցեալ Բիւզանդիա :  
 Դու հրեշտակաց աստուծական հրեղէն զօրաց, Բիւզանդիա,  
 Այսօր գարձար դիւաց տեղի վասն մեզաց, Բիւզանդիա :  
 Քահանայից ժողովարան օրհնեցողութեանց, Բիւզանդիա,  
 Այսօր եղեր ազդին Տաճկաց դու խմբարան, Բիւզանդիա :  
 Վերաց բժիշկ Բիւզանդիա, մեզաց քաւիչ Բիւզանդիա,  
 Եւ ամենայն ցաւազարաց առողջութիւն՝ Բիւզանդիա :  
 Արդ ակն ունիմ կատարածին թէ նորոգիս, Բիւզանդիա,  
 Եւ ազատիս յանօրինաց բռնութենէ, Բիւզանդիա :

Քանզի Յրանկաց ազդն չարժին կամօք անմահ թաղաւորին,  
 Զոր եւ յառաջ ըսյս ասացին սուրբ Հայրապետքն աստուածային,  
 Որք սուրբ հոգովքն խօսէին եւ ըզգալսցըն պատմէին,  
 Վասն գալոյ Յրանկաց ազդին ի ժամանակս յաւուրս յետին :  
 Ամենեքեան առհասարակ արիական ազգն չարժին,  
 Միաբանեալ ի միասին վասին ի սէրն աստուածային :  
 Գայցեն ծովով եւ ցամաքով որպէս դաստեղս որ ոչ թուին,  
 Յորդորելով զամենեկան աստուածառաք պատերազմին :  
 Նախ զԼաւորմզօլ քաղաքն առնուն ամենազօր կամօք Փրկչին,  
 Ապա յառաջ համարձակին եւ ի բոլոր աշխարհ սփռին :  
 Ելցին յերկիրն Արեւելից եւ կոտորին զամենեկին,  
 Որպէս առիւծ մըրընչելով ի յանօրէնս համարձակին :  
 Առնուն զքաղաքն Երուսաղէմ, գոնօրէնութիւն տեառն տեղին :  
 Ոսկիապատ զարդարեացեն զգուռն յարութեան զերեզմանին :  
 Քանզի լրումն եհասնոցին ըստ հրամանացըն Քրիստոսին,  
 Որպէս ասաց յաւետարանն յառաջագոյն Աստուածորդին :  
 Քրիստոնէից ազգըն ցընձան յերուսաղէմ սուրբ քաղաքին,  
 Եւ հեթանոսքըն կորընչին որպէս փոշի անյայտ լինին :  
 Տամ երանի ժամանակին որ հանդիպիք յանբաւ բարին :  
 Որպէս ըզծեր Միմէոնին, որ ցանկացաւ տեսեան Փրկչին :  
 Արդ բարձրանայ եղջիւր Միաչին փառօք խաչեալ թագաւորին,  
 Հեթանոսաց ազգն ամենայն առհասարակ կործանեացին :  
 Անթիւ լինի զօրք Յըրանկին որպէս գաւազ յեզըր ծովին,  
 Ոչ ոք կարէ յաղթել նոցին՝ արիական Յրանկ ազգին :  
 Որպէս կայձակն ի յեղեգան ի յայլազգեքն արձակեացին,  
 Եւ հալածեն ազգըն Տաճկաց զի հակառակ են սուրբ Սաչին :  
 Աոցեն զՀոռոց աշխարհն ամէն, մինչեւ ի Մշտըր հասանին :  
 Քակեն զղիւսաց բնակարան, զանօրինաց ուխտատեղին :  
 Ի Շահաստան հասանիցին, եւ ի Դաւրէժ յառաջեացին,  
 Ի Սորասան մտանիցին եւ զերեացեն զամենեկին :  
 Աշխարհս ամէն պայծառանայ ի հաւատոցըն Քրիստոսի,  
 Հեթանոսաց ազգն ամենայն ի յաշխարհէս հալածեացին :  
 Եկեղեցիք որ աւերեալ ի յամենայն տեղ շինեացին,  
 Օրհնեցողութեամբ Քրիստոսի՝ երկիրքամեն փառաւորին :  
 Ազգըս Հայոց պայծառանայ, զի յայլազգեացն ազատեացին,  
 Բերկրեալ ցնձան ամենեքեան որպէս յաւուրս Լուսաւորչին :  
 Քանզի Տրդատ եւ սուրբ Գրիգոր յորժամ ելեալ ի Հոռո գնացին :  
 Բոլոր տարի մի հոն մնացին Լուսաւորչին ընդ Տրդատին,  
 Եւ ամենայն օր խիլաթէր Գոստանդիանոս զհեծել նոցին :  
 Յայնժամ միմեանց դաշինս եղին եւ արձանաց դիր զըրեցին,  
 Մերով դաշինս հաստատեցին՝ զազգըս Հայոց ընդ Յրանկին :  
 Զորս հարիւր մարդ ի հոն թողին յԱրշակունեաց Պահլաւունին,  
 Զի մընացեն եւ աճեացեն Յրանկ ընդ Հայս միարանին :  
 Արդ առաջնորդք նոքա լինին արիական Յրանկ ազգին :  
 Գայցեն ծովով եւ ցամաքով եւ օգնական սեղ լինիցին :  
 Աոցեն զգաւառն Այրարատեան որ է տեղիք Լուսաւորչին,

Թագաւորեն յեջմիածին Վաղարշապատ սուրբ քաղաքին :  
 Փա՛ռք Աստուծոյ Հօրն վերին եւ Միածնին սուրբ եւ Բանին,  
 Հոգւոյն սրբոյ կենաց տուողին, խաղաղութեանց պարզեւողին :  
 Յինն հարիւր երկու թուին Հայաստանեայց մեծ տումարին  
 Որ զԸստրմպօլ քաղաքն առին եւ զքրիստոնեայս կոտորեցին ,  
 Ես Առաքել մեղօք ի լի, լցեալ չարօք աղետագին ,  
 Յարմարեցի զողբքս բանին Բիւղանդիա մեծ քաղաքին ,  
 Կոստանդինու Պոլիս կոչեալ անուամբ մեծի թագաւորին,  
 Այն որ հրեշտակք կանգնած կային եւ զչուշութեամբ ծառայէին :  
 Ես անարժան ամենայնի որ վարդապետ անունս կոչի ,  
 Այլ ի գործոց խիստ եմ հեռի, անմիտ, յիմար եւ փանաքի,  
 Յարմարեցի զբանս ի կարգի, ինձ յիշատակի ի յաշխարհի ,  
 Զի որ երգոյս այս հանգիպի, զիս յիշեսցէ կամօք բարի ,  
 Եւ ասասցեն տէր ողորմի ինձ բազմամեղ Առաքելի ,  
 Որ զայս բաներ ի շար եզի՝ ողբանք Կոստանդինու Պոլսի :

Վենետիկ վանք, տաղարան թիւ 529,  
 բազմատուած ուրիշ ձեւագրի մը հետ

### ԱՐՈՒԵՍՏԻ ԷԶԵՐ

ՅՈՒՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

(Շար. եւ վերջ)


Միայն մարդեր, եւ ամենէն զեղեցիկ մարդերը, չէ որ յօրինած է յունական արձանագործութիւնը: Աստուածներ ալ յօրինած է, եւ բոլոր նախնեաց կարծիքովը՝ այդ աստուածները իր հրաշակերտներն էին: Մարմնական եւ ըմբշական կատարելութեան խորին զգացման վրայ կ'աւելնար, հասարակութեան մէջ եւ վարպետներուն քով, բնական եւ աստուածային զօրութիւնները յղանալու, պատուելու եւ պաշտելու յատուկ եղանակ մը: Համոզուներ, ներու եւ դաւանանքներու այլ մասնաւոր ձեւն է որ պէտք է մտքի առջեւ բերել, երբ մարդ կ'ուզէ թափանցել քիչ մը Պոլիկէտի, Ակսրակրիտի կամ Փիդիասի հոգւոյն եւ հանձարին մէջ:



ԱՌԵՆԱՍ  
 Տրեզանի թանգարան

Կը բաւէ Հերոդոտոս կարգալ տեսնելու համար թէ Ե. դարուն առաջին կէսին մէջ դեռ հաւատքը որքան կենդանի էր: Ոչ միայն Հերոդոտոս ինքը բարեպաշտ է, նոյն իսկ կրօնամոլ այսինչ սրբազան անունը արտասանել կամ այնինչ աւանդավէպը յայտնել չհամարձակելու աստիճան, այլ ամբողջ ազգը իր պաշտամունքին մէջ կը դնէ այն մեծաշուք ու խանդոտ ծանրութիւնը զոր միեւնոյն միջոցին արտայայտեցին Եսքիլէսի եւ Պինդարոսի ոտանաւորները: Աստուածները կենդանի են, ներկայ են. կը խօսին. զանոնք տեսնող է եղած, ինչպէս Աստուածածինն ու սուրբերը՝ Ժ. Գ. դարուն. — Գսերքսէսի պատգամաւորները Սպարտացոց ձեռքով սպաննուած ըլլալով, զոհերուն փորո-

տիքը չարարեր կը դառնան, որովհետեւ այդ սպանութիւնը թշնամանած է յիշատակը մեռելի մը, Ագամեմնոնի փառապանծ պատգամաւոր Տալթիփիասին, որուն Սպարտացիք պաշտամունք մը նուիրած են: Չայն ողորկելու համար, քաղաքին մարդոցմէն երկու հոգի, հարուստ եւ ազնուական, Ասիա կ'երթան ինքզինքնին իբր զոհ ընծայելու Քսերքսէսին: — Երբ Պարսիկները կուգան, բոլոր քաղաքները պատգամին խորհուրդ կը հարցնեն. ան կը հրամայէ Աթենացոց որ փեսանին իրենց օգնութեան կանչեն. կը յիշեն թէ Բորէաս առեւանգեց իրենց առաջին նախահայր Երեքթէին աղջիկը՝ Ովրիթիան, եւ անոր անուհով մատուռ մը կը կանգնեն Իլիսոսի մօտ: Դեզփիսի մէջ աստուածը կը յայտարարէ թէ ինքը պիտի պաշտպանէ ինքզինքը. կայծակը բարբարոսներուն վրայ կ'իջնէ, ժայռեր կը փլըթին եւ զանոնք կը ջախջախեն, մինչդեռ Պալլաս Պրոնէայի մեհեանէն պատերազմի ձայնիւ եւ ազաղակներ դուրս կ'ելլեն եւ երկրին հերոսներէն երկուքը՝ գերմարդկային հասակով, Փիլակոս եւ Աւսոնոս, բոլորովին ի փախուստ կը դարձնեն արդէն սարսափած Պարսիկները: — Սալամինոյի պատերազմէն առաջ, Աթենացիք եզինէն բերել կուտան էաքեանց արձանները՝ որպէսզի իրենց հեռուէկաւիզ մարանչին: Պատերազմի միջոցին ճամբորդներ մեծ փոշիի մը բարձրանալը կը տեսնեն Ելեւիսի մօտ եւ ձայնը կը լսեն միտաբանական Իաքոսին որ Յոյներուն օգնութեան կը հասնի: Պատերազմներէն յետոյ աստուածներուն իրրեւ երախայրիք կը նուիրեն երեք գերի բռնուած նաւեր, այդ երեքէն մին էասին համար է, եւ կողոպուտին մէջէն մէկզի կը գնեն այն գումարը որ հարկաւոր է Դեզփիսի մեհեանին տասերկու արմկաչափ արձան մը նուիրելու համար: — Վերջը պիտի չգար եթէ ուզէի թուել հանրային բարեպաշտութեան բոլոր արտայայտութիւնները. յիսուն տարի յետոյ դեռ ան կենդանի կը մնար՝ ժողովրդին մէջ: Դիոպիթէս, կ'ըսէ Պլուտարքոս, «հրովարտակ մը հանեց որ կը պատուիր էրարդարութեան մասնել անոնք որ աստուածներուն գոյութիւնը չէին ճանչնար կամ երկնային երեսոյթներուն վրայ նոր վարդապետութիւններ կ'ուսուցանէին:»



ԱՓՐՈՒԻՏ, (ԱՍՏՂԻԿ)  
Հաւաքածոյ Լորտ Պիքընսփիլտի


Ասպասիա, Անաքսագորաս, Եւրիպիդէս, հալածանքի ենթարկուեցան կամ դատի կանչուեցան: Ալկիպիադէս մահուան դատապարտուեցաւ, Սոկրատ բռնադատուեցաւ թոյն առնել, ամբարշտութեան ենթադրուած կամ հաստատուած յանցանքի համար. ժողովրդական զայրոյթը անեղ եղաւ անոնց դէմ որոնք խորհուրդները խաթարած կամ աստուածները խեղած էին: Անշուշտ այս մանրամասնութեանց մէջ կը տեսնուի, հինաւուրց հաւաքին յամառ սեւուտին հետ, ազատ մտածման բարձրացումը. Պերիկլէսի շուրջը, ինչպէս Լորենթօ տի Մետիչիի շուրջը, պատճառաբանողներու եւ իմաստուններու փոքրիկ ալուճը մը կար. Փիդիաս, ինչպէս ետքէն Միքել Անճելօ, անոր մէջ ընդունուեցաւ: Բայց այդ երկու շրջաններուն ալ, աւանդութիւնն ու դիցավէպը երեւակայութեան ու կենցաղավարութեան միահեծան տերերն ու վարիչներն էին, երբ փիլիսոփայական ճանբուրու արձագանքը կուգար նկարագեղ ձևերով լեցուած հոգի

մը թրթռացնել , ուրիշ արգիւնք չէր ունենար բայց եթէ անոր մէջ ազնուացնել ու մեծցնել աստուածային գէմքերը : Եւր իմաստութիւնը կրօնքը չէր քանդեր , այլ զայն կը մեկնէր , զայն կը վերադարձնէր իր հիմունքին , բնական ուժերու բանաստեղծական զգացումին : Առաջին բնագէտներուն վարկածները աշխարհս նոյնքան կենդանի կը թողնէին եւ զայն աւելի վեհ կը դարձնէին . թերեւս Անաքսագորասի «Նոոս»ին վրայ խօսիլը լսելուն համար է որ Փիդիաս իր Արամազըր, Պալլասը , իր Երկնային Աստղիկը յղացաւ , եւ լրացու զ' ինչպէս կ'ըսէին Յոյները՝ աստուածներուն վեհափառութիւնը :

Աստուածային զգացումն ունենալու համար պէտք է կարող ըլլալ զանազանելու , աւանդավիպական աստուածին որոշ ձեւին մէջէն , այն մշտական ու ընդհանուր ձեւերը որոնցմէ բխած է ան : Չոր եւ սահմանափակ կոտորած մը կը մնայ մարդ , եթէ անձնական կերպարանէն անդին չընդնշմարէ , տեսակ մը լոյսի մէջ , այն Ֆիզիքական կամ բարոյական զօրութիւնը ուրուն խորհրդանշանն է այդ կերպարանը : Դեռ կ'ընդնշմարէին զայն՝ Կրմոնի եւ Պերիկլէսի աստիճան : Դիցաբանութեանց համեմատութիւնը ցոյց տուաւ վերջերս թէ յունական միթոսնէրը , սանսքրիթ միթոսներուն տոհմակից , ի սկզբան ուրիշ բան չէին արտայայտեր բայց եթէ բնական ուժերու գործունէութիւնը , եւ թէ մարդկային լեզուն քիչ քիչ աստուածներու փոխած էր տարրերն ու Ֆիզիքական երևոյթները՝ անոնց պէսպիսութիւնը , արդաւանդութիւնը , գեղեցկութիւնը : Բազմաստուածութեան խորը կենդանի , անմահ , ստեղծագործ բնութեան զգացումը կը գտնուի , եւ այդ զգացումը դեռ կը տեսէր : Աստուածայնութեամբ թաթաւուած էին իրերը . կը խօսէին անոնց հետ : Եսքիլէսի ու Սոփոկլի մէջ քսան տեղ կը տեսնենք մարդը որ իօսք կ'ուզէ տարրերուն , իբրեւ սուրբ էակներու որոնց հետ ընկերակից է՝ կեանքի մեծ պարը վարելու համար : Փիլոկաէտ մեկնելու պահուն , կ'ողջունէ «աղբիւրներու հոսուն յաւերժահարսերը , իր հրուանդաններուն ընդհարուող ծովուն մեծազգորդ ձայնը» — «Մնա՛ր բարով , կոհակապատ երկի՛ր Լեմնոսի , զիս ճամբայ զիր անեղծ , յաջող նաւարկութեամբ մը զիս հասցուր հոն ուր հզօր ճակատագիրը զիս կը տանի :» — Պրոմեթեոս , իր ժայռին գամուած , իւրեն կը կանչէ բոլոր այն մեծ էակները որ միջոցին մէջ կը բնակին : «Ո՛վ Եթեր աստուածային , արագաթռիչ Հովեր , Ակունքներ գետերու , անծայրածիր ժպի՛տ ծովային ծփանքներու , ո՛վ Երկիր , մա՛յր տիեզերական , Արեւ , որ ամէն բան կը տեսնես , ձեզ օգնութեան կը կանչեմ . տեսէք ի՛նչ ցաւեր կը քաշէ աստուած մը՝ աստուածներու ձեռքէն :» Կը բաւէ որ հանդիսատեսները քնարերգական յուզմունքին անձնատուր ըլլան , եւ պիտի գտնեն այն նախնական փոխաբերութիւնները որոնք , առանց իրենց գիտնալուն , իրենց կրօնքին հունտը կազմած են : «Մաքուր երկինքը , կ'ըսէ Ասադիկ , Եսքիլէսի մէկ կորսուած խաղին մէջ , կը սիրէ երկիրը թափանցել . եւ Սէրը զայն ամուսին կ'առնէ իրեն . անձրուը , որ ծնուցիչ երկնքէն կը թափի , երկիրը կ'արգասաւորէ . եւ այն ատեն՝ մահկանացուներուն համար՝ ան կը ծնի արջառներու ուտեսան ու Դեմետրէի հատիկը :» — Այս լեզուն ըմբռնելու համար , կը բաւէ որ մեր արուեստական քաղաքներէն եւ մեր շարագիծ զարգացումներէն դուրս ելլենք . այն որ միայնակ կ'երթայ լեռնոտ երկիր մը , ծովափունքներու մօտ , եւ թող կուտայ որ իր միտքն ամբողջովին գրաւուի անեղծ բնութեան տեսիլներովը , շուտով անոր հետ խօսակցիլ կը սկսի . ան կ'ողկուրուի իւրեն համար , գիմագծութեան մը պէս . լեռները , անշարժ եւ սպառնալից , ճաղատ հսկաներ կամ կոկոզած հրէշներ կը դառնան . ջուրերը որ կը լողան ու կ'ոտնոտն , շաղփաղփուն ու ծիծաղկոտ յիմար աղջիկներ են . մեծ լուկ նոճիները խտաբարոյ կոյսերու կը նմանին . եւ երբ կը դիտէ հարաւի ծովը , կապուտագեղ , ճառագայթարձակ , զարգարուած ինչպէս տօնի մը համար , այն տիեզերական ժպիտովը՝ զոր կը յիշէր Եսքիլէս , ան ինքնին կ'առաջնորդուի , արտայայտելու համար հեշտական գեղեցկութիւնը որուն անսահմանութիւնը զինքը կը պաշարէ եւ կը թափանցէ , անունն արտասանելով փրփրածին զիցուհոյն որ , կոհակէն դուրս ելլելով , կուզայ մահկանացուներու եւ աստուածներու սիրտը հրճուեցնել :

Երբ ժողովուրդ մը բնական իրերուն աստուածային կեանքը կը զգայ , դժուարութիւն չի կրնր տեսնելու այն բնական խորքը որմէ կ'ելլեն աստուածային անձնաւորութիւնները : Արձանագործութեան գեղեցկագոյն դարերուն միջոցին , այդ ներքին խորքը դեռ ակներևաբար կը զգացուէր այն մարդկային ու որոշ կերպարանքին ներքեւ որով աւանդութիւնը զայն թարգ-

մանած էր : Աստուածներ կան, մանաւանդ վա-  
զող ջուրերու, անտառներու եւ լեռներու աս-  
տուածները, որ միշտ թափանցիկ են : Մնացած :  
Նայազը կամ Լեռանոյձը՝ պարզապէս աղջիկ  
մըն էր. նման անոր զոր ժայռի մը վրայ նըս-  
տած կը տեսնենք Ուրիպիոյ մետոպներուն  
մէջ. երեւակացու թիւնը զայն այդպէս կը ներ-  
կայացնէր. բայց, անոր անունը տուած ատեն-  
նին, խաղաղ անտառին խորհրդաւոր ծանրու-  
թիւնը կամ ժայթրող ազրիւրին զովու թիւնը  
կը զգային : Համերոսի մէջ, որուն քերթուած-  
ները Յունաց Աստուածաշունչն են, Ողիսեա,  
նաւաբեկութիւնէն յետոյ, երկու օր լողալով կը  
հասնի յորդաջուր գետի մը բերանը, եւ կ'ըսէ  
գետին՝ «Մտիկ ըրէ՛ ինձի, ո՛վ թագաւոր, ով  
որ ալ ըլլաս. քեզի կը զիմեմ՝ պաղատագին,  
ծովէն դուրս՝ Պոսիդոնի ցասումէն փախչելով...  
Գթա՛ ինձի, ո՛վ արքայ, որովհետեւ ես կը պար-  
ծենամ քու աղաչաւորդ ըլլալուս :» — Այսպէս  
խօսեցաւ, եւ գետը հանդարտեցաւ, իր վազքն  
ու ալիքները կասեցնելով, եւ խաղաղ դարձաւ  
Ողիսեասի առջեւ, ու զայն իր բերնին մէջ ըն-  
դունեցաւ : Պարզ է որ աստուածն այստեղ քա-  
րայրի մը մէջ պահուելու մօրուեղ անձնաւո-  
րութիւն մը չէ այլ նոյն ինքն վազող գետը,  
խաղաղ եւ հիւրընկալ մեծ հոսանքը : — Նմա-  
նապէս՝ Աքիլլէոսի դէմ զայրացած գետը,  
«Քամնթոսն այսպէս խօսեցաւ եւ անոր վրայ  
խուժեց. մոլեգնութիւնէն պղպշալով, շերտնե-  
լով, փրփուրով, արիւնով ու գիակներով լե-  
ցուն : եւ Չեւսածին գետին պաղպաղող կոհա-  
կը ցցուեցաւ ու Պելէոսի որդին բռնեց... այն  
ատեն Հեփեստոս գետին դէմ դարձուց իր մե-  
ծաշող բոցը. եւ կ'այրէին կնձնիներն եւ ուռե-  
նիներն ու մոչավայրիները. կ'այրէր լողորս,  
եւ թրաշուշանը, եւ նոճին, որոնք առատ կ'ա-  
ծէին զեղեցկաջուր գետին շուրջը. եւ կնքե-  
լէսներն ու ձուկերը կը լողային հոս ու հոն,  
յորձանքներուն մէջ կը մխրձէին, Հեփեստոսի հրավառ շունչէն հալածուած, եւ գետին ուժն  
իսկ սպառեցաւ, եւ ազաղակեց՝ Հեփեստոս, աստուածներէն ոչ մէկը քեզի հետ չի կրնար  
կուռիլ, ա՛լ զադրէ ուրեմն :» — Այսպէս խօսեցաւ, հրակէզ, եւ իր վճիռ ջուրերը կը պղպշա-  
յին :» Վեց դար յետոյ, երբ Աղեքսանդր Հիտասպին վրայ նաւելու ելաւ, նաւուն ցոռկը կայ-  
նած՝ գինեծծոնք մը ըրաւ գետակին, ինչպէս եւ անոր քոյր միւս գետակին, Ինդոսին որ զանոնք  
երկուքն ալ կ'ընդունէր եւ զինքը քիչ յետոյ իր վրայ պիտի կրէր : — Պարզ եւ առողջ հողի  
մը համար գետ մը, մանաւանդ երբ անձանթ է, աստուածային զօրութիւն մըն է՝ ինքնին. ա-  
նոր առջեւ մարդը ինքզինքը՝ միազոյ, յաւիտենական, մշտագործ, մերթ անուցիչ եւ մերթ  
կործանիչ, անհամար ձեւերով ու երեւոյթներով էակի մը հանդէպ որ կը զգայ. այդ անցամա-  
քի մը գաղափարը կուտայ : Անկման դարեռուն, Տիբերիսին կամ Նեղոսին չպէս արձաններու



ԱՓՐՈՒԻՏ ՈՐ ԻՐ ՅԱՆԱԼԸ ԿԸ ՔԱԿԷ  
(Բրիտանական թանգարան)

հրավառ շունչէն հալածուած, եւ գետին ուժն  
իսկ սպառեցաւ, եւ ազաղակեց՝ Հեփեստոս, աստուածներէն ոչ մէկը քեզի հետ չի կրնար  
կուռիլ, ա՛լ զադրէ ուրեմն :» — Այսպէս խօսեցաւ, հրակէզ, եւ իր վճիռ ջուրերը կը պղպշա-  
յին :» Վեց դար յետոյ, երբ Աղեքսանդր Հիտասպին վրայ նաւելու ելաւ, նաւուն ցոռկը կայ-  
նած՝ գինեծծոնք մը ըրաւ գետակին, ինչպէս եւ անոր քոյր միւս գետակին, Ինդոսին որ զանոնք  
երկուքն ալ կ'ընդունէր եւ զինքը քիչ յետոյ իր վրայ պիտի կրէր : — Պարզ եւ առողջ հողի  
մը համար գետ մը, մանաւանդ երբ անձանթ է, աստուածային զօրութիւն մըն է՝ ինքնին. ա-  
նոր առջեւ մարդը ինքզինքը՝ միազոյ, յաւիտենական, մշտագործ, մերթ անուցիչ եւ մերթ  
կործանիչ, անհամար ձեւերով ու երեւոյթներով էակի մը հանդէպ որ կը զգայ. այդ անցամա-  
քի մը գաղափարը կուտայ : Անկման դարեռուն, Տիբերիսին կամ Նեղոսին չպէս արձաններու

մէջ , հին արձանագործները դեռ կը յիշէին նախնական տպաւորութիւնները , եւ արձանին լայն իրանը , անգորրաւէտ դիրքը , տարտամ նայուածքը ցոյց կուտան թէ մարդկային ձեւին մէջէն միշտ կը մտածէին արտայայտել մեծ ջուրին շքեղ , միակերպ , անտարբեր հեղումը :

Ուրիշ անգամներ , աստուածին անունը անոր բնութիւնն ընդնշմարել կուտար : Հետիւտ վառարան կը նշանակէ . երբեք այդ գիցուէին չեն կրցած բոլորովին զատել սուրբ բոցէն , որ ընտանեկան կեանքին կեդրոնն էր : Իեմետրէ կը նշանակէ մայր-երկիր . եւ ծիսարաններու վերայիբնները զայն կ'անուանեն «սեւ , խորին եւ գետնաբնակ , մատաղ էակներու զայնակ , մրգաւ բեր , կանաչագեղ» : Արեւը , Համերոսի մէջ , Ապոլոնէն տարբեր աստուած մըն է , եւ անոր մէջ բարոյական անձը ֆիզիքական լոյսին հետ կը խառնուի : Շատ մը ուրիշ աստուածներ , «Հորախ»՝ եղանակները , «Իիկէ»՝ արգարութիւնը , «Նեմեսիս»՝ պատուհասը , պաշտողին հողոյն մէջ իրենց անունին հետ կը բերեն իրենց իմաստը : Անոնցմէ մին միայն պիտի յիշեմ , Յրոսը՝ Սէրը , ցոյց տալու համար թէ ինչպէս Յոյնը , ազաւ ու թափանցող մտքով , միեւնոյն յուլմունքին մէջ կը միացնէր աստուածային յուզմունքին պաշտումը եւ բնական ուժի մը գուշակումը : «Սէ'ր , կ'ըսէ Սոփոկլէս , Սէ'ր անպարտելի , Սէ'ր որ իշխանութիւններուն ու քարերաստութիւններուն վրայ կը խոյանաս , զունն ընկաւնարդ աղջկան փոփոկ այնտեղն վրայ կը բրնակիրս . եւ ծովը կը կարես կ'անցնիս , եւ գեղջկական տնակներ կը մտնես , եւ անմահներուն մէջ՝ ոչ ալ վաղանցուկ մահկանացուներուն մէջ , չկայ ոչ մէկ որ կարենայ թու ձեռքէդ փախչիլ : » Ինչ յետոյ , «Խնջոյք»ին (1) կոչնականներուն մտքին մէջ , այդ անունին այլազան մեկնութեանց համեմատ , աստուածային բնութիւնը կը փոփոխուի : Ոմանց համար , քանի որ սէրը կը նշանակէ համակրութիւն եւ համաձայնութիւն , Սէրը աստուածներուն ամենէն արեւելականն է եւ , ինչպէս կը կարծէ Հեսիոդոս , աշխարհիս մէջ գտնուող բոլոր կարգաւորութեան ու ներդաշնակութեան հեղինակը : Ուրիշներու համեմատ , աստուածներուն ամենէն երիտասարդն է , որովհետեւ ծերութիւնը կը վանէ սէրը . ամենէն փոփոկն է , որովհետեւ կը քալէ եւ կը հանգչի ամենէն կակուղ բաներուն՝ սրտերուն՝ վրայ , եւ միմիայն այն սրտերուն որ կակուղ են : հեղուկ ու ցնդական է իսկութեամբ , որովհետեւ հոգիներու մէջ կը մտնէ ու կ'ըլլէ՝ առանց զգալի ըլլալու . ծաղկի մոյնք ունի , որովհետեւ բուրումներու եւ ծաղիկներու մէջ կ'ապրի : Ուրիշներու համեմատ՝ վերջապէս , Սէրը , ցանկութիւն ըլլալով , եւ հետեւաբար քանի մը պակասը , աղքատութեան մէկ որդին է , վտիտ աղտոտ , չոպիկ , բաց օդին պառկող , բայց Գեղեցկի ծարաւատենչ , եւ հետեւաբար յանդուգն , զործունեայ , ճարտարարուեստ , հաստատամիտ , փիլիսոփայ : Միթոսն այսպէս ինքիբնէ կը վերածնի եւ հազար ձեւի մէջէն կը վէտվէտի՝ Պլատոնի ձեռքերուն մէջ : — Արիստոփանի ձեռքը՝ ամպերը վայրկեան մը գրեթէ ճշմարտանման աստուածներ կը դառնան : Եթէ ուշ զննեք Հեսիոդոսի այն կէս-մտածուած , կէս-ակամայ շփոթութեան որով աստուածային անձնաւորութիւններն ու ֆիզիքական տարրերն իրարու կը խառնէ (2) , եթէ նկատենք որ «սննդատու երկրիս վրայ երեսուն հազար պահապան աստուած» կը հաշուէ , եթէ յիշենք թէ Թալէս , առաջին բնագէտն ու առաջին փիլիսոփան , կ'ըսէր թէ ամէն բան խոնաւութենէն է ծնած , թէ ամէն բան լի է աստուածներով , պիտի ըմբռնենք այն խորին զգացմունքը որուն վրայ կը հիմնուէր յունական կրօնքը , այն վսեմ յուզումը , հիացումը , պատկառանքը որով Յոյնը իր աստուածներուն պատկերին տակ կենդանի բնութեան անհամար ուժերը կը գուշակէր :

Իրաւ է որ ամենքն ալ նոյն աստիճանով իրերուն մէջ մարմնաւորուած չէին : Կային , եւ ամենէն ժողովրդականներն էին ատոնք , զոր աստուածութիւնը աւելի կորովի աշխատութեամբ մը՝ անշատած եւ ուրոյն անձնաւորութեան ձեւով կանգնած էր : — Յունական Ոլիմպոսը կարելի է բաղչատել ձիթենիի մը՝ ամառուան վերջը : Ոստերուն տեղին ու բարձրութեանը համեմատ , պտուղներն աւելի կամ նուազ հասունցած են . ոմանք , հազիւ կազմուած , ուրիշ բան չեն դեռ բայց եթէ խոշորցած իգայ մը , եւ սերտօրէն ծառին կը վերաբերին . միւսները , արդէն հասուն , դեռ սակայն իրենց ցօղունին կպած են . ուրիշներ՝ վերջապէս , որոնց կազմաւորումը

(1) Պլատոն : (2) Տեսէք մանաւանդ Իիցածնութեան մէջ՝ այլազան աստուածներու ծնունդը : Իր միաքը անընդհատ կը տատանի արեւելականութեան եւ զիցաբանութեան միջեւ :



ԻՐԵՆԷ ԿԵՓԻՍՈՂՈՏԻ  
(Հնուլթեանց թանգարան Միւնիխի)

լրացած է ինկած են , եւ բաւական ուշադրութիւն պէտք է դռնելու համար այն կոթունը որ զանոնք կրեց : -- Այդպէս ալ յունական Ուլիսսոսը , քնական ուժերը մարդկայնացնող կերպարանափոխութեան աստիճանին համեմատ , կը ներկայացնէ՝ իր այլ եւ այլ յարկերուն վրայ աստուածներ ուր ֆիզիքական նկարագիրը անձնական զէմքէն աւելի գերակշիռ է , ուրիշներ վերջապէս ուր աստուածը , մարդ դարձած , այլեւս թելերով միայն , երբեմն՝ հաղիւ տեսանելի միակ թելով մը , կը կապուի այն տարրային երեւոյթին որմէ սերած է : Կը կապուի անոր սակայն : Արամազդ , որ «Իլիական»ին մէջ տիրական ընտանիքի գլուխ մըն է , եւ «Պրոմէթէոս»ին մէջ՝ յափշտակող ու բռնակալ թագաւոր մը , կը մընայ այսուհանգերձ՝ իր շատ մը զծերովը՝ ինչ որ եղած է նախ , -- անձրեւարեր ու շանթարձակ երկինքը . նուիրացործուած վերադիրներ , հին աստութիւններ , կը մատնեն միշտ անոր սկզբնական բնութիւնը . գետերն «Իրմէ կ'իջնեն» , Արամազդ «կ'անձրեւէ» : Կրետէի մէջ անոր անունը «տիւ» կը նշանակէ . Եննիոս , յետոյ . Հոտի մէջ , պիտի ըսէ թէ տիւը «այն վսեմ հրավառ ճերմակութիւնն է զոր ամենքը Արամազդ անունով կը կոչեն» : Արիստոփանի մէջ կը տեսնուի թէ գեղ-

ջուկներու , ժողովրդի մարդոց , պարզ եւ քիչ մը հնասէր մտքերու համար , ան միշտ այն է որ «արտերը կ'ոռոգէ եւ հունձքերը կը բուսցնէ» : Երբ սոփիստ մը իրենց կ'ըսէ թէ Արամազդ չկայ , կը զարմանան եւ կը հարցնեն թէ ո՞վ է որ կը պայթի որոտման մէջ ու անձրեւի ձեւով կը հոսի : Ան շանթահարեց Տիտանները , հրէշաւոր Տիփէոսը՝ հարիւր վիշապազլիտով , սեւ արտաշնչութիւնները որ , երկրէն ծնած , օձերու պէս իրարու կը փաթթուէին եւ մինչեւ երկնքի կամարը կը բարձրանային : Ան կատարը կը բնակի լեռներուն որ երկնքին կը դըպչին , ուր ամպերը կը կուտակուին , ուր կաճակը կը խոյանայ . Ուլիսսոսին Չեւան է , Իթոմոսին Չեւսը , Հիմեթին Չեւսը : Ինքն ալ , ինչպէս բոլոր աստուածները , բազմապատիկ է , կապուած այն բոլոր վայրերուն որոնց մէջ մարդոց սիրտը անոր ներկայութիւնը ամենէն աւելի զգացած է , այն քաղաքներուն եւ նոյն իսկ այն ընտանիքներուն որոնք , զայն իրենց հորիզոններուն մէջ տեսած ըլլալով , իւրացուցած են եւ անոր պատարագ են մատուցած : «Կը պաղատիմ քեզի , կ'ըսէ Տեկմէս , քու տանդ Արամազդին սիրոյն» : Յոյնի մը կրօնական զգացմանը վրայ ճշգրիտ զողափար ունենալու համար , պէտք է աչքի առջեւ բերել հովիտ մը , ծովափ մը , այն ամբողջ նախնական բնապատկերը որուն մէջ ժողովրդի հատուած մը հաստատուած է :

երկինքը չէ ընդհանրապէս, ոչ ալ տիեզերական երկիրը, որ աստուածային էակներու պէս զգացած է, այլ իր երկինքը՝ վէպվէտող լեռներու հարիզոնովը, իր երկիրը ուր կը բնակի իր անասուններն ու վագրը ջուրերը որոնց մէջ կ'ապրի, իր Ձեւը, իր Պոսիպոնը, իր Հեքէն, իր Ապոլոնը, ինչպէս եւ իր պուրակային կամ գետային նիւմիաները: Հոռոմ, կրօնքի մը մէջ որ աւելի լաւ պահած էր նախնական ոգին, կամիլլոս կ'ըսէր՝ «Այս քաղաքին մէջ չկայ տեղ մը որ կրօնքով թաթառուած եւ աստուածով մը բնակուած չըլլայ»: — «Չեմ վախնար ձեր երկրին աստուածներէն, կ'ըսէ Եսթրէսի մէկ անձնաւորութիւնը, անոնց ոչինչ չեմ պարտիր»: Որոշ խօսելով, աստուածը տեղական է. որովհետեւ իր ծագմամբ՝ ուրիշ բան չէ բայց եթէ նոյնիսկ այդ մասնաւոր երկիրը, այս պատճառով է որ Յոյնին համար իր քաղաքը սրբազան է, եւ աստուածներն իր քաղաքին հետ կը նոյնանան: Երբ վերադարձին զայն կ'ողջուեն, բանաստեղծական պատշաճութեան համար չէ, ինչպէս Վոլթերի թանքրեաը. նոր ժամանակներու մարդու մը պէս, միայն իրեն ընտանի եզող առարկան վերստին գտնելու եւ իր տունը դառնալու հաճոյքը չէ որ կը զգայ. իր ծովափը, իր լեռները, պարսպապատ չրջափակը որ իր յայտերը կը պարփակէ, գերեզմաննոցն ուր շիրիմները կը պահպանեն ոսկերոտիքն եւ ուրուները հիմնադիր հերոսներուն, ամէն ինչ որ զինքը կը պաշարէ, տեսակ մը մեկեան են իրեն համար: «Արգոս», եւ դուք, բնիկ աստուածներ, կ'ըսէ Ագամեմոնոն, ձեզ պէտք է որ ողջուենք է'ն առաջ, դուք որ օժանդակներն եղաք իմ վերադարձիս եւ այն վրէժխնդրութեանը զոր լուծեցի Պրիամի քաղաքէն»: — Որչափ մօտէն նայինք այնքան իրենց զգացումը լուրջ, իրենց կրօնքը արդարանալի, իրենց պաշտամունքը հիմնաւոր կը գտնենք. եւ ետքէն, թեթեւութեան եւ անկման դարերուն է միայն որ «կոսպաշտ» դարձան: «Եթէ, կ'ըսէին, աստուածները մարդկային դէմքով կը ներկայացնենք, պատճառն այն է որ աւելի գեղեցիկ ձեւ մը չկայ»: » Բայց, արտայայտական ձեւէն անդին՝ կը տեսնէին ծածանիլը, ինչպէս երազի մէջ, այն ընդհանուր զօրութեանը որ հոգին ու տիեզերքը կը կառավարեն:

Հետեւինք իրենց թափոքներէն միոյն, համաթեանական տօնի թափօրին, եւ ջանանք որոշել մտածումներն ու զգացումները Աթենացիի մը, որ հանդիսաւոր չքախումբին խառնուած, իր աստուածներուն այցելութեան կուգար: — Սեպտեմբեր ամսոյն սկիզբը տեղի կ'ունենար այդ: Երեք օր շարունակ, ամբողջ քաղաքը մրցախաղերը դիտած էր, նախ՝ Օտէոնին մէջ՝ պարարուեստի բոլոր պերճանքները, Հոմերի քերթուածներուն արտասանութիւնը, երգի, քիթարի եւ սրինգի մրցումներ, պիւռական պարը կաքառող մերկ երիտասարդներու դասեր, ուրիշներ՝ հագուած՝ չրջանական դաս մը ձեւացուցած, յետոյ, ընթացարանին մէջ, մերկ մարմնոյ բոլոր հրահանգները, ըմբշամարտութիւնը, կոսմամարտը, համաժարտը, հնդամարտը՝ մարդոց եւ տղաքներու համար, ոտնարշաւը՝ պարզ եւ կրկնակ՝ մեծ մարդոց եւ սպառազէն մարդոց համար, ջահերով ոտնարշաւը, սովորական կառքով եւ պատերազմի կառքով, երկու մարդով՝ որոնց մին վար կը ցատքէր, վազելով կը հետեւէր, յետոյ մէկ թափով նորէն կառքին վրայ կ'ելլէր: Պինդարոսի մէկ խօսքին համեմատ, «աստուածները մրցախաղերուն բարեկամ էին», եւ լաւագոյն կերպով կարելի չէր զանոնք պատուել քան այս տեսարանով: — Չորրորդ օրը՝ թափօրը, որուն պատկերը պահպանուած է Պարթենոնի «Ֆրիզ»ին մէջ, քալելու կը սկսէր. անոր գլուխը կը գտնուէին քմապետները, ծերունիներ՝ գեղեցկագոյններուն մէջէն ընտրուած, ազնուատոհմ կոյսեր, դաշնակից, քաղաքներու պատգամաւորութիւններ՝ ընծաներով, յետոյ՝ «մեթեք»ներ՝ քանդակագարդ ոսկի եւ արծաթ անօթներով եւ ամաններով, ըմբիշները՝ ձեւորան կամ իրենց ձիերուն վրայ հեծած կամ կառքերու մէջ, երկայն շարք մը պատարադիչներու եւ զոհերու, վերջապէս ժողովուրդը տօնական զգեստներով: Նուիրական ցոկանաւը ճամբայ կ'ելլէր իր կայմին ծայրը կրելով Պալլասի քօղը, զոր երեքթէտնին մէջ անած աղջիկներ ասղնազորած էին: Սերամիկոնէն կը մեկնէր, կ'երթար Ելեւսինիոն, անոր շրջանը կ'ընէր, Ակրոպոլին եզերքէն կ'անցնէր, հիւսիսէն եւ արեւելքէն, ու կանգ կ'առնէր Արխապոսին մօտ: Հոն քօղը կը քակէին աստուածուհւոյն սանկելու համար զայն, եւ թափօրը վեր կ'ելլէր հարիւր ոտք երկայն, եօթանասուն ոտք լայն անասնման մարմարէ սանդուխէն, որ կ'առաջնորդէր Պրօպիլէն, Ակրոպոլին անդաստակը: Ինչպէս հին Բիզանիայն այն անկիւնն ուր կը խոնուին մայր-եկեղեցիին չեղ աշտարակը, Գերեզմաննոցն ու Մկրտարանը, այդ խորտուրտ ու ամբողջովին աստուածներու

բուն նուիրուած սարահարթը կ'անհետանար սրբազան շինութիւններով, մեհեաններ, մատու-  
 ներ կոթողներ, արձաններ. բայց իր չորս հարիւր ոտք բարձրութեամբը՝ ամբողջ երկրին  
 վրայ կը տիրէր. երկնքի վրայ գծուող այդ շէնքերու սիւներուն եւ անկիւններուն մէջտե-  
 ղէն, Աթենացիք իրենց Ատտիկէին կէսը կը նշմարէին, ամառէն այրած մերկ լեռներու շրջա-  
 նակ մը, փոքրփոքր ծովը՝ իր ափունքներուն անփայլ ցցուածքովը պաշարուած, բոլոր մեծ յա-  
 ւիտենական էակները որոնց մէջ աստուածներն իրենց արմատն ունէին, Պենտելիկոնը իր բա-  
 գիններով եւ Պալլաս Աթենէի հեռաւոր արձանով, Հիմեզն ու Անքեամը, ուր Զեւսի վիթխարի  
 անդրինները գեռ ցոյց կուտային որոտագոչ երկնքին եւ բարձր սարերուն նախնական խնա-  
 մութիւնը:

Քօղը կը տանէին մինչեւ Երէքթիէոն, իրենց մեհեաններուն վեհագոյնը, ճշմարիտ նշխա-  
 րատունն ուր կը պահէին երկնքէն ինկած պալլատիոնը, կեկրոպսի գերեզմանը եւ նուիրական  
 ձիթենին, հայր բոլոր միւս ձիթենիներուն: Հոն, բոլոր աւանգութիւնները, բոլոր արարողու-  
 թիւնները, բոլոր աստուածային անուէնները մտքին մէջ կը բարձրացնէին տարտամ ու վեհա-  
 շուք յիշատակ մը մարդկային քաղաքակրթութեան տոաջին պայքարներուն եւ առաջին քայ-  
 լերուն. միթոսին կէս-լոյսին մէջ, մարդ կ'ընդնշմարէ ջուրին, հողին եւ կրակին հինաւուրց  
 պայքարը, երկիրը որ ջուրերէն զուրս կ'ելլէր, արգաւանդ կը դառնար, բարի տունկերով,  
 հատիկներով եւ անդառու ծառերով կը ծածկուէր, կը բնակաւորուէր եւ կը մարդկայնանար՝  
 այն գաղտնի զօրութեանց ձեռքով, որ վայրենի տարրերն իրարու կ'ընդհարեն եւ տակաւ  
 առ տակաւ, իրենց անկարգութեանը մէջէն, հողիին գերիշխանութիւնը կը հաստատեն: Կեկրոպս  
 հիմնադիրը, իբրեւ խորհրդանշան ունէր էակ մը միւսեւոյն անուէնը կրող, ճպուռը, զոր հողէն  
 ծնած կը կարծէին, միշտ մը գերազանցապէս աթենական, երգեցիկ ու վտիտ, չոր բլուրնե-  
 րուն վրայ բնակող, եւ որուն պատկերը Աթենացիք իրենց մագերուն մէջ կը կրէին: Անոր  
 մօտ, առաջին հնարիչը, Տրիպտոլեմ, հատիկ ճգմողը, իբրեւ հայր ունեցած էր Դիաւլոսը, կրկին  
 ակօսը, եւ իբր դուստր՝ Գորգիսը, գարին: Աւելի նշանակալից էր Երեքթի, մեծ նախահայրին,  
 աւանգավէպը: Երկու թիւններուն մէջ այն մանկական երեւակայութեան որ միամտօրէն ու տա-  
 րօրէնօրէն անոր ծնունդը կը բացատրէ, իր անունը որ բերրի Հող կը նշանակէ, անուէններն իր աղ-  
 ջիկներուն որ ջինջ Օզը, Յօզն ու մեծ Յօզն են, ընդնշմարել կուտան՝ գաղափարը չոր երկրին՝  
 գիշերային խոնաւութենէն արգասաւորուած: Պաշտամունքին խել մը մանրամասնութիւնե-  
 ներն անոր իմաստը բոլորովին կը ճշդէին: Դեռ առի աղջիկները որ քօղը բանած են, կը կո-  
 չուին Երբեփոր, ցօղաբեր, խորհրդանշաններն են ցօղին զոր կ'երթան քաղել գիշերը՝ Ափրո-  
 գիտի քարայրին մօտ մեհեանի մը մէջ: Թալլօ, ծաղիկներու եղանակը, Կարպօ, պտուղներու ե-  
 դանակը, այդ տեղին մօտերը պաշտուած, գարձեալ երկրադործական աստուածներու անուէններ  
 են: Այս բոլոր արտայայտիչ անուէնները իրենց իմաստը կը մխէին Աթենացեոյն մտքին մէջ.  
 անոնց մէջ կը զգար, սքօղուած եւ անորոչ, իր ցեղին պատմութիւնը. համոզուած թէ իր հիմ-  
 նադիրներուն եւ նախահայրերուն ոգիները կը շարունակէին ապրել գերեզմանին շուրջը եւ  
 իրենց պաշտպանութիւնը կ'երկարէին իրենց ածիւնը պատուողներուն վրայ, անոնց կը բերէր  
 կարկանդակներ, մեղր, գինի, եւ իր ընծաները գետեղելով, մէկ նայուածքով, դէպ ետեւ ու  
 դէպ առաջ, կ'ընդգրկէր երկայն բարօրութիւնն իր քաղաքին, եւ յոյսին մէջ անոր ապագան  
 անցեալին կը միացնէր:

Վաղընջական սրբարանէն ելլելուն, ուր նախնական Պալլասը Երեքթիին հետ կը գտնէր  
 նոյն տանիքին ներքեւ, կը տեսնէր՝ գրեթէ իր գիմացը՝ Իկտինոսի ձեռքով կառուցուած նոր  
 տաճարը, ուր ան միայնակ կը բնակէր եւ ուր ամէն բան անոր փառքը կը պատմէր: Հազիւ  
 կը զգար այժմ ինչ որ ան եղած էր սկզբնական շրջանին. անոր ֆիզիքական ծագումը ջըն-  
 ջուած էր՝ բարոյական անձնաւորութեան զարգացմանը առկ. բայց խանդավառութիւնը թա-  
 փանցող դուշակում մըն է, եւ աւանգավէպի հատուածները, նուիրագործուած ստորագիւղները,  
 աւանդական վերադիրներ, նայուածքները կ'առաջնորդէին դէպ ի այն հեռուները որոնցմէ ելած  
 էր Գիտէին թէ ան աղջիկն էր Արամադին, շանթարձակ երկնքին, եւ անկից միայն ծնած, անոր  
 ճակատէն սլացած էր, փայլակներու եւ տարրերու շոխոզին մէջէն. Հելիոս կանգ առած էր,  
 Երկիրն ու Ոլիմպոս զողացած էին, ծովը ալեկոծուած էր, լուսեղէն ճառագայթներու ոսկի

անձրեւ մը երկրի վրայ տեղացած էր : Ան . ուշտ , առաջին մարդիկը նախ անոր անունովը պաշտած էին պայծառ օդին մաքրութիւնը . այդ կուսական սուրբ սպիտակութեան առջեւ , ծունկի էին եկած , համակ թափանցուած այն կազդուրիչ զօրութեամբ որ կը հետեւի մերիկին , զայն բաղդատած էին կորովի աղջկան մը , եւ զայն Պալլաս անուանած էին : Բայց այդ Ատտիկէին մէջ ուր անարատ եթերին թափանցիութիւնն ու շքեղութիւնը աւելի մաքուր են քան այլուր , ան Աթենաս էր դարձած : Իր ամենէն հին անուաներէն մէկ ուրիշը , Տրիտոպենիայ ջրածին , կը յիշեցնէր նաեւ թէ երկնային ջուրերէն էր ծնած , կամ ալիքներու լուսաւոր փողփողումին գազափարը կ'արթնցնէր : Իր ծագումը յայտնող ուրիշ հետքեր էին իր խառն աչքերուն զոյնը եւ իր ընտրած թռչունը , բուն , որուն բիւրբը , դիշեր ատեն , յստակատես լոյսեր են : Աստիճանաբար , անոր դէմքը գծուած ու պատմութիւնն աճած էր : Մըրկալից ծնունդը զայն պատերազմիկ , սպառազէն , ահաւոր էր ըրած . Ջեւսին զինակից՝ ապստամբ սիտաններուն հետ պայքարներուն մէջ , իբրեւ կոյս եւ մաքուր լոյս , տակաւ առ տակաւ մտածումն ու խնայալ կանութիւնը եղած էր , եւ զայն կ'անուանէին «ճարտարարուեստ» , որովհետեւ արուեստները հնարած էր , «ձիււոր» , որովհետեւ ձին զսպած էր , «առողջարար» որովհետեւ հիւանդութիւնները կը բուժէր : Այդ բոլոր բարիքներն եւ այդ բոլոր յաղթանակները պատերուն վրայ պատկերացուած էին , եւ աչքը որ տաճարին ճակատէն անսահման բնականարին կը դառնար , միեւնոյն բոսիէն մէջ կ'ընդգրկէր կրօնքին երկու վայրկեանները՝ մին միւսովը մեկնուած եւ կասարեալ գեղեցկութեան վսեմ զգայութեամբը հողոյն մէջ միաւորուած : Հարաւակողմը , հորիզոնին վրայ , կը նշմարէին ծովն անծայրածիր , Պոսիդոնը , որ կը գրկէ եւ կը գրգռէ երկիրը , կապուտակ աստուածը , որուն բազուկներն ափունքն ու կղզիները կը սեղմէին , եւ միեւնոյն ակնարկով՝ զայն կը գտնէին Պարթենոնի արեւմտեան պսակին ներքեւ , կանգուն , բուն , իր մկանուտ իրանն ու իր հզօր մերկ մարմինը ցցած , վայրի աստուածի վայրացած ժաթով մը , մինչդեռ իր ետին Ամփիտրիտ , գրեթէ մերկ՝ Թալասայի ծունկերուն վրայ , Լատոնա իր երկու զաւակներով , Լեւկոթոն , Հալլիթրոթիտ , Եւրիտ , կը զգացնէին , իրենց մանկական կամ իգական ձեւերուն վէտվէտուն թեքմանը մէջ , ծովուն շնորհք , փաղիւմը , ազատութիւնը , յաւիտենական ծիծաղը : Միեւնոյն մարմարին վրայ , Պալլաս՝ յաղթական՝ կը զսպէր ձիւրը , զոր երեքժանիի մէկ հարուածով Պոսիդոն հողէն դուրս էր հանած . զանոնք կ'առաջնորդէր դէպ ի հողին աստուածներուն կողմը , դէպի Կեկրոպս հիմնադիրը , դէպ ի առաջին նախահայրը՝ Երեքթէն , հողին մարդը , դէպ ի անոր երեք աղջիկները որ վտիտ գետինը կը թըջեն , դէպ ի Կալիթոն՝ գեղեցիկ աղբիւրը , եւ դէպ ի հովանաւոր գետն՝ Իլիսոսը . կը բաւեր որ նայուածքը , անոնց պատկերը գիտելէ յետոյ , վար դառնար , եւ սարահարթին ստորստը անոնց իսկութիւնը պիտի տեսնէր :

Բայց Պալլաս ինքն իսկ կը ճառագայթէր չորս բոլորը՝ միջոցին մէջ . պէտք չկար խորհրդածութեանց եւ գիտութեան , պէտք էր միայն բանաստեղծի կամ արուեստագէտի աչք ու սիրտ ունենալ՝ դիցուհւոյն եւ իրերուն միջեւ խնամութիւնը որոշ տեսնելու համար , զայն ներկայ զգալու համար պայծառ օդին լուսագեղութեան , արագաշարժ լոյսին փայլմանը , եւ մաքրութեանը մէջ այն թեթեւ օդին , որուն կը վերագրէին Աթենացիք իրենց հնարողութեան եւ հանճարին կենսականութիւնը . ինքն իսկ էր երկրին հանճարը , աղբին սօդին . անոր սուրքերը , անոր ներշնչումը , անոր գործն է որ տարածուած կը տեսնէին այնքան հետու որքան իրենց աչքը կը զօրէր , ձիթենիի գաշտերուն եւ երփներանգ մշակուած զառիթափներուն , երեք նաւահանգիստներուն՝ ուր նաւարանները կը մխայթին եւ նաւերը կը կուտակուէին , երկայն ու հզօր պարիսպներուն՝ որոնցմով քաղաքը ծովուն կը կցուէր , նոյնինքն գեղեցիկ ոստանին մէջ , որ իր , դերեզմաններով , թատրոններով , պնիքաներով իր բոլոր վերանորոգուած շէնքերով ու նոր կառուցուած տուներով բլուրներուն կոնակն ու զսոթիւարը կը ծածկէր եւ որ , իր արուեստներով , ճարտարագործութիւններով , հանդէսներով , հնարողութեամբը , անխոնջ քաջարտութեամբը «Յունաստանի զպրոց»ը դարձած , իր տիրապետութիւնը կը տարածէր ամբողջ ծովուն եւ իր աղղեցութիւնը ամբողջ ազգին վրայ :

Այդ միջոցին , Պարթենոնին դռները կրնային բացուիլ եւ ցոյց տալ , ընծաներուն մէջտեղը , — անօթներ , պսակներ , զրահներ , կապարճներ , երկաթէ զիմակներ , — հսկայ պատկերները ,

պաշտպան աստուածունին, կոյսը, յազթականը, կանգուն, անշարժ, նիզակը ուսին կրթնցուցած, վանանը քովն ի վեր կանգնած, աջ ձեռքին մէջ ոսկիէ եւ փղասկրէ յազթանակ մը բրուսած, ոսկի եզիւր կուրծքին վրայ, նեղ ոսկի սաղաւարտ մը գլուխը, այլազան գոյներով ոսկի մեծ պատմուճան մը հաղած, զէմքը, ոտքերը, ձեռքերը, բազուկները զրահներուն եւ զգետաններուն շքեղափայլութեանը վրայ փղոսկրին տաք ու կենդանի ճերմակութեամբ անջատուելով, իր պատուական քարէ ճերմակ աչքերը շեշտ շողիւնով մը փողփողելով՝ ներկուած «սելլայ»ին կէս-լոյսին մէջ: Անաարակոյս: անոր վեհ ու վսեմ արտայայտութիւնը երեւակայելով, Փրզի-աս յղացած էր զօրութիւն մը որ ամէն մարդկային շրջանակէ դուրս կը յորդէր, մին այն տիեզերական ուժերէն որոնք իրերու ընթացքը կը վարեն, գործօն իմացականութիւնը որ Աթէնքի համար, հայրենիքին հոգին էր: Թերեւս իր սրտին մէջ հնչելն իմացած էր նոր բնագիտութեան եւ փիլիսոփայութեան արձագանքին, որոնք՝ զեռ շփոթելով ուրիշ ու նիւթը, մտածումը կը նկատէին իբրեւ «ամենէն թեթեւ ու ամենէն մաքուրը զոյացութեանց», անսակ մը նուրբ եթեր ամենուրեք սփռուած՝ աշխարհիս կարգն արտադրելու եւ պահպանելու համար (1), այսպէս կազմուած էր անոր մէջ ժողովրդական պաշտօնէն ալ աւելի բարձր գաղափարը: Իր Պալլասը կը դերագանցէր Եգիպտոսի Պալլասը, որ արդէն ա՛յնքան վեհ էր, յաւիտենական բաներուն ամբողջ վեհափառութիւննովը:

ԻՆԻՈՒՂԻԹ ԹԷՆ

(1) Անաքսագորասէն մնացած բնագիրը: — Փրզիաս Անաքսագորասն ունկնդրած էր Պերիկլէսի տունը, ինչպէս Միքել-Անճելօ վերածնութեան ստոյլիկեանները ունկնդրած էր Լորենցօ աի Մետրիչի տունը:



### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

- o o -

«Թայմզ»ի բարեգեան թղթակիցը, Պ. Կար Պլովից, սեպտեմբեր 23 Պուականով իր լրագրին զրկուած թղթակցութեանը մէջ կը հաղորդէ թէ Քոմբրէձնէի մէջ Ֆրանսական եւ սուսական նախարարներու միջեւ, ինչպէս եւ Ջարին եւ Պ. Լուպէին միջեւ, փոխանցուած բոլոր խօսակցութեանց մէջ, այն խնդիրները որ գրեթէ տարամերժօրէն քննութեան ենթարկուած են, Արեւելքի եւ Մայրագոյն-Արեւելքի խնդիրներն են եղած, ինչպէս եւ Ֆրանսայի եւ Թուրքիոյ յարաբերութեանց խզումը՝ մտածուած է այն միջոցներուն վրայ զոր պէտք է ձեռք առնել որպէս զի Թուրքիա իր յանձնարարութիւններուն կատարումէն հտ չկենայ խուսափողական յապաղումներով, եւ հարկն ըմբռնուած է անհետացնելու այն նախանձո-

տութիւնները որ եւրոպական պետութիւններն իրարմէ կը բաժնեն արեւելեան խնդրոյն մէջ, յաջողելու համար Սուլթանին վրայ ազդեցիկ ճնշում մը բանեցնելու:

Հայկական հարցն ալ նմանապէս նկատողութեան առնուած է:

Ջարը յայտարարած է թէ այլեւս իրեն համար անկարելի է հանդուրժել որ նոր ջարդեր տեղի ունենան Հայաստանի մէջ:

Ֆրանքո-ոռու հանդիսութեանց վերջին բաժակածառին մէջ զոր Պ. Լուպէ արտասանած է, հետեւեալ տողերը ուշադրաւ են. «Ֆրանքո-ոռու նիզակակնցութիւնը, կ'ըսէ Պ. Լուպէ, տարիներու ընթացքին մէջ զարգացաւ, եւ այն խնդիրները որ երեւան կ'ըսան, զայն գրտան աչալուրջ, հաստատակամ, իր սեփական շահերը աշխարհիս ընդհանուր շահերուն հետ հաշտեցնող, չափաւոր՝ որովհետեւ հզօր, եւ առաջուց յոժար, այն բոլոր չուժումներուն զոր կը ներշնչեն արդարութիւնն ու մարդկայնութիւնը»:

Փրանքօ-ռուս նիզակակցութիւնը չի կրնար աւելի դրական ապացոյց մը տալ այս յայտարարութեան անկեղծութեանը՝ քան վերջ գնելով Թուրքիոյ Հայոց տառապանքին : Թէ այդ տողերը իբրք առնական եւ ալնիւ որոշումներու նախաքարոզն են, իրողութիւնները միայն պիտի ցոյց տան դայդ :

Սուլթանը ամէն ջանք կ'ընէ զոհացում տալու համար իր երկու պարտապահանջներուն, Պ. Պ. Լորանտոյին եւ Թուպինին, եւ կը կարծէ թէ ատով պիտի փակուի ֆրանքօ-թուրք վէճը : Ատի ամօթալից բան մը պիտի բլլար Փրանսայի համար : Եւ կը կարծուի թէ ֆրանսական կառավարութիւնը տրամադիր չէ ատով խնդիրը փակուած նկատելու, եւ որոշած է այդ դրամական հարցին լուծումէն յետոյ, ուրիշ կարգ մը — քաղաքական — հարցերու լուծումն ալ պահանջել՝ զիւանագիտական յարաբերութիւնները վերսկսելէ առաջ Թուրքիոյ հետ . պիտի պահանջէ մասնաւորապէս, կ'ըսեն, որ Սուլթանը ընդունի Պարտոյի գաշնադիրը որով Թունուզ ֆրանսական հովանաւորութիւնը ընդգրկած է : Սուլթանը զիմած է Ռուսիոյ, այդ բանին առաջքն առնելու համար . Ռուսիա մերժած է միջամտել :

Այդ քաղաքական հարցերու շարքին մէջ չի կրնար աւել չունենալ թրքական Հայաստանի կացութեանը բարւոքման հարցն ալ :

Այն պարագային ուր ֆրանսական կառարութիւնը ոչինչ չփորձէր այդ նպատակով, — ինչ որ անհաւանական է, — Պ Տըքիս Քուշէն որոշած է հարցապնդումը պահպանել եւ ֆրանսական հանրային կարծիքին զփոփոխութիւնը յայտնել եւ անոր անունով պահանջել որ Փրանսա վութայ գործելու Փրանսական խորհրդարանին ձախակողման պետերէն մէկը, Պ. Ռուանէ, որոշած է նմանապէս հարցապնդում մը ուղղել թրքական Հայաստանի կացութեան վրայ :

Վերջապէս որոշուած կը թուի որ Միւնիք պէյ այլ եւս Բարիզ պիտի չչառնայ իբր զեսպան : Ասի արդէն արդիւնք մը պիտի կարենար նկատուիլ, եթէ Նուրի պէյ, որ կը կարծուի թէ անոր պիտի յաջորդէ, նմանօրինակ արկար մը չբլլար :

«Թան»ը իր 29 սեպտեմբերի թուով կը հրատարակէ երկրորդ յօդուած մը թրքական Հայաստանի հարցին վրայ, զոր ամբողջութեամբ կը թարգմանենք այստեղ :

«Բարձրագոյն Դուռը Հայաստանի վիլայեթներուն մէջ արիւղ կացութեան ծանրութիւնը իր բերնովը կը խոստովանի պետութեանց ծանուցանելով թէ քննիչ յանձնաժողովներ կարգած է : Միամտութիւն պիտի բլլար շատ մեծ կարեւորութիւն մ'ընծայիլ այդ որոշումին :

«Պիտենք թէ ինչ կ'արժեն քննութիւնները որ կը ձեւնարկուին եւ կը վարուին, ոչ թէ ճշմարտութիւնը երեւան հանելու, այլ հանրային կարծիքը մոլորեցնելու եւ տիեզերական խզմտանքը քնացնելու համար՝ կեղծ գոհացում մը տալով անոր : Նմանօրինակ կարծեցեալ յանձնաժողովներու՝ որոնք 1895ին գործեցին՝ պատմութիւնը բաւական է մեզի ցոյց տալու համար թէ նոյն լիակ կան պարագաներ ուր անոնք կարող են նպաստել աճեցնելու այն չարիքը զոր որպէս թէ երեւան հանելու պաշտօնն ունին :

«Ինչ որ կ'արդարացնէ բոլոր մտատանջութիւնները կամ մանաւանդ բոլոր կասկածները, սա է որ այն պահուն իսկ ուր Սուլթանը իր այդ կարծեցեալ ուղղամտութեան գրաւականը կուտայ Եւրոպային, միջոցներ ձեռք կ'առնէ՝ հայկական խոսովութեանց թատերաբեմէն հեռացնելու, վանելու ո եւ է անկախ վկայ մը : Սուշի գաւառին Թուրք իշխանութիւնները անհաւաստալի զփկամակութիւններ ցոյց տուած են Վանի ուստական հիւպատոս Պ. Հումանսքիի հանդէպ, որ պաշտօն ունեցած էր երթալ տեղւոյն վրայ քննել բնակչութեան վիճակը : Հակառակ այդ իշխանութեանց է որ Զարին այդ պատուիրակը կրցած է, — ընկերակցութեամբ բազմաթիւ պահապան զօրախումբի մը՝ առանց որուն անկարելի էր այդ բանն ընել, — տեսնել, մատովը շօշափել, որոշ գաղափար մը կալմել եւ իր տպաւորութիւնը ամփոփել սեպտեմբեր 14ին Պուլտյ ուստական ղեսպանին զրկած սա լակոնական հեռագրով՝ ՅՈՒԻ ԿՍՏՈՒԹԻՒՆ» :

«Միւսնոյն ոգևով է որ Պիթիսի վալին ջանացած է արգիլել ամերիկացի միսիոնարի մը որ իր վիլայեթին մէջ շրջագայի, եւ պէտք եղած է որ Միացեալ Նահանգաց ղեսպանը որոշ ու պատճառաբանեալ մէկ զեկուցում մը զրկէ որպէս զի այդ վրդովիչ դիտողը կարեւ

նայ իր պտոյտը կատարել (\*):

«... Ասկից առաջ՝ Եւրոպան իր անտեղեկութեանը մէջ մեզմտացուցիչ պարագաներ փնտուեց իր անտարբերութեանը, անգործութեանը, գրեթէ-մեղսակցութեանը համար:

«Այո անգամ առաջոց տեղեկութիւն տրուած է իրեն, եւ այդպիսի չքմեղանք մը չի կրնար այլեւս գործածել: Ամէն բան իրեն կը ծանուցանէ այն ծանրակշիռ դէպքերը որոնց թատերաբեմն ըլլալ կը վերսկսի Հայաստան:

«Նոյն իսկ օսմանեան չորրորդ զօրաբաժնէն ութ վաշտ Մուշ զրկուելը, կացութեան վրայ վտանգի նոր տարր մը աւելցնելով հանդերձ, անոր սղառնագին հանգամանքը կը հռչակէ:

«Հեռադրական դարձակալութիւնները, մանաւանդ յորմէհեատէ հայկական խնդրէն անհամեմատելի կերպով նուազ ծանր շահերէ ծնած անհամաձայնութիւն մը Ֆրանսայի եւ Սուլթանին միջեւ յարաբերութիւնները խզած է, աչքերնին բացին այդ հիւանդութեան նըշաններուն եւ Հայաստանէն իրենց դրկել կուտան հեռագրեր որոնց մէջ, որոշ չափով մը, երեւան կուգայ ամբողջ ժողովրդի մը եղերական անձկութիւնը: Այսուհանդերձ, այդ տեղեկութիւնները շատ անկատար են, շատ անբաւական. կարելի է երբեմն կասկածիլ որ անոք քիչ մը «գտուած» ըլլան:

«Տեղեկութեան ուրիշ աղբիւրներ ալ ունէինք: Նուիրական դատի մը արի խնդրանքները, «Բրօ Արմենիայ»ին մէջ, ա՛յնքան ուշադրաւ իր ընդարձակ թղթակցութիւններով եւ իր նկարու ու վաւերական նամակի քաղուածքներով, «Իրօշակ»ին մէջ, քաջ օրհանր կուտակցութեան մը որ գիտէ ինչ որ կ'ուզէ եւ որ գիտէ ուղիւ եւ գործել, մեզի բերին՝ օր առ օր՝ որոշ, դրական մանրամասնութիւններ Սասունի, Ձէյթունի եւ այլ վնասուած գաւառներու խռովութեանց վրայ: Այս պահուս, Մուշի եւ ամբողջ վրլայեթին մէջ պաշարման վիճակի հաստատումին շնորհիւ, ոչ մէկ նամակ այլեւս չի կրնար անցնիլ:

«... Որչափ պնդենք ուրեմն քիչ է՝ այն ստիպողական պարսականութեան վրայ դոր ունի

(\*) Նմանապէս թուրք կառավարութիւնը թոյլ չէ տուած որ Պոլիս գառնայ էրզրումի ֆըրանսական հիւպատոսարանի առաջին թարգմանը, գոր Պ. Պարս, Պոլսոյ ֆրանսական դեսպանատան գործակատարը. իր կառավարութեան հրամանով, Պոլիս կանչած էր վ'ըջերս' էրզրումի եւ շրջակայից խռովեալ կացութեան մասին որոշ տեղեկութիւններ տալու համար:

դիւանագիտութիւնը՝ տեղեկութիւն ստանալու, փարատելու այդ աղջամուղջները որոնք միայն ոճիրին նպատաւոր կրնան ըլլալ:

«... Ճշմարտութիւնը այն է որ այն առաւել կամ նուազ նախապատրաստուած արկածներէն դուրս որոնք ամէն վայրկեան կարող են այդ գծաղդ երկրին մէջ սպանութեան եւ չարչարանքի նոր մարիկ մը արձակել, Հայաստանի կացութիւնը մեծապէս անկայուն եւ անստանելի պիտի մնայ ցորքան պետութիւնները չըմբռնեն վերջապէս Պերլինի դաշնագիրը գործադրելու պէտքը:

«... Այն տկարութիւնը, որով Եւրոպա թողուց որ անկենդան դառնան Արեւելքի այդ պայմանագրերն էական որոշումներէն մէկ քանին, — մասնաւորապէս ՅԱրդ յօդուածը Հայաստանի մէջ բարենորոգումներու նկատմամբ, — պատասխանատու է մեծագոյն մասին այն չարիքներուն որով անկից ի վեր տառապած են Սուլթանին հպատակները եւ որուն հակահարուածը կրած է Եւրոպան: Այս ճշմարտութիւնը կարծես փայլակի մը մէջ ընդնշմարեցին՝ հայկական կոտորածներու վաղորդայնին, եւ Մայիսի «մեմորանտում»ը պետութեանց ապաշխարական վերադարձն եղաւ դէպ ի միակ փրկարար քաղաքականութիւնը: Անգամ մը եւս մոռացութիւնը վերսկսաւ:

«Այսօր պետութիւններն իրենց առջեւ ունին սեսակ մը պայմանաժամ, սեսակ մը շնորհուած ժամանակ, այդ սխալին արդիւնքը չէզոքացնելու համար: Ամբողջ Արեւելքի մէջ, ժողովուրդները, որ հակառակ ա՛յնքան յուսախաբութեանց, չեն կորսնցուցած դարաւոր սովորութիւնը Ֆրանսային նայելու ինչպէս մարդ աչքը կը դարձնէ գերագոյն ապաւէնի մը, կը յուսան թէ միջազգային հաւասարակշռութիւնը երաշխաւորող դաշնակցութեան մը վերջին ցոյցերը իրենց արդիւնք պիտի ունենան, յանուն երկու բարեկամ եւ դաշնակից պետութեանց լրակատար համաձայնութեան, ճնշում բանեցնել Սուլթանին վրայ, առանց որուն այդ վեհապետը ոչինչ պիտի ընէ Հայաստանի մէջ կոտորածներու վերսկսման առաջին աննելու համար:

«Եւ դիւանագիտութիւնը պէտք է որ նկատողութեան առնէ սա կէտը թէ ջարդերը որոնց հանդէպ մարդկային խղճմտանքը ա՛լ վերջապէս պիտի ըմբոստան ար, կրնան նաեւ ծնունդ տալ վրիժառութեան արարքներու որոնք ամէն բանէ առաջ կը վրդովեն իրապաշտ քաղաքացիներու երկրաքարչ խոհեմութիւնը:»

— Ծրանքօ-թուրք անհամաձայնութեան վերայ բարդուեցաւ անգլօ-թուրք անհամաձայնութիւն մըն ալ . թերեւս աւելի ծանրակշիռ : Քովէիթի խնդիրը ամենասուր հանգամանք մը կուտայ Անգլիական եւ թրքական կառավարութեանց յարաբերութիւններուն : Տաճիկները կ'ուզեն բոլորովին իրենց իշխանութեան սակաւունս Քովէիթը , Պարսից ծոցին վրայ նաւահանգիստ մը որ գերմանական երկաթուղիի դժին վերջակէտը պիտի ըլլայ . Անգլիացիք որ Քովէիթի տեղական Սուլթանին միշտ պաշտպանութիւն չնորհած են ութսուն տարիէ ի վեր եւ միշտ աչք ունեցած են այդ կարեւոր կէտը իւրացնելու , մէկ քանի զրահաւոր զորկած են Քովէիթի առջեւ , ու կ'արգիլեն Տաճիկներուն զօրք մտցնել Քովէիթ :

Անգլիացից այս թշնամական ընթացքը թուրք կառավարութեան հանդէպ , այն միջոցին ուր Ծրանսա եւ Ռուսիա մերեւելեան խընդիրը բանալու հակամէտ կը թուին , շատ բարեպատեհ է : Տաճկաստանը բարեկարգելու համար Ծրանսայի եւ Ռուսիոյ ձեռք առնելիք միջոցներուն պիտի չհակառակի ուրեմն Անգլիա , այլ ընդհակառակն պիտի գործակցի :

— Արարիոյ Պոսրա վիլայէթին մէջ . Սաստոն շէխը ապստամբած է Սուլթանին դէմ , որ 3000 զինուոր զրկած է հոն :

— Ալպանիոյ մէջ ալ շատ լուրջ ապստամբութիւն մը ծագած է . Սուլթանը 10000 զինուոր զրկած է այնտեղ :

— Կ'ըսուի թէ Սարաֆով , Մակեդոնական քումիթէի նախկին նախագահը , հրոսակախուժութիւն մը յարուցնելու համար :

— «Տէյլի Նիւզ» Պերսիէն իրեն զրկուած հետեւեալ հեռագիրը կը հրատարակէ 30 սեպտեմբեր թուականով . «Անատոլուէն եկած հուպատոսական տեղեկագրերը կ'ըսեն թէ գիւղերու թուրք բնակչութիւնը , հաւանականաբար իմամներու քարոզութենէն զրդուած , շատ թշնամական դիրք մը կը սկսի բռնել հանդէպ Եւրոպացուց : Թուրքերը կը կարծեն թէ Ծրանսա Սուլթանին մեծ վտանգներ կը սպառնայ որովհետեւ Սուլթանը անկարող է վճարել ահագին գումարներ զոր Ծրանսա կը պահանջէ առանց իրաւունք ունենալու : Առաւել կամ նուազ յայտնի կերպով կ'առաջարկեն Եւրոպացիներն եւ բոլոր քրիստոնեաները կոտորել :»

— «Մաթէն» հոկտեմբեր 4 թուականով կը հրատարակէ հետեւեալ հեռագիրը Պոլսէն . «Իերմանական զեսպանը երեքշաբթի գիշեր պալատը ճաշեց : Ճաշի միջոցին , Սուլթանին պնդեց որ միջոցներ ձեռք առնէ գաւառներու ողբալի կացութիւնը դարմանելու համար :

«Ռուսական զեսպանն ալ կը պատրաստուի

բացատրութիւն պահանջել Բ . Գուսէն . Հայաստանի վերջին դէպքերուն մասին , հիմնուելով իր ստացած հիւպատոսական տեղեկութեանց վրայ :»

Այս բոլորը ցոյց կուտան թէ Եւրոպայ լրջօրէն որոշած է զրազիլ արեւելեան խնդրով ընդհանրապէս եւ հայկական խնդրով մասնաւորապէս , եւ թէ Եւրանասն ու Ռուսիան են որ այդ շարժման գլուխն են անցած :

### ԱԶԳԱՔԻՆ ՔՐՈՆԻԿ

— Անգլիացի գրող մը , Պ . Հ . Պ . Լինչ , որ ջարդերէն յետոյ ճամբորդած է Հայաստանի մէկ ծայրէն միւսը , ամենակարեւոր գործ մը հրատարակած է Հայաստանի վրայ . այդ գործը կը բաղկանայ երկու հատորէ . մին Ռուսահայաստանին նուիրուած , միւսը՝ ստեղծական Հայաստանին : Հոյակապ ուսումնասիրութիւն մըն է , մանրակրկիտ ու անկողմնակալ , Հայոց անցեալին ու ներկային , զարգացումը՝ 197 պատկերներով , որոնք կը ներկայացնեն Հայաստանի գիրքերը , տիպարները , զեեսաները , անօթները , ճարտարապետական զեղեցիկութիւնները , եւն . Ամեն անգլիադէտ Հայ պէտք է որ ունենայ իր զրազարանին մէջ այս սրանչիլի գործը , որ թերեւս ամենէն լիակատար եւ ամենէն արդարադատ ուսումնասիրութիւնն է օտարի մը կողմէ Հայաստանին նուիրուած :

— «Լա վի իլլիւսթրէ» գեղարուեստական եւ գրական մեծ շարաթաթերթը իր յաջորդ թիւերէն մին ամբողջութեամբ պիտի նուիրէ Պ . Էսկար Շահինի գործին :

— «Ռըվիւ Պլանշ» իր 1 հոկտեմբերի թիւին մէջ հրատարակեց Նահապետ Քուչակ հին հայ աշուղին «սիրոյ երգեր»էն մաս մը , թարգմանութեամբ Ա . Զօպանեանի :

— «Ռըվիւ տէ Ռըվիւ» հանդէսը պիտի հրատարակէ իր 15 հոկտեմբերի թիւին մէջ Պ . Բիէռ Քիյատի մէկ ընդարձակ յօդուածը հայկական խնդրոյն վրայ :

— «Ռըվիւ պլանշ» իր հոկտեմբեր 15ի թիւին մէջ պիտի հրատարակէ Ա . Զօպանեանի մէկ յօդուածը «Հայերը եւ Երեսասարդ-Թուրքիան» տիպոգրով :

— Ընդունեցանք «Փարոս» լրագրին ստաջին թիւը :



ՀՆՁՄԱՆ ԵՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՆ ԳԻՐԵՐ

«Բրօ Արմենիայ»ի վերջին թիւին մէջ, Պ. Բիէր Քիլիար հետեւեալ տողերը կը նուիրէ վեր. Հնչակեան կուսակցութեան Գործիչներ զբկած յիշատակագրին. «Վերջին վայրկեանին կ'իմանամ թէ Հնչակեան յեղափոխական կուսակցութեան կեդրոնական վարչութիւնը Գործիչները զբկած է. Չարին այդ քաղաքն հասնելէ անմիջապէս յետոյ, յիշատակագիր մը երկու օրինակով, մին ուղղուած Ֆրանսական հանրապետութեան նախագահին, միւսը՝ Ռուսիոյ կայսեր. Այս յիշատակագիրը կոչուած կ'ընէ ուշադրութիւն զարձանել Հայաստանի զարհուրելի կացութեան վրայ եւ մասնաւորապէս Մուշի եւ Սասունի զէպքերուն, եւ կը հրաւիրէ Ֆրանսան եւ Ռուսիան՝ կորովի գործունէութեան մը նախաձեռնութիւնն առնելու, վերջ գնելու համար իրաց վիճակի մը որ խաղաղութեան դէմ մշտական վտանգ մը կը կացուցանէ, գործադրել ապով Հայաստանի մէջ այն բարենորոգումները զոր երոպական պետութիւններն իրենք իսկ առաջարկեցին 1895ին:

«Այսպէս, առանց իրարու հետ խորհրդակցած ըլլալու, հայկական գործունէութեան երկու պատմական կուսակցութիւնները միեւնոյն դադախարն ունեցած են Ֆրանսային կոչումը ընելու՝ իրենց ժողովրդին փրկութեանը համար: «Ֆրանսայի համար շատ տիրուր բան մը եւ անբաւելի ամօթ մը պիտի ըլլար եթէ իրենց ձայնը լսելի չըլլար այս եղբրական պահուն ուր զիւզերը կը բոցավառին եւ արիւնը կը հոսի՝ Մեծ Մարդասպանին հրամանովը:»

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ:

- Պ. ՉԵՐԱՉ, ԴՐՕՇԱԿԵԱՆՆԵՐԸ, ՉՍՐԸ ԵՒ ԲԱՍՄԱՋԵԱՆ ԲԵՒԵՆՈՒՄԻՏԸ:
- ԿՈՌՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ:

—o—

— Միւրքեան ինդիւրը. — Պոսթոնի «Չայն Հայրենեաց»ը իր սեպտեմբեր 14ի թիւին մէջ հետեւեալ լուրը կը հաղորդէ որ ամենամեծ հաճոյք պիտի պատճառէ բոլոր անկեղծ աղագուսներուն. «Երեք կուսակցութեան պատկանող խումբ մը յեղափոխականներ — որոնց մէջ նաեւ «Հայրենիք»ի եւ «Չայն Հայրենեաց»ի խմբագրական մարմիններու անդամներ — կանխաւ եղած կարգադրութեան մը համաձայն սեպտ. 6 ուրբաթ երեկոյ հաւաքուեցան խորհելու թէ ինչ միջոցներ կրնան դնել համարաշխութիւն մը գոյացնելու Ամերիկայի երեք

Յեզ. մարմիններու մէջ, եւ միութեան իրագործումին նպաստելու երեք կուսակցութեանց միջեւ:

«Ժողովը ընկերական խորհրդակցութենէ մը ետք հետեւեալ թելադրութիւնները ըրաւ.

«1. «Հայրենիք»ի եւ «Չայն Հայրենեաց»ի խմբագրութիւնները զաղբեցնեն ասկէ ետք կուսակցական-անհառական վէճերը:

«2. Գումարում մը եւս ունենալ յառաջիկայ ուրբաթ երեկոյ (13 սեպ.) խորհրդակցութիւնները շարունակելու միութեան խնդրոյ մասին:»

Կը մաղթեմ, եւ կը յուսամ, որ Դրօշակեանց վարիչ մարմինը պիտի չուշանայ հետեւելու Ամերիկայի Դրօշակեաններուն ազնիւ եւ ուշիմ օրինակին:

— Պ. ՉԵՐԱՉ, ԴՐՕՇԱԿԵԱՆՆԵՐԸ, ՉԱՐԸ ԵՒ ԲԱՍՄԱՋԵԱՆ ԽՆԴԻՐԸ. — «Արմենիայ»ի վերջին թիւին մէջ Պ. ՉԵՐԱՉ «սխալ» մը եւ «ձախաւերութիւն» մը (gaffe) կ'անուանէ Պ. Քիլիարի ձեռքով Պ. Տելքասէի մօտ Դրօշակեանց զիմուր. Պ. ՉԵՐԱՉ կը մեղադրէ Դրօշակեաններուն բարենորոգմանց նոր ծրագիր մը առաջարկած ըլլալին, մինչդեռ կ'ըսէ՝ կրնային 1895 մայիս 15ի ծրագրին գործադրութիւնը պահանջել: Պ. ՉԵՐԱՉ կը կարծէ որ նոր ծրագրի մը ներկայացուիլը, պետութեանց եւ Սուլթանին միջեւ նորանոր վէճեր յարուցանելով, պիտի յապաղեցնէ հայկական խնդրոյն լուծումը. «Նոր ծրագիր մը ներկայացնելը, կ'ըսէ պ. ՉԵՐԱՉ, հայ ժողովրդին ոգեւարը երկարաձգել է, Սուլթանին հացին իւր քսել է:» Արդէն, կրկարծէ պ. ՉԵՐԱՉ, Դրօշակեան կուսակցութիւնը մարմիններուն ամենէն անյարմարն էր ծրագիր մը ներկայացնելու համար, որովհետեւ «այդ կուսակցութիւնը լաւ աչքով չի տեսնուիր եւրոպական կառավարութեանց մեծամասնութիւնէն՝ որոնք հակայեղափոխական են»: Այսու հանդերձ պ. ՉԵՐԱՉ կը գնահատէ Դրօշակեաններուն «գիւտնազիտական դիմումներ ընել սկսելը», բայց, կ'ըսէ, «որովհետեւ ամէն բանի մէջ աշխարհութեան չըջանէ մը պէտք է անցնիլ, կը պատահի որ այդ քաղաքականութեան նորընծաները ձախաւերութիւններ կը գործեն: Մեր աչալըջութեանը յանձնուած շահերուն մտահոգութիւնը մեր վերայ պարտ կը դնէ այդ սխալներուն նորագոյնը մատնանիչ ընելու:»

Այս տողերը գրուած են միմիայն Դրօշակեանց եւ «Բրօ Արմենիայ»ի ֆրանսական խմբին ձեռնարկին արժէքը կատարելու համար, — որպէս զի եթէ դիպուածով վաղը հայկական խնդիրը լուծուի, հայ ժողովուրդը կարծէ թէ այդ լուծումը կը պարտի միայն եւ միայն այն աղբրագրին զոր պ. ՉԵՐԱՉ, — քաղաքագրական բոլոր ճարտարութիւններուն մէջ վարպետ ելած տեսակ մը Պիղմարք ինչպէս գիտենք, — զրկեր է Չարին եւ պ. Տելքասէին:

Ուրիշ շարժառիթ անհնար է դտնել այդ տարօրինակ տողերուն հոգեբանութիւնը մեկնելու համար: Պ. Չերազ իր այդ քննադատութիւնը կը վերագրէ պարտականութեան մը զոր «իսկն յանձնուած շահերու մտահոգութիւնն իրեն վրայ կը դնէ»: Չեմ գիտեր թէ ո՞վ Պ. Չերազին այս միջոցիս պաշտօն յանձնած կըրնայ ըլլալ հայ ժողովրդին գերագոյն շահերուն պաշտպանութեանը վերին հսկողութիւնն իր վրայ ստանձնելու: Ոչ մէկ մարմին չի կրնար այդպիսի բացարձակ պաշտօն մը յանձնել անհատական գործիչի մը: Ամէն պարագայի մէջ Պ. Չերազ շատ աւելի խոհեմ ու պատշաճ վարմունք մը ունեցած պիտի ըլլար եթէ գոնէ իր անիմաստ դատափետումին պատասխանատուութիւնը ամբողջ հայ ազգին վրայ չընդհանրէր: Արդէն եթէ իրօք հաւաքական մարմնի մը շահերէն ներշնչուէր, Պ. Չերազ երբեք պիտի չհրատարակէր այդ շուարեցուցիչ քննադատութիւնը: Պ. Չերազ պիտի ըմբռնէր այն ատեն որ այդպիսի քննադատութիւն մը, այդ կողմից ոճովը մանաւանդ, ուրիշ արդիւնք չի կրնար ունենալ բաց եթէ վերաւորել պ. Քիչեարն ու «Բրօ Արմենիայ» ի խմբագրութիւնը կազմող մեծանուն Ֆրանսացիները, որոնց համախոնութեամբը եւ գործակցութեամբը պ. Քիչեար կատարեց իր դիմումը եւ արգէն եթէ իր միտքը Իրօզակեաններու ձեռնարկին վրայ դիտողութիւն մը ընել էր միայն, գոնէ հայերէն լեզուով թերթի մը մէջ պիտի հրատարակէր իր քննադատութիւնը: Ասկից դատ, պ. Չերազ պիտի նկատէր այդ պարագային՝ թէ Իրօզակեանց կողմէ ծրագրի մը ներկայացուելուն մէջ «հայ ժողովրդին ոգեւարին երկարում» ի եւ «հայկական խնդրոյն լուծման յապաղում» ի վտանգը տեսնելը տղայամտութիւններուն ամենէն մեծը պիտի ըլլար եթէ չարամբտութիւններուն ամենէն վրան-բացը չըլլար: Չեմ երեւակայեր որ պ. Չերազ լրջօրէն մտածէ որ եթէ պետութիւնները իրօք արամագիր են հայկական խնդիրը լուծելու, Իրօզակեաններու ծրագիրը վէճի դնելով ժամանակ պիտի կորսնցնեն, այդ ծրագրին արդէն, որչափ որ գիտեմ, 1895 մայիս 15ի ծրագրին վրայ կաղապարուած է ամբողջապէս, եւ զայն կը յիշատակէ ամէն վայրկեան, այդ դիմումով, Իրօզակեանք ոչ թէ իրօք նոր ծրագիր մը առաջարկել ուզած են Եւրոպային, այլ, ցոյց տալով այն որոշ բարենորոգումները, — ճիշդ ԳՅի ծրագրին մէջ բանաձեւուածները. — որոնց իրագործումը բացարձակ դոնացում տրուած պիտի ըլլայ հայ ժողովրդին նոյն իսկ ամենէն պահանջկոտ տարրին, ցանկացած են փարատել այն վնասակար սխալ կարծիքը որ Եւրոպայի կառավարական շրջանակներուն մէջ տարածուած է եւ որու համեմատ կ'ենթադրուի թէ՛ ա. Հայերը իրենք ալ որոշապէս չեն գիտեր ինչ որ կը պահանջեն, բ. թէ անոնց պահանջները շատ խոշոր, անիրաչ ործելի բաներ են, ինչպէս՝ անկախութիւն, եւն: Պ. Չե-

րազ պիտի նկատէր վերջապէս թէ Իրօզակեաններուն — ինչպէս եւ Հնչակեաններուն — դիմումը ոչ միայն չունի այն անպատեհութիւնը զոր պ. Չերազ կը նշանակէ, այլ եւ շատ աւելի արժէք ու նշանակութիւն ունի Եւրոպական կառավարութեանց համար քան Չերազ անուն անհատի մը դիմումը, որովհետեւ հաւաքական ու գործօն մարմին մը ուժ մը կը ներկայացունէ զոր կառավարութիւնները միշտ հաշուի կը դնեն, եւ յեղափոխական մարմին մը, երբ դիւանագիտական միջոցներու կը դիմէ, միշտ համակիր ընդունելութիւն կը գրանէ, — ինչպէս որ կրեալի յեղափոխականները դիմեցին Եւրոպական պետութեանց եւ շատ համակիր ընդունելութիւն գտան: Արդէն, այս պարագային մէջ, այդպիսի վախ մը յայտնելը բոլորովին անտեղի ալ էր, քանի որ իրողութիւնը կը բաւէ ապացուցանելու թէ Իրօզակեանց դիմումը ոչ միայն զէջ աղբեցութիւն չէ ունեցած, այլ շատ լաւ արդիւնքի մը յանդամ է: Պ. Տելքասէ անձամբ ընդունած է Իրօզակեանց պատուիրակ պ. Քիչեարը, խօսակցած է անոր հետ հայկական խնդրոյ վրայ եւ չի կրնար համակրանքէն տարբեր ընդունելութիւն մը ըրած ըլլալ, քանի որ թոյլատրած է նոյն իսկ որ այդ տեսակցութիւնը հաղորդուի մամուլին: Ինչ որ կար այդ ղէպքին մէջ ամենէն աւելի կարեւոր, Ֆրանսացի հայաստաններու գործունէութիւնն էր ի նպաստ Հայոց, պ. Չերազի աղբերագրէն, եւ Իրօզակեանց դիմումէն ալ առաջ, Ֆրանսացի մէկ քանի շատ կարեւոր անձնաւորութիւններ պ. Տելքասէին ըզգացուցին որ Ֆրանսական հանրային կարծիքը պիտի չհանդուրժէր այլեւս հարգերուն շարունակումը եւ թէ Ֆրանսայի համար պարտք մը կար Ֆրանսո-թուրք վէճին զուտ դրամական սահմանը ընդլայնել եւ հայկական խնդրոյն լուծումն անոր կցել. այդ անձնաւորութիւններէն մին, պ. Տրնիս Քոչէն, միանգամայն հրատարակեց իր որոշումը հարցապնդում մը ուղղելու կառավարութեան՝ եթէ կառավարութիւնը լրջօրէն ձեռք չառնէ հայկական խնդիրը: Դարձեալ շատ կարեւոր հայասէր Ֆրանսացիներու խումբ մըն էր որ գիտեց պ. Տելքասէին՝ յանձին պ. Քիչեարի երբ այս վերջինը Իրօզակեանց ծրագիրը գնաց ներկայացնել պ. Տելքասէին: Այդ անձերէն ոմանք են զարձեալ որ աջակցեցան Հնչակեաններուն որպէս զինոնց յիշատակագիրը նկատողութեան առնուի: Այդ Ֆրանսացի աղբեցիկ անձնաւորութիւններուն, որոնք գլխաւոր պատճառը եղան Հանոթոյնի տապալման, այս միահաղոյն դիմումը պ. Տելքասէին մօտ, շատ լուրջ իրողութիւն մըն էր, որ անշուշտ պիտի աղղէր պ. Տելքասէի վրայ, որ արդէն, ինչպէս զինքը մօտէն ճանչցողները կը հաստատեն, անձնապէս տրամադիր է Հայոց ի նպաստ կարելին ընելու: Եւ այսօր ապացուցուած բան մըն է որ պ. Տելքասէ ի դեբու չհանեց իր վրայ դրուած յոյսերը. ինքն է

որ պ. Լաճառորֆին ինչպէս եւ Չարին առաջարկեց ուշադրութիւն դարձնել Հայաստանի կացութեան վրայ : Չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ արդիւնքը այս բոլորին . կարելի է որ դժբաղդ գծաութիւններ պետութեանց միջեւ այս անգամ ալ վիճեցնեն մեր յոյսերը . բայց եթէ մեր յոյսերը ոեւ է չարիով իրականացում գտնեն, առի պիտի պարտական ըլլանք զլիսաւորապէս պ. Տելքասէին եւ իր ֆրանսացի հասարակ խորհրդատուներուն :

Պ. Չերազ եթէ իրօք ներշնչուէր իրական շահերէն այն դատին որուն ինքզինքը նուիրած է, ուրիշ բան պիտի չունենար ընելու բայց եւ թէ իր հայ անհատի երախտագիտութիւնը յայտնել մեզի համար սրտանց աշխատող այդ ֆրանսացիներուն, փոխանակ անոնց ըրածը «մտաւորութիւն» ու «սխալ» անուանելու եւ գովել Իրօչակեանները՝ իրենց փորձած լուրջ, ժամանակայարմար ու լաւ գործադրուած եւ յաջողած ձեռնարկին համար «Անահիտ» ընթերցողները գիտնն որ արատաւոր գործով մը չեմ ունեցած միշտ Իրօչակեան կուսակցութեան բոլոր արարքներուն համար, ինչպէս որ ոեւ է սրտեմական թշնամութիւն ալ երբեք տածած չեմ այդ մարմինն դէմ . Բայց երբ կը տեսնեմ որ այդ մարմինը, որ քանի մը տարի առաջ միմիայն յեղափոխական գործունէութեան վրայ կը դնէր իր յոյսը եւ կ'արհամարհէր Ներսիսյանի հանրային կարծիքը պատրաստելու գործը եւ պետութեանց զիմում ընելու զազափարն իսկ զգուցի կը դանդաղ, հիմա երանգազին կ'աջակցի «Բոս Արմենիայ»ին ջանքերուն եւ պետութեանց զիմում կ'ընէ, կը մտածեմ որ հայ անկեղծ հայրենասէրի մը համար տարրական պարտք մը պէտք էր ըլլար անվերապահ գոհունակութիւն յայտնել Իրօչակեան կուսակցութեան ծրագրին այդ իմաստուն ընդարձակման նկատմամբ :

Բայց պ. Չերազ, ինչպէս ըսի, ի նկատի ունի ոչ այլ ինչ բայց եթէ . . . իր ազերաստիքը : Այդ մասին ալ բառ մը կայ ըսելիք՝ բոլորովին սարբեր տեսակէտով :

Յիշատակագիրը, զոր պ. Չերազ զրկած է պ. Տելքասէին, կը նմանի այն բոլոր գրութիւններուն զոր հայ խումբեր կամ անհատներ մինչեւ ցարդ շատ անգամներ ուղղած են պետութեանց : Բայց իր Չարին ուղղած ազերաստիքի սարբեր է պարունակութեամբ եւ ողբով : Պ. Չերազ անոր մէջ «Թագաւոր Հայաստանի» կ'անուանէ Չարը, «արչիվ»ներու փոշիին մէջէն արթնցնելով Չարին պատմական բազմաթիւ տիտղոսներէն մին . «մեր կրօնակիցները, կ'ըսէ պ. Չերազ, («ազգակից» բառը խորշնով գործածելէ), ուստական պետութեան մէկ ծայրէն միւսը, կեանքի, պատուոյ եւ ինչքերու բացարձակ ապահովութիւն կը վայելեն եւ կ'աւարեալ հաւասարութիւն իրենց ուրիշ բնական կիցներուն հետ : . . . Ռուսներուն պէս վերաբերելով արիական ազնիւ ընտանիքին, խօսե-

լով լեզու մը որ ազգական է լիթուանականին եւ սլաւականին, յարած՝ եկեղեցիի մը, որ մէկ ճիւղն է Օրթոտոքս եկեղեցւոյն, Հայերը խոնարհաբար կը խնդրեն Չեր կայսերական Վեհափառութիւնէն որ հաճի շարունակել իրենց Տաճկաստանի դժբաղդ եղբայրներուն իր բարձր հոգածութիւնն ու իր ամենակարող պաշտպանութիւնը :»

Ռուսիոյ Չարին պաշտպանութիւնը Հայոց խնդրոյն վրայ հրաւիրելու նպատակով զիմում մը ընել իրեն, ամենէն բնական բանը կը զըտնեմ . տասն անգամ ըսած եմ, եւ միշտ կը մըտածեմ, թէ առանց Ռուսիոյ համակիր գործակցութեանը՝ հայկական խնդիր անհնար է որ լուծուի . ամեն Հայ որ կը ջանայ փարատել Ռուսերուն այն կասկածը թէ Հայերը Ռուսին թշնամի տարր մըն են, եւ որ ճիգ մը կ'ընէ ուսական արդի կառավարութիւնը Ալեքսանդր Բ. ի ղեկեցիկ անանութեանց վերընդգրկումին հրաւիրելու, ուշիմ եւ օգտակար բան մը ըրած կ'ըլլայ : Պերլինի Վեհաժողովին միջոցին, ինչպէս ՍՏԻ շրջանին, Թրքահայերը չափազանց մոռցան որ Ռուսնէր Սան-Սթէֆանոյի դաշնագրին ԱՅրդ յօդուածով հայկական խնդրին հիմնաքարը պնդը եւ շատ մեծ անքաղաքագիտութեամբ մը ծայրայեղ անգլիամուլութիւն մը ցոյց տուին, եւ զգալի ցրտութիւն մը դէպ ի Ռուսը . այն Հայը որ այդ սրտալը դարձնելու կ'աշխատի, ազգօգուտ բան մը ըրած կ'ըլլայ . այդ ուղղութեամբ ամենէն կարեւոր դերը խաղացողը եւ ամենէն մեծ արդիւնքն առաջ բերողը Ջանչեանը եղաւ իր հոյակապ հայաստահանովը, ուր Ռուսիոյ բոլոր ուժերը՝ յաջողած էր կապել հայկական դատին : Անշուշտ, շատ աւելի նշանակութիւն պիտի ունենար այդպիսի ազերաստիք մը եթէ ստորագրուած ըլլար, ոչ թէ անհատներէ, այլ Հայութիւնը ներկայացնելու իրաւունք ունեցող անձէ մը, — եւ ոչ ոք աւելի յարմար էր այս վայրկեանիս այդպիսի զիմում մը ընելու համար, քան ամենայն Հայոց կաթողիկոսը, որ նոյն իսկ պարտաւոր էր այդ զիմումն ընել, եւ թերեւս ալ ըրած է . (գիտեմ բարիզանակ Հայեր որ Չարին ֆրանսա զայէն ուսող, խնդրած են կաթողիկոսէն որ այդպիսի զիմում մը ընէ Չարին) :

Միայն թէ պ. Չերազի ազերաստիքը չափազանց «ազերաստիք» է, տափակ երկրպագութեան եւ արտաստեաթոր պաղատանքի հեծեծիւն մը, մինչդեռ հայկական դատին համար խօսող մը աւելի առնական լեզու մը կրնար գործածել . ու մանաւանդ շատ «տարասմ» է այդ ազերաստիքը, շատ տարբեր պ. Տելքասէին ուղղուած յիշատակագրէն . ազերաստիքը կը շատանայ յիշելով Սան-Սթէֆանոյի յօդուածը, 40000 հայ փախստականներու կովկասի մէջ պատսպարուելը, Ռուսիոյ Հայերուն կեանքի, ընչքի եւ յպաստոյ ապահովութիւն եւ օրէնքի առջեւ հաւասարութիւն վայելելը, — եւ չի յի-

չեր բնաւ 95ի ծրագիրը , այսինքն ամենէն կա-  
րեւոր բանը զոր պէտք էր յիշել , քանի որ  
մանաւանդ Ռուսիան ալ զայն ստորագրող պե-  
տութիւններէն մէկը եղած էր :

Այդ կէտը անհրաժեշտ էր յիշել մանաւանդ ,  
որպէս զի չարամիտները չեղէին յանկարծ  
կարծել թէ պ Չերազ կ'առաջարկէ Չարին՝  
գրաւել թրքահայաստանը եւ ալ թուրքիոյ  
Հայոց այն կացութիւնը զոր ունին Ռուսիոյ  
Հայերը (1) :

Չարմանալի կը գտնեմ որ բեւեռագէտ Բաս-  
մաջեանը , որուն վայրագ ուսաստեցութիւնը  
հանրածանօթ է եւ որ Ռուսիոյ հանրային կրթ-  
ութեան նախարարին (որ քաղաքական խնդ-  
րով չի գրադիր) նամակ մը գրելը վերագոյն  
մատնութիւնը կը համարի , արդէն փութացած  
չըլլայ մատնիչներու կարգը զնեւ պ . Չերազը  
որ նամակ կը գրէ չէ թէ ոուս նախարարի մը ,  
այլ Չարին . . . նոյն իսկ զարմանքս կը բերաւ  
պատկուի երբ կը տեսնեմ որ բեւեռագէտ Բաս-  
մաջեանը ոչ միայն չի բանագրեր պ . Չերազը ,  
այլ եւ յանձն կ'առնէ որ Չարը «Հայոց թա-  
գաւոր» համարողը ստորագրէ կոչ մը իր «Հայ-  
արձան»ին ի նպաստ բացուելիք հանգանա-  
կութեան (2) : Ու նուազ զարմանալի չեմ գտներ  
զարձեալ որ պ . Չերազ ինքն իսկ , որ պ . Իսքէն-  
տէրը «զրամ հաւաքոյ եւ հաշիւ չտուող (!)»  
հոշակելու համար գումարուած Բարիզի գաղ-  
թականական ժողովին նախագահեց եւ իր  
թերթին մէջ իսկ պ . Բալբաքեանի նախա-  
ձեռնութեամբ կազմակերպուած այդ ժողովի  
մասին համակրական եւ հետեւաբար համախոհ  
տողեր հրատարակեց , կ'ընդունի որ նոյն պ .  
Իսքէնտէրը բեւեռագէտ Բասմաջեանին ի նպաստ  
իր բացած այդ հանգանակութեան : Գանձապահն  
ըլլայ . . .

Վերջապէս զարմանալի եւ նոյն իսկ ապշե-  
ցուցիչ կը գտնեմ որ Բարիզի Հայութեան  
տեսակ մը ինքնակոչ ոստիկանները , որ մեր  
արդէն անկապակից գաղթականութիւնը բու-  
լորովին պառակտեցին ու տակն ու վրայ ը-  
րին՝ պարզապէս որովհետեւ խումբ մը բարի-  
զարնակ Հայեր ու վեցին աղագոռու ձեռնարկ մը  
փորձել՝ առանց մտածած ըլլալու Բարիզ բը-  
նակող բոլոր Հայերը իրենց գործակցութեան  
հրաւիրելու , հիմա անչարժ , անտարբեր եւ խա-  
ղաղիկ կը մնան՝ հանդէպ պ . Չերազին որ  
Չարեն աղերսագիր մը կուտայ՝ յանուն ամբողջ  
Հայութեան , առանց Բարիզի հայ գաղ-  
թականութեան անդամներուն խորհուրդ հար-  
ցուցած եւ տնտնցմէ պաշտօն ստացած ըլլա-  
լու :

1) Վեր . Հնչակեան կուսակցութիւնն ալ զրկած է յի-  
շատակագիր մը Չարին , ինչպէս եւ Պ . Լուպէին . բայց այդ  
ձգու յիշատակագիրները ՄիեիՆՈՅՆ պարունակութիւնը  
ընէին , եւ միեւնոյն բանը կը խնդրէին երկու կուսա-  
վարութեանց պետերէն , — այն է Եւրոպայի 1895ի բանա-  
եւած բարենորոգմանց անյայտող իրագործումը :  
2) Անուղղակի պիտի հարցնեմ որ ինչա՞ւ այդ կոչը զոր

— Կոռուդներու նաւար . — Ֆրանքո-թուրք  
անհամաձայնութիւնը զեռ վերջ չգտած , այն-  
պիսի օրերու մէջ ուր եւրոպական քաղաքա-  
կանութեան ընդհանուր ընթացքը , ինչպէս  
եւ համալխարհային ժողովրդական կարծիքին  
զիրքը , իրաւունք կուտայ Հայոց , եթէ ոչ տա-  
րապայման լաւատեսութեամբ մը գինովնա-  
լու , գոնէ իրենց յոռետեսութիւնը յոյսի նը-  
շուով մը մեղմացնելու , տարօրինակ կը զրտ-  
նեմ այն անհարկի եռանդը զոր «Ժողովրդին  
համար»ը ցոյց կուտայ Հայոց սրտին մէջ ծա-  
գող յոյսի պլպլուքը պող ջուրի տարափով մը  
խեղդելու , եւ անրոցատրելի հրճուանքով մը  
այժմէն իսկ նախագուշտիկելու թէ Ֆրանքո-  
թուրք վէճը պիտի աւարտի այն օրն ուր զը-  
րամական խնդիրը կարգապարէի եւ թէ Ֆրանսա  
Հայոց խնդիրը «գործածելէ» յետոյ իր գուե-  
հիկ շահերուն յաջողման համար՝ պիտի թողու  
որ Սուլթանը հանդարտիկ աւարտէ Հայերուն  
ընջումը : Ներելի չէ Հայու մը համար այսպիսի  
չնական մաքիալիզութեան մը վերագրել՝ այժ-  
մէն պ . Տելքասէին եւ իր դահլիճին . այն Հա-  
յերը մանաւանդ որ հիւրընկալուած են այս  
երկրին մէջ , տարրական պատշաճութեան  
պարտք մը ունին քիչ մը աւելի զգուշաւոր  
ըլլալ յայտ երկրին կառավարութեան մասին  
իրենց արձակած վճիռներուն մէջ , կառավա-  
րութեան մը մանաւանդ որ յայտնապէս տար-  
բեր ոգի ունի Հանթոնի ու Մելինի կառա-  
վարութեանէն , որ Հայոց հակակիր ըլլալէ հե-  
ռու է , որ նոյն իսկ Անթապի խնդրոյն մէջ  
Հայոց ի նպաստ գործելու որոշումը տալով՝ ա-  
պացուցուց որ համակիր է Հայոց դատին : Իո-  
նէ պարզ խոհմութիւնը — որ այդ պարոննե-  
րուն սերած մէկ յատկութիւնն է , — կը պա-  
հանջէր որ անոնք քիչ մը սպասել զիսնային ,  
եւ կացութեան իրական հանգամանքին ծանօ-  
թանային վճիռ մը արձակելէ առաջ . իրերը դա-  
տելով արգի նշաններէն , զեռ բնաւ իրաւունք  
չենք կրնար ունենալ պ . Տելքասէին վերադը-  
րելու այդպիսի անսիրտ ու ցած «չահազործում  
մը հայ արիւնին . բարեբաղդութիւն մըն է տե-  
սակէտով մը՝ որ հայերէնին ծանօթութիւնը  
զեռ շատ քիչ տարածուած է Եւրոպացուցմէջ .  
առանց ատոր՝ մեր կարգ մը թերթերուն ըն-  
թերցումը եւրոպացի հայասէրներուն կամ գի-  
ւանագէտներուն ամենէն անկեղծ բարի տրա-  
մագրութիւնը պիտի ստաննէին : Պ . Տելքասէ  
այսօր ամենէն յարգուած վէճերէն մէկն է Եւ-  
րոպայի դիւանագիտական շրջանակներուն մէջ  
իր յտակ , իմաստուն է եւ հաստատակամ քա-  
ղաքականութեան համար . եթէ ուրիմն ան ու-

կը ստորագրեն երեք թրքահայեր , Հ . Պարոնեան . Տր . Սը-  
քեան եւ Պ . Չերազ , ուստի այսինքն գրուած է : Կոչը ուղ-  
ղուած է անշուշտ ընդհանուր Հայութեան , եւ ուստի  
այսինքն աւելի դրամ ստանալու յոյսը ներելի եւ բա-  
ցատրելի չի գործընէր այդ տեսակ մը ուրաջումը մը  
տրեւմտեան հայերէնին : Երեք ուստի այդ վե-  
ջումը պիտի չընէր :

րոշէ խնդիր մը լրջօրէն ձեռք առնել, իր մեծ ջամտութիւնը չի կրնար ընդ երկայն արանց արդիւնքի մնալ: Պ. Տեղապատ միջամտեց Տրէյ-ֆիւսի խնդրոյն մէջ, եւ շատ յստակ ու արի կերպով, ի նպաստ Արդարութեան: Կրեւտէի խնդրոյն լուծման գլխաւոր ստորաբը ինքը տուաւ, (ասի հեքեաթ մը չէ, այլ փաստերու վրայ հաստատուած իրողութիւն մը): ասոնք ցոյց կուտան որ Պ. Տեղապատ կը ներկայացնէ այն դիւանագէտի տրպարներէն մին, որոնց մէջ ճարտարութիւնը չ'արդիւնք սրտին ներկայութիւնը: Ասկից զատ Պ. Տեղապատ հաջին առջեւն ունի օրինակը Հանոթոյնն որ ինկաւ արեւելեան խնդրոյն մէջ իր բռնած վատ գիրքին համար՝ Լավիաներուն, Տրնիս Քոշէններուն, Պետարներուն հարուածին տակ: Եթէ նոյն իսկ սիրաբը պոյութիւնն չունենար Պ. Տեղապատէի մէջ, (եւ Պ. Տեղապատէի մէջ գոյութիւնն ունի ան, արդէն ապուշութիւն է կարծել թէ բոլոր դիւանագէտները անպատճառ ըրէչներ կ'ըլլան, պէտք չէ մոռնալ որ կ'լատարութիւն դիւանագէտը, ամենէն ազնիւ մարդն էր այս դարուս): այս դրական շարժանքի թաւական հզօր ազդակ մը պիտի ըլլար Պ. Տեղապատն մղող որ Հանոթոյն ուղղութեանն սարքեր ուղղութեան մը հետեւի: Պ. Տեղապատ, իր սրտի եւ մտքի յատկութիւններուն շնորհիւ է որ կրցած է վաւեր-մուտայի դահլիճին միակ նախարարն ըլլալ որ կը յարգուի թէ՛ աջակողմէն թէ՛ ձախակողմէն: թէ՛ հակակառավարական Տրնիս Քոշէնէն եւ թէ՛ կառավարութեան պաշտպանն Ռուանէէն: Ու վերջապէս Պ. Տեղապատ ըմբռնած է թէ հայկական խնդիրը ամենասերտ կապ ունի Փրանսայի Արեւելքի մէջ ազդեցութեան խնդրոյն հետ: Եւ եթէ իր վրայ ո եւ է չափով յոյս դնելը ներքի կը համարիմ, գլխաւորապէս անոր համար որ ինծի անհնար կը թուի որ այդ նախարարը պատեհ վայրկեանէ մը չօգտուի օգնելու համար մեր խնդրոյն լուծման՝ նոյն իսկ Փրանսայի քաղաքական եւ բարոյական ամենակարեւոր շահերը պաշտպանելու նպատակով: — Այս բոլորը պէտք չէ անդիտանալ:

Եթէ Ֆրանսո-թուրք վէճը իրօք աւարտի դըրամական խնդրոյն լուծումով, եթէ Պ. Տեղապատէ անկից յետոյ բոլորովին անտարբեր մնայ Հայոց դատին, եթէ իրողութիւններու ջախջախիչ ապացուցումովը համոզուինք որ Պ. Տեղապատն ալ Հանոթոյն մէկ զուգեակն է, այն ատեն միայն իրաւունք պիտի ունենանք իրեն համար գործածել ծանր բառերը որոնց ինքզինքը արժանի կացուցած պիտի ըլլայ, եւ այն ատեն ոչ միայն իրաւունք, այլ պարտք ունինք զանոնք գործածելու: Առ այժմ, սա ստոյգ է որ պ. Տեղապատ նախաձեռնութիւնն ունեցած է խնդիրը ներկայացնելու Պ. Լամատորֆին եւ Չարին, եւ առաջարկած է որ միջամտութիւն մը փորձուի. պէտք չէ մոռնալ

որ միեւնոյն Տեղապատն ասկից Տ.Պ. ամիս առաջ ինքնաբերաբար շրջարեւակաւ մը զրկած էր բոլոր եւրոպական պետութիւններուն անոնց հաղորդելով Հայաստանի վտանգալից կացութեան մասին Պ. Քոնսթանթինի զրկած տեղեկագիրը, եւ առաջարկելով մտածել այդ կացութեան վերջ մը դնելու միջոցներուն: Ոչ ոք իրաւունք ունի այս բոլոր ջանքերուն մինչեւ ցարդ ապարդիւն մնալէն հետեւցնել թէ Պ. Տեղապատ վրայ պէտք չէ ուրեմն բնաւ յոյս դնել. հայկական խնդրոյն պէս կ'ընտոտ, փափուկ, վտանգալից խնդիր մը երկու օրէն չի լուծուիր. պէտք է մտաբերել որ Յոյները կէս դար մաքառեցան՝ իրենց նպատակին հասնելէ առաջ, եւ Կրէտացիները՝ դար մը: Բան մը կայ որ հաստատ է, — այն է թէ թրքական Հայաստանի կացութիւնը սահմանուած է բարւոքուելու: Ե՞րբ, ի՞նչպէս՝ չեմ գիտեր, բայց գիտեմ որ իրերուն բարձրագոյն տրամաբանութիւնը, քաղաքակրթութեան ո՛չ միայն բարոյական այլ եւ նիւթական շահերը, կը պահանջեն որ այդ եղերական ու մարդկութեան համար ամօթաբեր հարցը յո եւ է կերպով լուծում գտնէ որ մը չէ օր մը: Անոնք որ այս հաւատքը կը խախտեն հայ ժողովրդին մէջ, ոչ միայն պատմական սխալ մը կը գործեն, այլ եւ ազգը վնասեցնելով՝ վնասակար եղած կ'ըլլան ազգին դատին, թուլցուցած կ'ըլլան ազգային բարոյականն ու կորովը: Պէտք չէ անշուշտ ծայրայեղութիւն շինծու յոյսերով խաբել ժողովուրդը, — այդ ալ յանցաւոր արարք մը պիտի ըլլար, — բայց պէտք չէ նաեւ անհիմ, թեթեւօրիկ եւ փութկոտ յոռետեսութիւնով մը մթնցընել ազգին արշէն մոռցուած հոգին. բովանդակ եւրոպական դիւանագիւթիւնը անսիրտ զազաններու դառազեղի մը պէս ներկայացնելով մեք ժողովրդին, հրաւիրելով հայ ազգը որ նոյն իսկ եւրոպական հանրային կարծիքին ո եւ է դին չտայ, ջանալով վերջապէս որ Հայը ամէն յոյս կտրէ Եւրոպայէն, մեր դեռատի յոռետեսները ուրիշ ճամբայ ձգած չեն ըլլար հայ ժողովրդին բայց եթէ կոնակ դարձրել Եւրոպային, ամեն ազգասիրական գործողութիւն դարեցնել արեւմտեան աշխարհին մէջ, երթալ նորէն Տաճկին դարձապարին տակը մտնել, եւ ուրիշ նպատակ չառաջարկել իրեն բայց եթէ իր ֆիզիքական կեանքը փրկել՝ չնկատելով որ այդ կեանքը ամենէն անարդը պիտի ըլլար կեանքերուն: Եւ այդ հետաւոր յոյսը զօր կուտան վարպետորդի խելօքութեան երկայն, շատ երկայն շրջանակէ մը յետոյ, աւելի հզօր ու պատրաստուած շարժում մը յարուցանելով դատը շահելու, պատրանք մըն է եւ անիմաստութիւն մը: Այդ գաղափարը, թէպէտ քիչ մը տարբեր ձեւով, «Ժողովուրդին համար»էն շատ առաջ յայտնած եմ ես «Նոր Կեանք»ի առաջին

յօղուածներու մէջ . բայց ես իսկ չեմ ուշա-  
 ցած անոր անձնը թիւնը եւ անգործնականու-  
 թիւնը գգալու . «Անահիտ» ի բոլոր յօղուածներս  
 Պայքարին անընդհատական շարունակումին  
 պէտքը հոչակած են . — պայքարին ձեւին վրայ  
 միայն տարբերութիւններ ցոյց տալով : Եւ ե-  
 թէ «Անահիտ» ի յօղուածներու ոմանց մէջ ,  
 «պատրաստուելու, պատեհ վայրկեանի սպասե-  
 լու» խօսք ըրած եմ : «պատրաստութիւն» ով  
 չեմ հասկցած մտաւորական, վաճառականական  
 զարգացման տարամերժ ջանք, այլ ազգային  
 դատին յաջողմանը համար նիւթական ու բա-  
 րոյական ուժերու աճարում, եւ «սպասել»  
 ըսելով չեմ հասկցած կէս դարկամ զար մը լը-  
 քանել ազգասիրական պայքարը որ սկսած է,  
 իր ամենէն սուր սաստկութեանը հասած է եւ չի  
 կրնար ընդհատուիլ, այլ միշտ շարունակելով  
 խուլ գործունէութիւնը եւ պատրաստութիւն-  
 ները, սպասել քաղաքական պատեհ առիթին  
 որ անշուշտ պիտի ներկայանար օր մը չէ օր  
 մը, եւ ոչ շատ ուշ : Այն բոլոր հրէշութիւն-  
 ներէն ետքը որ գործուեցան Տաճկին ձեռքով  
 Հայոցն դէմ, Հայը չի կրնար դառնալ նախ-  
 կին կացութեանը, չի կրնար մոռցած ձեռա-  
 նայ բոլոր եղածները . եթէ այդ բանն ընէր,  
 ամենէն զգուշի ժողովուրդը պիտի ըլլար աշ-  
 խարհիս . պիտի կորսնցնէր Եւրոպայի համակ-  
 րութիւնն ու յարգանքը . եւ պէտք չէ կարծել  
 թէ այդ համակրութիւնն ու յարգանքը ուղած  
 ատեննիս նորէն կրնանք գտնել, բնաւ ճիշդ չէ  
 մանաւանդ կարծել թէ այդ համակրութիւնը  
 անգոր ազգակ մըն է . Թուրքոյ հպատակ բոլոր  
 ժողովուրդները իրենց փրկութիւնը պարտա-  
 կան եղած են երկու հաւասար ուժերու, իրենց  
 դիմադրողական կորովին, ու եւրոպական հա-  
 մակրութիւններուն (1) :

Թէ անոնք որ հայ յեղափոխութեան առա-  
 ջին ճիգերը փորձեցին, զանոնք սկսան այն-  
 պիսի շրջանի մը որ անոյապեհ էր եւ տարա-  
 ժամ, հայ ժողովուրդը բոլորովին անպատ-  
 րաստ ըլլալով դեռ ու Եւրոպան մնալի համար  
 բացարձակապէս տգէտ, ցուրտ եւ նոյնիսկ հա-  
 կակիր, ասի իրօղութիւն մըն է զոր ի վեր  
 հանած եմ արդէն, եւ զոր կը խոստովանին  
 կարգ մը լուրջ յեղափոխականներ ալ (առաջին  
 փորձեր բսելով չեմ ակնարկիւր Սասունի դէպ-  
 քէն առաջ Հայաստանի մէջ սկսուած յեղա-  
 փոխական փրօփականսի եւ խուլ նախապատ-  
 րաստութեան ու գործունէութեան ճիգերուն :

որոնք շատ լուրջ, նպատակայարմար եւ գործ-  
 նական եղած են . այլ Սասունի ապստամբա-  
 կան փորձին, որ վաղաժամ եւ անպատրաստ  
 փորձ մըն էր, եւ իբր արգիւնք ունեցաւ . եւ  
 սեւէն բերելով միւս ցոյցերն եւ ջարդերը,  
 նիւթական անագին կորուստ մեզի համար,  
 թէպէտեւ միանգամայն արտագրեց բարո-  
 յական շատ խոշոր շահ, զոր պէտք չէ մոռնալ :  
 Բայց այսօր, այս վայրկեանիս, իրերուն տիւ-  
 րական բերումովը, կացութիւն մը ստեղծուած  
 է, որուն ծագումը փնտրելով եւ ըննդատե-  
 լով յամենալը աններիւի պիտի ըլլար, կացու-  
 թիւն մը որ այլեւս կատարուած իրողութիւն  
 մըն է, զոր չենք կրնար փոխել մէկ օրէն  
 միւսը, զոր չենք կրնար մանաւնդ ջնջել : չեղա-  
 ծի պէս համարել : Այսօր Տաճկին հետ կոխիւ  
 մեջ ենք . ինչ ալ ըսենք, ինչ ալ ըսենք : չենք  
 կրնար այդ իրերու վիճակը փոխել . եւ իրա-  
 ւունք ալ չունինք փոխելու . անոնք որ մեր  
 նիւթական սաստիկ տղարութիւնը Տաճկին  
 յարաբերապէս վիթխարի գորութեան հետ  
 բաղդատելով կը հետեցնեն թէ կոխին շա-  
 րունակումը Հայութեան բացարձակ ջնջումը  
 պիտի յառաջ բերէ, կը սխալին . հակայ Գողթու-  
 թին յաղթող փոքրիկ Գաւիթը . միայն Աս-  
 տուածաշունչին մէջ չէ որ գոյութիւն ունի .  
 Տաճկիք բիրտ ուժն ունի, եւ բոնութեան, վայ-  
 րագութեան, տգիտութեան վրայ կը կրթնի .  
 այդ ուժը խախտու է, եւ հակահերն իսկ, երբ  
 միմիայն անոր վրայիլը կրթնին, ստեմանուած  
 են կործանելու . Հայը գուրկ է նիւթական զօ-  
 րութեանէ, բայց ունի բարոյական գորութիւն,  
 ունի հաւատք Արեւելքի մէջ մեծ դերի մը կո-  
 ջուած ըլլալուն, գիտէ իր ցաւագին բայց փա-  
 աւուր անցեալին բազմակուսակ փորձառու-  
 թեամբը՝ թէ սուրով ու հուրով ազդ մը չի  
 կրնար ջնջուիլ՝ երբապէս զապախարի մը փաթ-  
 թուած է . զիտէ թէ հուրը կը մարի, սուրը կը  
 կտորի, եւ բզքատուած ազգին ամենափոքր մէկ  
 պատանին միայլը կը բաւէ որոնս զի ան, ոգեւո-  
 րութեամբ մշտնջենական Գաղափարին կրակովը՝  
 վերստին աճի, զարգանայ, ընդարձակուի եւ  
 զոտնայ նախկին մարմինը, ա'լ աւելի գեղեց-  
 կացած : Այդ հաւատքը — որ օղային բան մը  
 չէ այլ շատ զրական տարր մը, — Հայուն ամու-  
 նէն թանկագին ինչքը, միակ ինչքը, միակ  
 գորութիւնն է . այսօր, չոպաննենք զայն . այն  
 ատեն մենք մեր ձեռքով մեռուցած կ'ըլլանք  
 մեր ազգը . որովհետեւ հաւատքն ջնջումը

շէրջ : Եւ հայոցին կործնելը, կործանածէն աւելի  
 զօր է եւրոպայի մէջ ընդհանրապէս, իրանոյսի եւ Անգ-  
 լիայ մէջ մասնաւորապէս . կառավարողները կը կարծեն  
 թէ չեն ազգուիր անկից . անոր կարեւորութիւն չալաւ  
 ձեւեր կ'աւանտ բայց անգալաւար անոր ներդրում-  
 թիւնը կը կրեն, ինչպէս ժայռը ծովուն քանդաղ համա-  
 լիլումէն կը կրծուի հայն իսկ Պօերներու խնդրոյն մէջ,  
 հանրային կարծիքը առանց ազդեցութեան չէ մնացած,  
 եւ ազգուիրն չի կրնար համարուիլ . դեռ չենք դիտել  
 թէ ինչ պիտի ըլլաւ վախճանը անգլո պօեր պայքարին  
 անգլիական կառավարութիւնը, նոյն իսկ եթէ յաղթե-  
 վերջնապէս, նուազ խիստ եր բացարձակապէս պիտի

1 Անոնք որ Պօերներուն նկատմամբ եւրոպական հա-  
 մակրութեան ապարդիւնութիւնը օրինակ կը բերեն՝ հաւա-  
 րային կարծիքին անուժութիւնն ապացուցանելու համար  
 քաղաքական խնդիրներու մէջ, չարաչար կը սխալին .  
 նախ Պօերները իրենց դէմ Անգլիան ունին, այսինքն  
 վիթխարի եւ առաջ ուժ մը, որ ուժ է ոչ միայն Պօեր-  
 ներուն հանդէպ, այլ եւ Եւրոպայի հանդէպ . Տաճկիք  
 փտած հսկայ մըն է որ ուժ մըն է Հայուն հանդէպ  
 բայց ուժ չէ Եւրոպային հանդէպ . կը բաւէ սր Եւ-  
 րոպա կամ Եւրոպայի պետութիւններէն չորսը,  
 նոյն իսկ երեքը կ'ա մ'ե նա ն, եւ այն վայրկեանին ու-  
 ռանց ո եւ է դժուարութեան կը լուծուի հայկական խըն-

ամբողջ ազգի մը սրտէն՝ աւելի մահացու է քան բոլոր առեւինի, գնդակի ու թնդանօթի հարուածները: Իսկ այդ հաւատքին տեղ կարծել թէ նոր հաւատք մը դրած կ'ըլլանք՝ առաջարկելով Հայոց — ինչպէս ըրած էր «Աղասի» անհեթեթ յօդուածի մը մէջ, — որ իրենց բոլոր կորովը գործածեն այսուհետեւ ապուշ բռնաւորներու ճարպիկ ու ճապուկ տգրուկները դառնալով, ոչ սիսիս վզուելի այլ եւ անգործ նական բան մը առաջնորդելէ, որովհետեւ ոչ Հայը այլեւս կրնայ տղրուկ ըլլալ, եւ ոչ բռնաւորն իր ապուշութիւնը պահած է: Հայը չի կրնար դառնալ այսօր Տաճկին, Նոյն իսկ Երիտասարդ-Տաճկիներուն, որոնք օրէնքի առջեւ հաւատարութիւն կը խոստանան իրեն՝ եւ թէ իրենց Սահմանադրութեան յայտարարին յարի, Հայը մերժողական պատասխան տուաւ. եւ շատ աղէկ ըրաւ: Ասի երկու բան ապացուցուց, նախ որ Հայը՝ հակառակ իր կարծեցեալ տկարութեան՝ Ռիժ մըն է, քանի որ Երիտասարդ-Թուրքերը յամուտ հետապնդումով մը իրեն գիմեցին ու կը դիմեն, զիտնալով որ գայն իրենց հետ ունենանալով միայն կրնան փրկել իրենց պետութիւնը. երկրորդ՝ ատի կ'ապացուցանէ որ Հայը, որ մեծեց, իր վրայ ունի ամուր վստահութիւն մը եւ յանդուգն բայց հզօր հաւատք մը լաւագոյն ապագայի մը որ անպատճառ պիտի հասնի: Այն պարագային իսկ, ուր Երուսաղիմի իրօք բոլորովին լքանէր Հայերը, անոնք նորէն պէտք չէ որ ճիտերնին ծած գառնան Տաճկին, անոնք միշտ պարտաւոր են, եւ կրնան, իրենց դարձէն առաջ, մէկ քանի կարեւոր պայմաններ քոտջարկել եւ ընդունել տալ արդի զերագրականօրէն վայրագ ուժիմին անխուսափելի կերպով յաջորդելիք քեչ շատ աղատական ռեժիմին Թուրքերուն: Բայց դեռ այդ պատահականութեան պատրաստուելէ առաջ, ուրիշ տեսակ յոյսեր տածելու իրաւունք ունինք:

Պէտք է կալուր շարունակել՝ ամէն պարագայի մէջ: «Գոբու» ըսելով անխորհուրդ, անհաշիւ, յանուն կոտորել-թափել մը չեմ հասկնար, — ասի պէտք իսկ չունիմ յայտարարելու — Կոնուր կը կայանայ այն բոլոր ճիգերուն մէջ զոր Հայը կ'ընէ կոր՝ եւ պէտք է ընէ՝ զինքը խողխողելու համար իր վրայ խոյսացող զազաններուն դէմ ինքզինքը պաշտպանելու, իր ցեղային գոյութեան հիմունքը կազմող աւան-

ըլլայ Պօթերներուն հանդէպ՝ քան այն օրերուն ուր Չիւրպըլէյն եւ Սուլպիբի կը սպրռնային ամբողջական ջընջումը Պօթերներուն անկասկածեան: Այլ արդեւնքը Պօթերները պիտի պարտական եղած ըլլան երկու բանի, իրենց հրաշալի գիմադրութեանը, եւ համաշխարհային համակրութիւններուն որոնք Ալգիոյ ժողովրդին մէջ իսկ ընդարձակ ատարածում կը գտնեն եւ անգլիական կառավարութեան գիրքը կը սկսին խախտել: Եւ Պօթերները սր, մինչ շատ աւելի ուժեղ ու նպաստաւորեալ, նիւթական, զինուորական ահագին զօրութիւն ունէին, նորէն ամենամեծ կարեւորութիւն տաւին եւ կուտան միշտ Երուսաղիմի մէջ

դութիւնները ու հաւատքներն պահպանելու, իր ցիրուցան ու կտրտուած անդամներուն մէջ միութիւնն ամբապնդելու, Երուսաղիմի մեծէն ազնիւ ուժերն իր դատին կապելու համար: Մշեցի, Սասունցի կտրիճները որ արեւնոտ մշուշի մը մէջ կը մաքառին այս պահուս Գիւրտին ու Թուրքին դէմ, Բարկէն վարդապետը որ Մուշի գաւառին կացութիւնն անսքօղ պահելու քաջութիւնն ունեցաւ, Հնչակեանները որ կ'աշխատին յեղափոխականները միացնել, Դրօշակեան կուսակցութիւնը որ Պ. Տիւրքասէին գիմեց եւ ինքզինքը լսելի ըրաւ, այն Հայերը որ «Բրօ Սրմինիայ»ին կ'աջակցին եւ անոր ձայնը հետզհետէ հզօր կը դարձնեն Երուսաղիմի մէջ, Պ. Առաքելեան որ Բարկի ու Կլասիօ յաղթական կը կացուցանէ հայկական գաղթ Երեւանուտքի խաղաղասէրներուն արտին մէջ, Միխիթարեանները որ Հայութիւնը Երուսաղիմի յարգելի կացուցանող մեծ Հայու մը յորեկանը կը տօնեն, անոնք որ գիտութեան, գեղարուեստի, դրականութեան մէջ Հայուն ստեղծագործ կարողութիւններուն ապացոյցը կուտան Երուսաղիմի, այս բոլորը «կուր»ն է, եւ այս բոլորը պէտք է շարունակուի:

Այո՛, արտասահմանի մէջ Հայը պէտք է ամէն օր, ամէն վայրկեան իր աչքին ցաւերը՝ մտածող, զգացող, դործող, իշխող Երուսաղիմիներուն աչքին տակ դնէ, երուսաղիան քաղաքականութեան հոսանքներուն ու շարժիչ աւնոր ելեւէջներուն հասեմատ վարէ իր գաղթ, ու բարոյական ու նիւթական օգնութիւն հասցընէ հայրենիքի եղբայրներուն, իսկ հայրենիքի եղբայրները պէտք է իրենց բոլոր միտքը, սիրտը, ուժերը, միջոցները նուիրեն միակ նըպատակի մը, — իրենց վրայ յարձակող դահիճներուն դէմ զիրենք պաշտպանելու, իրենց կեանքը սուղ ծախելու՝ եթէ անխուսափելի է մահը, որովհետեւ շարժարուող ազգի մը մէջ սուղ ծախուած կեանքերը ազգին ընդհանուր կենսակարգութիւնը կը բազմապատկեն: Այն միջոցին ուր Մակեդոնիա, Արարիա, Ալպանիա ապստամբութեան դրօշը կը պարզեն, Կալուր պիտի ըլլար գոնէ որ հայերը ինքնապաշտպանութեան կորով մը ցոյց չտային: «Ինքնապաշտպանութիւն» կ'ըսեմ եւ ոչ աւելին: Գոնէ ես քաջութիւնը չեմ զգար աւելին յորդորելու. եթէ մեր յեղափոխական ժարմիներն ամբարած ունենային խոշոր ուժ մը, եթէ մինչեւ ցարդ

գիւանապիտական գործունէութիւն մը ունենալու եւ հանրային կարծիքը միշտ իրենցմով դառնեցնելու գործին, ատոր համար թափեցին ահագին ջանք եւ զոհողութիւն. եւ եթէ յաջողին իրենց գաղթը շահելու՝ ո՛րքէ չափով, այդ յաջողմանը մէջ դեր ունեցած պիտի ըլլան ոչ միայն Պօթա, Տեփեթ եւ Շեթա քաջերը, այլ եւ Գրեկեր ու Լէյտու: Իսկ Արեւելեան խնդրոյն մէջ, գրեթէ բոլոր ազգութիւնները որ փրկուած են տաճիկ բռնապետութեան լուծէն, կարելի է ըսել որ թերեւս աւելի սեծ չափով պարտական եղած են իրենց փրկութիւնը Երուսաղիմի հանրային կտրծիքին բոլորքմանը քան իրենց ուրոյն ուժին:

արդէն իրականացուցած ըլլալին միութիւնը, երբեք վայրկեանը աւելի պատեհ պիտի չըլլար քան հիմա՝ փորձելու ճիգը, զոր երազած եմ միշտ իբրեւ ամենէն պեղեցիկն ու կարելին բայց «Դրօշակ»ն իսկ կը խոստովանէր իր օգոստոսի թիւին նախօրուածովը թէ մեծ ճիգի մը համար հարկաւոր եղած ուժը կը պակաս հայ յեղափոխականներուն . այս պայմաններուն մէջ, անխորհուրդ պիտի ըլլար ձեռք զարնել այնպիսի ձեռնարկներու որոնք միմեայն աղէտք կրնան լերել . եւ հակառակ որ Բրեսանսէի պէս լուրջ Եւրոպացիներ առաջուց կ'արդարացնեն հայ յեղափոխականները՝ իրենց ձեռք աննելիք բուն միջոցներուն համար, ես պարտք կը համարիմ խնդրել մեր յեղափոխական վարիչներէն որ իրենց պաղարիւնութիւնը չկորսնցնեն, շատ լրջօրէն մտածեն ու տարբերը կշռեն՝ ո եւ է որոշում տալէ առաջ, ես՝ կ'ըսեմ՝ քաջութիւնը չեմ՝ զգար այդպիսի խիզախ փորձ մը յորդորելու, որովհետեւ կը մտածեմ թէ այդպիսի փորձ մը այն ատեն միայն պէտք է փորձել երբ երկարատեւ դիմադրութեան մը համար ուժ կայ հաւաքուած, եւ որովհետեւ՝ մասնաւոր՝ ես միշտ ինծի սկզբունք եմ ըրած ուրիշները չմղել վտանգաւոր գործերու՝ երբ ես անձամբ անոնց մասնակցելու որոշումը չեմ տուած : (Այս տեսակէտով, քաւակարն տարօրինակ կը գտնեմ «Շարժում»ի «Վարդօ»ն որ «Ո՛ւր էք, հայ յեղափոխականներ, ի՞նչու Հայաստան չէք վազեր» կ'աղագայէ, եւ ինքը, որ միշտ գրգռած է ուրիշները կողմի երթալու, իր Վառնայի անկիւնը հանդարտ կը մնայ իր գրասեղանին առջեւ) : Բայց եթէ նախաշարժակութիւն չեմ յորդորեր, ա մտոյջ սրտովս կը բալձամ որ պաշարուած, սուրբ ու հուրի մէջ մնացած եղբայրներս քաջի պէս կողմին, եւ հողեւին պիտի ծափահարեմ արտասահմանի գործիչներէն անոնց որ պիտի փութան օգնութեան հասնիլ իրենց վրտանգուած հայրենակիցներուն եւ պիտի աջակցին անոնց ինքնապաշտպանութեանը :

«Ժողովուրդին համար»ի խմբագիրները անիրաւ են Սասունի եւ Մուշի ջարդերը միմիայն Դրօշակեաններու շարժմանց արդիւնքը համարելով . ուրիշ պարագաներու մէջ, հայ յեղափոխականներու յանդիմանութիւնները «պատրուակ» կրցած են ըլլալ Թուրքին վայրագութեանց վերագարթումին կամ բազմապատկուածին, բայց այս անգամ չեմ կարծեր որ պատրուակի սպասած ըլլայ Թուրքը . «Ժողովուրդին համար»ը, որ այս նոր ջարդերուն մեղքը Հայերու վիզը փաթթող Սուլթանաշուռնչ հեռագիրները հրատարակեց, հրատարակեց ուրիշ հեռագիր մըն ալ որ կ'ըսէ թէ այդ ջարդերը մասամբ սարքուած են թուրք-քիւրտ դաշնակցութեանէ մը որ որոշած է արիւնը փաթթել հայաստանը որպէսզի Եւրոպան միջամտէ եւ ամբողջ երկիրը բարեկարգէ (որովհետեւ Թուրքերը, Քիւրտերն ալ կը սպասեն եւ կը բաղձան Եւրո-

պայ միջամտութիւնը) : Եւ «Ժողովուրդին համար»ը չպիտեց որ Սուլթանը միայն Սասունի մէջ չէ որ զօրանոցներ կանգնել ուզեց, այլ Ջէյթունի մէջ ալ, ուր ոչ մէկ Դրօշակեան չկայ : Եւ արդէն եթէ նոյն իսկ Սասունի եւ Մուշի մէջ Հայերու խլրտումները կարենան ներկայ ջարդերուն զրգոյն շարժառիթներուն մէջ տեղ մը բռնել, այդ խլրտումները անհնար եմ մեղադրելի համարել, որովհետեւ ինքնապաշտպանութեան արդար եւ անքննադատելի ճիգերն անոնք, իրենց կացութիւնէն զուտ, կատարած տեղացիներու կամքովն ու ձեռքովը կատարուած, եւ ո՛չ թէ արուեստականօրէն ու միմիայն դրսէն եկող գործիչներու ձեռքով սարքուած (կարգալ «Դրօշակ»ի եւ «Շարժում»ի Մուշէն զրկուած թղթակցութիւնները՝ բնիկներէ գրուած) : Կարելի է մեղադրել Սասունցիները՝ եթէ որոշած են դիմադրել զօրանոցներուն կառուցմանը . կարելի է չսքանչանալ Սասունցի կիներու վրայ որ զօրանոց չինելու համար եկած ճարտարագիտներն ու գործաւորներն ի փախուստ են դարձուցեր . ոչ ոք խոհեմութեան պէտքը քարոզած է ինծի չափ, բայց խոհեմութիւնը երբեք չեմ հասկցած սատկածութեան իմաստով : Կարելի է նոյն իսկ մեղադրել այն Մշակիներուն որ ա՛լ չեն ուզեր կող որ իրենց կիներն անոնն տանին ու պրզծեն, որ իրենց հայրը կամ զաւակը մորթեն, որ գիբերնք կողպտեն ու քամեն : «Ժողովուրդին համար»ը, որ ուրիշներու մէջ հակասութիւն, յանկարծական փոփոխութիւն կը ճրգնի տեսնել, ինչո՞ւ չի տեսներ որ ինքն իսկ հակասութիւններուն ամենէն բիրտը կը գործէ, երբ հրատարակելէ յետոյ նորալէպներ որ «վաղուան պայքարը պատրաստող» յեղափոխականներ, իրենց մայրը լլկող Թուրքերուն վրայ նետուիլ ցանկացող պատանիներ զոյց կուտային, ու քերթուածներ որ Դրօշակեան հերոսները կը փառաբանէին, հիմա կը բանագրէ անոնք որ իր հրատարակած նորալէպներուն ու քերթուածներուն գաղափարները կ'իրականացնեն : Վերջապէս կարելի չէ պահանջել, «Ժողովուրդին համարի վերջին փուլի յօդուածներուն հետեւելով, Մուշի, Վանի կամ Սասունի հայ հօրմէն կամ ամուսինէն» որ իր մորթուած զաւակին կամ անպատուած կընոջը վրէժը լուծելու համար յիսուն տարի սպասէ, կամ յոյսը գնէ «ուրուակներուն եւ խորթ լազներու» վրայ . . .

Չէ՛, կոխը պէտք է շարունակուի, եւ պիտի շարունակուի ան . ես կ'ամչնամ ինքիբմէս որ այս տողերը գրելէ ուրիշ բան չեմ կրնար ընել կոխին ամենէն սրբազան ձեւին աջակցելու համար : Եթէ այս տողերը, հրատարակուած այս թերթին մէջ որ՝ այնքան անմար անհասկացողութեամբ մը՝ հակաֵյղափոխական համարուեցաւ, կարենան ո եւ է կիրպով սրտապնդել անոնք որ պայքարին կ'ուզեն եւ կրնան մասնակցիլ, կամ ո եւ է ձեռով գործելու մղել

զեռ անշարժ ու շուարմնացած հոգիներ, եթէ յաջողին՝ հրաշքով մը՝ յարուցանել հարուստ մը որ ուզէր «զեզեցկանալ»՝ դրամին վճռական գէնքը բերելով հայ դատին ի սպաս, ես գոհ պիտի ըլլամ իմ շուամաս ձգած ըլլալուս նուիրական գանձանակին մէջ, եթէ նոյն իսկ պատահի — եւ անշուշտ պիտի պատահի, — որ զձեռն հոգիներ այս տողերուս մէջ «կերպարանափոխութիւն» մը տեսնեն եւ այդ կերպարանափոխութեան մէջ անարդ նկատումներ վնասեն, այդ ալ զիս գոհ պիտի ընէ. անոր համար որ չի կրնար մեծ պայքարին վտեմ վէրքերը ստանալ՝ սփոփանք մըն է գոնէ իր անկեղծութեանը համար միմոսներէ քարկոծուելու հաճոյքն ունենալը: Արդէն եթէ նոյն իսկ իրօք կայ փոփոխութիւն մը մտածելու, եղանակին մէջ քանի պծերուն մէջ, — եւ կայ անշուշտ, — չեմ ուրանար զայն. դիտեմ որ «անկեղծ»ները զայն բնական պիտի գաննեն, որովհետեւ այն ինքնաբեր արդիւնքն է երկայն, յամբ ու արամբանական ներքին բնաշարժութեան մը. միայն ապուշներն ու իմաստակներն են որ երբեք չեն փոխեր իրենց մտածելու եղանակը. Պ. տր Բրեստանսէ, որ այնքան ազնիւ ու անկեղծ կերպով կը պաշտպանէ այժմ մեր գասը, ասենով թշնամի էր մեր դատին, (եւ այն ատեն ալ անկեղծ էր, որովհետեւ սխալ տեղեկութիւններու վրայ հիմնուած, Հանրաժողովն ներշնչուած էր). Պ. Լաւ վիս որ այժմ մեր դատին ամենէն սրտագին ու հզոր բարեկամներէն մէկն է Հանրաժողով ամենէն վատ յօդուածներէն մին հրատարակեց իր «Մըվիւ տը Բարի»ին մէջ՝ ասկից 5-6 տարի առաջ: Եւ նոյն իսկ մեր յեղափոխական վարիչները այսօր չունին մտածելու, զործելու «միւսնոյն» եղանակը զոր ունէին ասկից առաջ. անոնք ալ ունեցան իրենց բնաշարժութիւնը զէպ ի իմաստնագոյն փուլ մը: Մեր յեղափոխական գործունէութեան քննադատումիս մէջ, գործածեցի ոճ մը զոր պէտք չէր գործածէի, ես կարգ մը իրական սխալներու հետ՝ սխալ համարեցայ բաներ ալ որոնք սխալ չեն թուիր այժմ ինձի: Աստից մէջ ես էի սխալողը, չեմ վարանիր իրատուանիլ:

Բայց բան մը զոր միշտ կրկնած եմ եւ պիտի կրկնեմ միշտ, խոհեմութեան անհրաժեշտութիւնն է, խոհեմութիւն մը որ արիութեան հետ հաշուի, բայց վարէ զայն, — եւ ասի նոյն իսկ յեղափոխական գործին յաջողմանը բարձրագոյն տեսակետովը: Մեր գործիչները պէտք է յիշեն որ Յոյները, որոնք ամենէն ազնիւն ու խրոխտն եղան ժողովուրդներուն, իրենց աստուածներուն մէջէն ամենէն աւելի սիրեցին Աթենասը, սպառազէն կոյսը, որ քաջութիւնն էր իմաստութեան մէջ, որ զբան ունէր կուրծքին վրայ եւ զլուխը սաղաւարտ, բայց եւ ոտքին տակ օձը խորամանկ:

Ա. ՉՕՊԱՆՆԱՆ

# ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

ՔԻՒՐՏԸ

Շար.

Թիւրքը սկսած էր հապճեպ «բարենորոգում» մը, զոր յետոյ Շաքիր փաշան պիտի գար ամբողջացնելու: Իւրաքանչիւր գիւղին նշանակած էր երկու «գօլճի» (պահապան), մին մահմետական եւ միւսը հայ — քրիստոնեայ, որ անուշով կը տարբերէր մահմետականէն. հասարակութեան իւրաքանչիւր անհատին — այդ եւ կին — արգիլուած էր առանց գօլճիներու իմացագրին մէկ գիւղէն հարեւան գիւղը երթալ ու եւ է բարեկամական այցելութեան կամ անհրաժեշտ պիտոյքի համար: Եւ այն Թուրքը որ միշտ գալի արտասուք թափելով կը հեծկլաւայ եւրոպական պետութեանց թէ կը դժուարանայ, խոշոր խոշընդոտներու կը հանգիպի բարենորոգումներ մտցնելու երկրին մէջ, այս «բարենորոգում»ը ամենայն հեշտութեամբ եւ զարմանալի արագութեամբ մտցուցած էր Հայաստանի ամենախուլ անկեանց՝ մինչեւ անգամ Մոկաց քարաժայռերուն մէջ, եւ նոյնիսկ վրանաբնակ Գիւրտերն համակերպած էին այդ «թրքական բարենորոգմանց»: Յիշեմ միջադէպ մը: — Վրանաբնակ քիւրտ աղա մը, ընկերացած Հայու մը, սովորականին համեմատ նպարներ կը տանին մերձակայ քաղաքը վաճառելու: Քաղաքին մէջ թուրք գօլճին կը հանդիպի իրենց եւ «թէզքերէ» կը պահանջէ: Աղան որուն մինչեւ այն օր անձանօթ կը մտար «թէզքերէ» բառը, իր հայ ընկերին կը դիմէ հասկնալու անոր նշանակութիւնը եւ իմանալ թէ ի՞նչ միջոցով ձեռք կը բերուի Հայ ընկերը կը բացատրէ «թէզքերէ» նշանակութիւնը ու կը յաւելու որ ձեռք բերելու համար «մէկ մէճիաթէ»ի մը կը կարօտի մարդս: Այն ատեն Գիւրտը հանելով մէճիաթէ մը բարձրաձայն քրքիջով կ'ըսէ՝ «եա առ սաէ հարամ, նա պէժա մէճիճիկի բըտա մը, տըպէ քա՞ թէզքերէ. ալ զան՞ մ թէզքերէ չիկա. դիւ կոտը տընապիւնի պատինէ վէ պալէ լտէվտայ պլա տէնկէ խօ պըպոս» (ապա այդ անիծած շունը, չի՛ ըսեր մէճիաթէ մը տուր ինձի, թէզքերէ կ'ուզէ, ես գիտեմ ինչ է թէզքերէ: Աստուածդ կը սիրես ա՛ն այս ոսկորը, ձգէ՛ բերանը, թող ձայնը կտրէ):



Պարզ է որ Թուրքը անպատճառ կ'ուսնենար իր առանձին մեքենայութիւնները այս «բաւրենորոգութեանց մէջ : Եւ իրօք երկու կարեւոր նպատակի կը ծառայեցնէր զայն . առաջին անով կ'աշխատէր «Թօզ-փչելով» քննիչներու աչքերը , ցուցնել թէ արդէն սկսած է բարեկարգել երկիրը . երկրորդ՝ եւ որ կարեւորն է՝ փակել Մուշի դռները հարստահարուած եւ վերաւորուած Հայուն առջեւ եւ չթողուլ որ ան երթայ իր վերջը ցուցնել եւրոպական ներկայացուցիչներուն եւ անոնցմէ սպիղանի խնդրել :

Այսքանով չէր բաւականանար Թուրքը : Յանձնաժողովին աւելի եւս գոհութիւն պատճառելու ու անոր քննութիւնը անտեղի ընելու համար , սկսած էր իր մէկ հին խաղը : Ամէն օր «մէզպէթէ»ներ պաշտօնեաներու ձեռքեր կը շրջէին հայ գիւղերը եւ ստիպամբ Հայերուն ստորագրել կուտային : Սկսած էր նաեւ արդարագատութեան գործնական ապացոյցներ մէջ բերել : Թողած պաշտօնէից , գլխաւորաբար Սասնոյ կոտորածի պարագլուխ հրէշ Գարաիւզպաշի հարէմի մէջ պահուած հայ աղջիկները , վաշտով մը կը հետեւէր ինչո՞ (\*) անուն քիւրտ աննշան սրիկայի մը որ կոտորածի ժամանակ փախուցած էր հայ աղջիկ մը : Երկու սպանուած զօրքերու եւ զինուորաներու ձեռքը չիյնալու համար ինքնասպան եղող ինչո՞ գիակի հետ բերին հայ օրիորդը եւ յանձնեցին գատիին , որուն սեմէն այլեւս դուրս չեկաւ : Ինչպէս ամէն ժամանակ , այժմ ալ , Թուրքը ասով ցոյց կուտար թէ բոլոր շարեաց պատճառը այդ անզուսպ Բրդերն են եղած որոնց սանձը յաջողած է ձեռքն առնել այլեւս : Բայց , չգիտեմ արդարութեան ո՞ր հրեշտակի միջոցաւ , յայտնուած էր կոտորածի պարագլուխ եւ հրամանատար Գարաիւզպաշին ըլլալը եւ յանձնաժողովը զայն հեռագրով մը իրեն կը կանչէր : Հետեւեալ առաւօտ Գարաիւզպաշին անշնչացած գտան : Դատաստանի կո-

(\*) Հայերու եւ Բրդերու մէջ կայ նախապաշարում մը որ երբ ծնողք մը զաւակներ ունենան եւ մեռնին , անոնք իրենց որդիները կ'անուանեն հարեւան ազգի անուններովը , որպէսզի ապրին եւ երկար ապրին . այսպէս եւ այս պատճառով Հայաստանի մէջ կան Հայեր որոնք Քիւրտի անուն կը կրին եւ Քիւրտեր որոնք Հայու անուն կը կրին՝ ինչպէս ինչոն :

չր իր ելեքարական հոսանքով շանթահարած էր շարագործը : Յաջորդ թողած էր 9-10 տարեկան մանչ մը , զոր Տիգրանակերտի կողմեր փախցնել աշխատեցան պաշտօնեաները եւ որու ամբողջ կայքը աճուրդի հանուեցաւ անմիջապէս . եւ աճուրդի հրապարակը կը շտապէի գլխաբաց , երբ մայրս յիշեցուց ինձ արախճիս դնել : Չեմ կրնար նկարագրել թէ ներքին ի՞նչ յուզմամբ եւ բաւականութեամբ կը դիտէի այն թանկագին իրեղէնները , զոր այնքան աննշան արժէքով կը յափշտակէին իրարմէ պաշտօնեաները . իսկ հարեմի անմեղ դոհերու մասին հաստատ աղբիւրէ իմացուեցաւ որ այս անգամ զայմագամի որսերն էին դարձեր :

Փոքրիկ փակագիծ մը կը բանամ յայտնելու համար թէ ի՞նչու արախճի յիշեցնելու հողածութիւն էր բարդուած մօրս . վրայ : Եւ դպրոցի սեմէն դեռ նոր էի դուրս եկեր երբ մօրս գիրկը վերագարձայ : Դպրոցականի յատուկ անհոգութեամբ , մեր դրացու ախոտտունը գնացած ժամանակ սովորութիւն չունէի արախճիս դնել : Օր մը առաւօտեան կանուխ տունըքն էի ելեր գլխաբաց . զապթիէ մը նկատեց զիս եւ իրեն կանչեց : Գնացի : Ան սկըսաւ իր հարցուփորձը , թէ ո՞ր տեղացի եմ , ի՞նչ ազգէ եմ եւ ո՞ւրկէ եմ եկած : Երբ պատասխանեցի որ Հայ եմ , նոյն գիւղէն եմ եւ ուրիշ տեղ մը չեմ գացեր որ եկած ըլլամ , զուչեց սպառնաղին . «Անպատճառ դու պէտք է օտար երկրէ մը եկած ըլլաս , որովհետեւ զըլխաբաց ման կուգաս» : Հազիւ կրցայ համոզել որ կեանքիս մէջ բնաւ մօրս գրկէն բաժնուած չեմ , թէ մենք մէկ քանի տարուայ զաղթական էինք այդ գիւղին մէջ եւ թէ ես ախոտտան երջիքը բանալու էի ելած , առանց արախճուս վրայ խորհելու . վերջապէս կիսահամոզ հեռացաւ ինձմէ : Որպէս զի կրկին փորձութեան ծուղակը չգլորիմ , խնդրած էի մօրմէս յիշել ինձ արախճիս , ամէն անգամ երբ ես գուրս կ'ելլէի : Թող ընթերցողը չնեղանայ , որ զինքը կը ձանձրացնեմ արախճիս անմիտ պատմութեամբը : Ասով կ'ուզեմ միայն թեթեւ գաղափար մը տալ Թուրք պաշտօնէից այն աշալըջութեան վրայ , զոր կ'ուսնենան ի հարկին : Տեղւոյն Թուրք պաշտօնեան ի միջի այլ կուտածաւոր կարծիքներու , ունէր եւ այն կարծիքը որ այդ ժամանակ իր քթին տակ կը գործէին բաղձաթիւ Հայ եւ Եւրոպացի պործիչներ , թղթակից-

ներ, որ ծպտեալ կը մտնեն ամէն խաւերուն մէջ, կը ծանօթանան ընդհանուր գրութեանց եւ կը հաղորդեն ուր որ հարկն է: Ասոնց առած տեղեկութիւնները բազմաթիւ փաստերով կրնային ջրել բոնի միջոցներով Թուրքի կազմած տեղեկագիրը եւ ստորագրել տուած «մազպաթանները» — զոհուեալութեան թղթերը — ու խափանել Հայութեան ձայնը, խեղդելու համար կազմուած ծրագիրը: Ինձ պատահած անցքէն երկու օր առաջ Ղ. հայաբնակ զիւզէն՝ գօլճիներու միջոցաւ ձերբակալուած էին երկու անծանօթ անձեր, մօտ մէկ շաբաթ պահուելով գաւառական բանտին մէջ, երբ ո՛չ մէկ կերպով կարելի չեղաւ հաստատել ո՛չ անոնց ազգութիւնը, ոչ հպատակութիւնը, Պիթիիզու կեզրունական բանտը ուղարկուեցան: Միմիայն անոնց քով պահուած ազօթագրքէ մը կարծուած էր որ Յոյներ էին անոնք: Ահա այս զօրաւոր փաստով Թուրք զապթիէն սրատեսութիւն էր ունեցեր գլխաբացութեանս նման անհոգութեան մէջ կասկածանքի խառնափնթոր կծիկի ճոթը որոնել:

Քիչ մ'ալ Յանձնաժողովին ներկայութենէն Հայոց խնդրոյն նկատմամբ, Թուրքի եւ Քիւրտի ունեցած ցնորամիտ համոզման մասին:

Քիւրտը կազմած էր այն հաւատը թէ Հայու ազատութեան ժամանակն հասած է եւ ուռտական բանակը զարնան առաջին օրեր պիտի մտնէ Հայաստանը բարեկարգելու համար: Օր մը երբ սովորականի համեմատ մեր դրացու աստուատան մէջ խմբուած էինք քանի մը Հայեր, եւ կարծիքներ կը փոխանակէինք, Քիւրտի մը լամուկ տղայական հրճուանօք կը

յայտնէր իր հայ ընկերներուն՝ «հայրս կ'ըսէ վաղ միւս օր «կեաժօներ» (չէկեր) պիտի գան հոս»: Մենք որ կը հասկնայինք այդ փոխաբերական բառի բուն իմաստը, զուարճանալու եւ իմանալու համար քուրդ ու թուրք շրջանակներու մէջ յայտնուած կարծիքները, հարցուցինք, «Ո՞վ է կեաժօն, սա՞ է, ապա սա՞», իւրաքանչիւր անգամ մօտով ցոյց տալով տաւար մը: «Ո՞վ, կը պատասխանէր ամէն անգամ, կեաժօն տաւար չէ»: «Ի՞նչ է հապա», հարցուցինք: «Կեաժօն Ռո՛ւս է, Ռո՛ւս», պատասխանեց վերջապէս: Այսպէս կը կատարուէր քըրդական սա առածը՝ «Մազընան ըլ մալան կօզըն բըճիկան ըլ սէրէ պանան» — (մեծերը տուներու մէջ ըսին, փոքրերը տանիքներու վրայ):

Թուրքը աւելի առաջ կ'երթար եւ բացորոշ կերպով կ'արտայայտէր իր գաղափարը: Պաշտօնական մարմինները թրքական կարեւոր շրջաններու մէջ տարածած էին, որ Բ. Դուռնէն տեղեկագիր ձեւ հրահանգներ են ուղարկուած իրենց, որոնք կը հաղորդեն թէ «եօթր տարուան ինքնալաքութիւն» մը պիտի տրուի Հայերուն, Սուլթանի գերիշխանութեան տակ, եւ այդ ժամանակամիջոցի հարկերը գրեթէ ամբողջութեամբ պիտի յատկացուին երկրին վերաշինութեան եւ հաղորդակցութեանց զիւրութեան համար: Որոշեալ ժամանակէն յետոյ, երկիրը բոլորովին պիտի յանձնուի Հայուն եւ Թուրքը պիտի քաշուի Արաբիոյ խորքերը:

102854

(Վերջը միւս սեզան)



## ՎԵՐՁԻ ԼՈՒՐԵՐ

—o—o—

— Թուրքերը յարձակում գործած են Մանասթրի ֆրանսական զեր-հիւպատոսին վրայ : Յանցաւորները ձերբակալուած եւ բանտարկուած են : Չինուորական հրամանատարը զացած է իսկոյն ներդուրիւն խնդրել զեր-հիւպատոսէն :

— Պ Չենովիեֆ մասնաւոր ու երկայն տեսակցութիւն մը ունեցած է Սուլթանին հետ տաճկական Հայաստանի կացութեան մասին : Պահանջած է որ անյապազ վերջ դրուի Չարդերուն :

— Սուլթանը գիտած է Պ. Չենովիեֆին որ առաջարկէ Չարին միջամտել ֆրանսոսութիւրք վէճին մէջ : Պ. Չենովիեֆ մերժած է :

— «Երաւօւլաւնի վոսթոք» (Օրթոտոքս Արեւելքը) տիտղոսով լրագիրը որ Պուրքէշի մէջ կը հրատարակուի ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուով, ընդունած է Ս. Բեթերսպուրկէն՝ «ամենալաւ աղբիւրէն», հետեւեալ ամենակարեւոր անդեկութիւնները, որոնք իսկոյն հեռագրուեցան աւստրիական եւ գերմանական թերթերուն :

«Ռուսիոյ կայսեր Յրակալական Հանրապետութեան Լախազանիկն հետ ունեցած վերջին տեսակցութենէն ի վեր, ֆրանսո-ռուս ճիզակակցութիւնը նոր փուլի մը մէջ մտած եւ այլեւս իր հիւանական պայմաններուն մէջ փոփոխուած է :

«Վերջին դեպքերուն հետեւանով, որոնք ֆրանսական Եւրոպային — Երրեակ Նիզակակցութիւնն ալ մեզը հաշուելով — պայմանները փոփոխեցին, ֆրանսո-ռուս ճիզակակցութիւնը որոշած է այլեւս բողոք այն ձեռնպահութիւնը զոր պահած եւ միեջեւ ցայտն : Իր միջանկարծութիւնը զգալի պիտի ըլլայ եւ որոշապէս՝ թե՛ ֆրանսական եւ թե՛ ռուսական խնդիրներուն մէջ :

«Իր գործունէութիւնը պիտի կսպ ունենայ թե՛ Գերմանիոյ մասնային ֆրանսականութեան եւ թե՛ այն անհանդուրժելի կացութեան հետ զոր ունին Պաշտաններու եւ Փոքր Ասիոյ ֆրանսական ժողովուրդները :

«Հարաւային Աֆրիկիի խնդիրն ալ զանց պիտի չառնուի :

«Գալով Մանչուրիոյ, անոր մասին խօսք չկայ :

«Վերջապէս, Պ. Չենովիեֆ ի մօտոյ պիտի կանչուի Ս. Բեթերսպուրկ ուր ասեւ մը պիտի մնայ, ընդունելու համար հրահանգներ որոնք բողոքովի սարքեր պիտի ըլլան միեջեւ հիմա իր ստացած հրահանգներէն» :

# PRO ARMENIA

Կը հրատարակուի ամէն ամսու 10ին եւ 25ին

Խմբագրապետ՝ ԲԻԷՐ ՔԻՅԵԱՐ

Խմբագրական մասնախումբ՝ Ժ. Քլեմանսո, Անաթոլ Պրանա, Պրանսի տը Բրէսանսէ, Ժան ժորէս, Է. ար Բուպէրթի:

Բաժանորդագին, տարեկան՝ 8 ֆր. Պրանսայի համար, 10 ֆր. օտար երկիրներու համար: Հասցէ՝ M. Pierre Quillard, 10 Rue Nollet

## ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական  
աթոռոյ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է, տարեկան՝ Ռուսաստանի համար՝ 4 ռուպլի, արտասահմանի համար՝ 13 ֆրանք:

Կը խնդրուի բաժանորդներէն որ իրենց հասցէները մաքուր եւ անսխալ գրեն:

ԴԻՄԵՆ՝ Rédaction de la Revue «Ararat»  
ETCHMIADZIN (Caucase)

## ԼՈՒՄԱՅ

Գրական հանդէս

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք:

Բաժանորդագինն է, երկու գրքի համար՝ 3 ռուպլի, իւրաքանչիւր գրքին առանձին՝ 2 ռուպլի:

ԴԻՄԵՆ՝ Թիֆլիս, խմբագրութիւն «Լումայ»ի:

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու գիրք:

Երկու գրքի տարեկան բաժանորդագինն է 3 ռուպլի կամ 10 ֆրանք:

ԴԻՄԵՆ՝ Ervand Lalayantz, Séminaire Nersissian, Tiflis, Caucase

## SURU 2

Պատկերազարդ շաբաթաթերթ

Բաժանորդագինն է տարեկան՝ Ռուսիոյ համար 6 ռուպլի, արտասահմանի համար 13 ֆրանք: Հասցէն՝

Tiflis. Rédaction du journal TARAZ

## ՀԱՆԴԵՍ

ԱՄՍՈՐԵԱՅ

ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը:

Հայ-Գրական յօդուածներէն զատ՝ ճշգիւ տեղեկութիւն կը տրուի հայ-գրականութեան, պատմութեան, եւ այլն նկատմամբ ամէն ամիս երեւցած նոր հրատարակութեանց վրայ: Նոյնպէս քննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրոց մէջ սպուած կարեւոր լուրերու վրայ:

«Ազգային լրագրաց բովանդակութիւն», թղթակցութիւն, ծանուցում, եւ այլն:

Խմբագրութեան ղրկուած ամէն գրքերու վրայ՝ քննադատական համառօտ տեղեկութիւն տալը պիտի շարունակուի:

Մեր հեղինակ Ընթերցողաց հաճելի նորութիւն մը յուսանք պատճառել այնու որ խըմբագրութեանս ուղղուած գրքերն անմիջապէս յաջորդ ամիսն թերթիս ծածկին վրայ պիտի հրատարակուին:

«Հանդիս»ի խմբագրութիւնը կը գնէ հայերէն հին ձեռագիրներ. ձեռագրի մանրամասն ստորագրութիւնը եւ ուղուած գինը ծանուցանել:

Բաժանորդագինն է, արտասահմանի համար, տանկան 10 ֆրանք, վեցամսեայ 6 ֆրանք. Ռուսիոյ համար, տարեկան 4 ռուպլի, վեցամսեայ 2 ռուպլի 50 կոպէկ:

ԴԻՄԵՆ՝ A la Rédaction de la Revue «Hantess»  
VII/2 Mechitaristengasse, 4.  
VIENNE, Autriche

## ԱՂԲԻԻԲ

Պատկերազարդ ամսաթաթերթ

Բաժանորդագինն է՝ տարեկան, Ռուսիոյ համար 3 ռուպլի, արտասահմանի համար 8 ֆրանք:

Հասցէն՝ Tiflis. Rédaction de la revue AGBUR

Հ Ե Ս Լ Ք Տ Ի ԲԱԺԱՆՊՐԻԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անանիսը կը հրատարակուի աճյուր աճամ մը :  
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),  
 2 տուար (Ամերիկա), 5 բուպլի (Ռուսիա), վեցամսեայ՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիր -  
 ներ), 1 տուար (Ամերիկա), 3 բուպլի Ռուսիա :

ԲԱԺԱՆՊՐԻԱԳՐԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :

Ձեռագիրները ետ չ'են դարձուիլ :

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօդուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՈՂԻՏ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

| Թիֆլիս             | Պարոն | Գէորգ Մելիք-Կարաբեգեան |
|--------------------|-------|------------------------|
| Պարու. —           | »     | Ս. Մ. Ծոցիկեան         |
| Կահիրէ —           | »     | Ս. Ա. Թորգոմեան        |
| Ռուսնուք. —        | »     | Նշան Ս. Թորոսեան       |
| Ֆիլիպէ. —          | »     | Ա. Տեմիրճիպաչեան       |
| Պուքրէշ. —         | »     | Արիս Լազար             |
| Դաւրէժ. —          | »     | Տր. Կ. Փաշայեան        |
| Նիւ-Շորք. —        | »     | Կատարեան               |
| Բրուկլինտէնս. —    | »     | Նազարէթ Թաթէոսեան      |
| Ֆրեզնօ. —          | »     | Աւագ Կարապետեան        |
| Իսթ Ուոթըրթաուն. — | »     | Մանուկ Գալստեան        |
| Ուոթըր. —          | »     | Նրուանդ Յակոբեան       |
| Չիքագօ. —          | »     | Ա. արակալուրեան        |
| Պոսթոն. —          | »     | Կ. Յ. Քարակիւլեան      |